



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գորկի մ.
Պատրժաւութեցը
հ/
Եր. 1928 թ.

891.71

գ - 83



ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

ՊԱՏՄՎԱՇՔՆԵՐ

Խմբագրեց Ա. ԶՈՒՅԱՆ

ԱՏՐ I

ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ—ՅԵՐԵՎԱՆ, 1928

Հարմ.
Հ 3-4037½
891.71
Գ-83.

3-4037½
1a
27 AUG 2006

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

25 NOV 2010

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Հ.Ս.Օ.Պ. I.

Խոմքագրեց Ս. Զորյան 6

Инв. № 17367



21 MAR 2013

10783

ՀԱՅ ԶԱ Է

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Խախիմ Գորկու ներկա ժողովածուի մեջ ամփոփ-
ված թարգմանությունները; Վոր կատարվել են սարիներ
առաջ, խմբագրված են նեղինակի գործերի վեցին հրա-
սաւակության համաձայն, ուր Գորկին առել է զգալի
ուղղումներ ու կրնատումներ:



4855 87

№ 685 Դրառեպվար № 555 (Բ) Տիրաժ 2,500

Գետիրատի առաջին տպարան Վաղարշապատում

ՄԱՅՈՒՄ ԳՈՐԾԻ

Առևաստանի հասարակական զարգացման պատմության մեջ առնական թվականները բնորոշվում են վորպես քաղաքական և հասարակական սեակցիանի մի տևական շրջան։ Նարտղնիկական շարժումը հասել էր իր վախճանին, խորտակվել ելին նրա չերկու սկզբունքները—առաջինը՝ վոր ոռւսական տնտեսական զարգացման ուղիները վորպես թե ինքնուրույն են, սպեցիֆիկ, վորպես թե այդ զարգացումը չի գնալու չելքուզական կապիտալիզմի ճանապարհով, չերկորդ՝ վոր իրեւ թե ուսւ գյուղացին իրնե համայնական և շնորհիվ իր տնտեսական զրության և հոգեբանության, իսկ հասարակական ապագա ձևերի համար արդեն պատրաստի պայքարող ուժ։

Խորտակվել ելին նարողնիկության այս սկզբունքները, խունացել և կացըրել եր իր հմայքը «գեպի գյուղ», «գեպի գյուղական ժողովուրդ» հայտնի նշանաբանը։

Հասարակական ինդիքերնետիզմի, անտարբերության այդ պայմաններում տիրական եր գարձել «մանր զործերի» պաշտամունքը, քաղենական մորթեպաշտությունը և Տոլստոյի բարոյական ինքնակատարելազործության պասսիվ քարոզը։ Մի տեսակ ծանր թմբիր եր իշել հասարակական բոլոր խավերի վրա։ Տեղափոխական պայքարի զաղափարը ձգվել եր յստին մակարդակը։ Կրավորականության այդ տաղառուկ մթնոլորտում տուստոյականությունը իր միքանի սկզբունքներով առանձնապես համապատասխանում եր տիրող սեակցիոն արամագրությանը։ Դա նրա ժխտողականությունն եր պայքարի զաղափարի, «չարին չհակառակվելու» անհեթեթ քարոզը։ Իսկ ժողովրդական մասսաների համար ամենամեծ չարը—ցարն եր, ցարական-կալվածատիրական բյուրոկրատիան և նրան համակերպող խոշոր բուրժուազիան, վորոնց միացյալ ուժերը պատրաստ ելին վճռապես խափանելու բմրուսության ամեն մի արտահայտություն։

Այդ տեսակետից տուրատյական «չարին չհակառակվելու» պրուազանդը փաստորեն զալիս եր համակերպվելու քաղաքական դաժան, խեղդիչ իրականությանը։ Հասարակական տրամադրու-

թիունը—տրառունջն եր, անձկությունը, տիրությունը: «Մոալլ մարդիկ», «տխուր մարդիկ», «մենավոր ու մանկ մարդիկ»,—ահա այն իրականությունը, վորի տաղանդավոր արտահայտիչը լեզավ Զեխովլը: Իսկ գեղարվեստական քննադատության բնագավառում նույն ուժունական թվականներին արդին տիրապետող եր գարձել «մաքուր արվեստի» տեսությունը:

Սակայն իննասունական թվականների սկզբից սկսվում է հասարակական տրամադրությունների բարձրացում: Արդյունաբերության բուռն զարգացման սկիզբը և 1891 թ. մեծ սովորդարձան յելակեաներ հասարակական տրամադրությունների բարձրացման: Բնկած տրամադրությունների, հոուենեսության, նարոդակության խորտակման այդ շրջանին հաջորդեց մի նոր շարժում, վորը ժխտելով ոռւսական զարգացման «հատուկ» ուղիները, հասարակական ապագայի իդեալը կապեց քաղաքի նոր-նոր կազմակերպվող բանվորական շարժման հետ, նշանաբան ունենալով «աշխատանքի ազատագրության» զարափարը մարքսիստական ուսմունքի գծած ուղիներով: Թեև պետք է ասել, վոր ությունական թվականների վերջին և իննասունականների սկզբին այդ շարժումը տակապին իր խանձարուրի մեջ եր:

Յեկա ահա գեղարվեստական գրականության մեջ տիրող կրավորական, մտավախ տրամադրությունների այս մթնոլորտում անսպասելի կերպով հաջեց հասարակական արհամարնված խավերից յելած բունուարի, ըմբոստ «մըրկաբերի» բողոքող ձայնը:

Դա Մաքսիմ Գորկին եր, վորի բերած մոտիֆները ուսւագրականության մեջ պայմանական իբրև մի փոթորիկ, պատուցին պեսսիմիզմի, ձեռնթափության բողը և լցորն գրական մթնոլորտը զարմանալի առուցք, հուսագրիչ տրամադրությամբ, «խենթերի քաջությունը» յերգող կայտառ հնչյուններով:

Վոճը վառ, շեշտակի, գունեղ, լեզվական գանձերը հանած ժողովրդական անմիջական ազբուրից, թարմ, հատու և հանգուցն: Ծուսական «մըրկաբերն» իր առաջին գրվածքներով ցուցադրեց մի տեսակ տարերային սեր գեպի կյանքը, անզուսպ տենչանք՝ հեղաշրջելու աշխարհի կարգերը, մարդկանց հարաբերությունները:

Ռուս գրողներից վոչգոք այնպես բուռն վերելք չի ունեցել, այնպես արագ լայն ժողովրդականություն ձեռք չի բերել, ինչպես Գորկին: Ամենակարձ ժամանակում նա դարձագ բանվորների, հեղափոխական դեմոկրատիալի և յերիտասարդության

ամենասիրելի գրողը: Այդ հոչակը տարեցտարի մեծանալով՝ անցավ մեր սահմաններից գուրս, և Գորկին ստացավ համաշխարհային գրողի անուն Յելլոպալյում և Ամերիկայում: Նրա գրվածքները չտեսնաված արագությամբ ելին սպառվում, սկզբում տասնյակ, հետո հարցուր-հազարավոր որինակներով: Որինակ, «Պետականացեան» («Քաղքենիներ») պիեսը, վոր լուս տեսավ 1900 թվին, տասնեհինգ որում տարածվեց 25,000 որինակ: Նույնպիսի արագ վերելք ունեցավ Գորկին արտասահմանում: Մի-չերկու տարվա ընթացքում նրա գրվածքները թարգմանվեցին միլիոնավոր որինակներով: Մանավանդ մեծ յեղավ նրա հոչակը Գերմանիայում, ուր բացի այն, վոր հարցուր-հազարավոր որինակներով սպառվում ելին նրա գրվածքները, գերմանական բազմաթիվ բեմերի վրա հարցուրավոր անգամ ներկայացվում եր նրա հայտնի «Հատակում» պիեսը: Գորկու ժողովրդականությանը քիչ չե ոժանդակելայն, վոր նա սերտ կերպով կապված եր պրոլետարական տարբերի և ժողովրդական վարի խավերի հետ. 900-ական թվականներին հարել մարքսիզմին, դարձել և անդամ սոցիալ-դեմոկրատական կուսակցության:

Ո՞վ եր Գորկին: Մանր արհեստավորական ընտանիքի զավակ, նա չուտով վորքանում ե և մնում հացի կարոտ: Փոքր հասակից ստիպված իր գլխի ճարը տեսնելու նա լինում ե խանութի ծառայող, հետո աշակերտ յեկեղեցական մի պատկերագրողի մոտ: Ազգակը ել յերկար չի մնում և հետզհետե մի գործից անցնում մցուսին, ամեն տեղ հանդիպելով անասելի պայմաններիու վրկանքի: Լինում ե խոհարարի ոգնական նավի վրա, բեռնակիր նավահանգստում, հացթուխ, խնձոր ծախող, փայտ սղոցող, յերկաթուղարին պահապան, բանվոր՝ թիֆլիսի յերկաթուղարին արհեստանոցում, թղթատար նիմնի-նովգորոդի մի փաստարանի մոտ, լրագրային գելիքտոնիստ և ատա ինքնուս գրող: Ապրել և բույսակների մեջ, թափառել ամբողջ Ծուսաստանում, վոտով չափել յերկրի բոլոր ճանապարհները:

Ահա «ետապներ», վորով անցել ե Մաքսիմ Գորկին իր վորը մանկության որերից մինչև գրող գառնալու առաջին փորձը: Նրա կյանքի այդ տարիները յեղել են խիստ ծանր. ծալքահեղ աղքատության հետ ալելի անտանելի յեր այն վերաբերմունքն ու ստորացումը, վոր տերերի կողմից նա կրել ե, և վորը շատ անգամ նրան կատարյալ հուսահատության են հասցրել: Զնայելով վոր Գորկին սովոր և յեղել ամեն տեսակ զրկանքի, ամուր՝ կյան-

քեւ հարվածների առաջ, բայց մի անգամ ունենալով ծայր աստիճան հուսահատական վայրկյան, ամուր ջղերով այդ մարդը զիմել է ինքնասպանության, բայց վերքը մահացու չլինելով՝ փրկվել է (1888 թվին):

Տաղանդավոր գրող ձանաչվելու տարիներին Գորկին, ինչպես ասացինք, ձանաչված է նաև իրքի հեղափոխական: 1898 թվին նա մարքսիստական «ԺԱՅԻՆ» («Կանք») պարբերականի մոտիկ աշխատակիցն եր, իսկ կուսակցության ակտիվ գործող՝ 1901 թվից՝ վորպես ազգիսին նա անժիշտական մասնակցություն և ունենում այն պայքարում, վոր սոցիալ-դեմոկրատիան վարում եր ցարական կառավարության դեմ: Նույն թվին ձերբակալվում է, մեղադրվելով բանվորներին ուղղված մի կոչ կազմելու և հրատակելու մեջ: Իսկ 1905 թվին հունվարի 9-ի գեղքերից հետո Գորկին միավետության դեմ գրած իր ապատաճրական մի կոչի համար բանտարկում և Պատրոպավլովսկի բերդում, ուր նրա թոքերի հիվանդությունն ստանում և շատ սուր կերպարանք, արդունասությունը հասնում վտանգավոր չափերի:

Յարական գաֆան գահիները նրան մահվան դուռը կհասցընելին, իմթե պրոլետարիատի, արմատական ինտելիլենցիայի, ապա նաև արտասահմանյան հասարակական կարծիքի ճնշման տակ իշխանություններն ստիպված չլինելին հանել նրան բերդի քարե տուպրակներից: Գորկին նույն թվի հոկտեմբերյան հոչակալվոր գործադուից հետո հրատարակում է՝ բայց վերական «Նոր կանք» («Новая Жизнь») թերթը: 1906-ին հեռանում է Ռուսաստանից և պայքարը ցարական միավետության դեմ շարունակում արտասահմանում, շատ մոտ հարաբերության մեջ լինելով այն ժամանակ նվազագույն ապրում ընկ. Անինի հետ: Պետք է ասել, վոր Գորկին իր գրվածքների համար ստացած խորոր գումարների (Ռուսաստանի և արտասահմանյան հրատարակիչներից) զգալի մասը համացնում եր հեղափոխական նպատակների: Բացի այդ իտալիացի կապրի կողմում նրա միջոցներով հիմնվել եր սոց.-դեմոկրատ պրոպագանդիստների մի դպրոց, վորտեղ պատրաստվում ելին Ռուսաստանից լեկած բանվորները, վոր հետո վերադառնում ելին յերկիր հեղափոխական աշխատանքը կատարելու համար:

Հատուկ ուշադրության արժանի յև Լենինի վերաբերմունքը, վոր նա ունեցել է դեպի Գորկին: Առանձին հարգանքով ու զնամատանքով է խսում նա սուս մեծ գրողի մասին՝ նրան գրած իր բազմաթիվ նամակներում: Բարձր զնահատում նրա տաղանդը,

նրա արվեստը, միաժամանակ՝ նշանակություն տալիս նրա կարծիքին առանձին խնդիրների նկատմամբ: Լենինը Գորկուն համարում եր հեղափոխական Ռուսաստանի մեծագույն գեղարվեստական գրողը: «Վլադիմիր Իլյիչը, —ասում է ընկ. Կամեները, —վոչ միայն զնահատում եր Գորկուն. նա նրան պարզապես սիրում եր վորպիս խոշոր մարդու, վոր դուրս եր յեկել այն «վարի» խավերից, վորոնց հաղթանակի մեջ իլլիչը տեսնում եր մարդկության պատմության հերթական հտապը»: Ընկ. Կամեների ամելով՝ Լենինի հետաքրքրությունն ու սերտ կապը դեպի Գորկին նկատելի յե նրա զրած զրեթե բոլոր նամակներում: ավելի պարզ արտահայտվելիս է յեկել նա այդ մասին բերանացի զրուցների ժամանակ:

«Բնակեր Գորկին, —գրում է Լենինը 1913 թվին, —շատ սերտ և կապվել Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորական շարժման հետ»... «Գորկին պրոլետարական արվեստի անպայման խոչընակույն ներկայացուցիչն է, վորը շատ բան է արել նրա համար և զեռ շատ ավելի կարող է անել: Սոց.-դեմոկրատական կուսակցության ամեն մի ֆրակցիս կարող է իրավամբ պարձենալ Գորկուն ունենալով իր շարքերում»... Նույնիսկ. —«Պրոլետարական արվեստի մեջ Մ. Գորկին խոշոր պլան է, չնայած նրա համակրությանը մախիզմին * և ոտղովիզմին **»:

Ենք սակայն Լենինը, բարձր զնահատելով հանգերձ նրա տաղանդը, վերջնիս սկզբունքային չեղումների ժամանակ յեղել ե անինսա, յենթարկել նրան ամենախիստ քննազատության: «Գորկու զենքը՝ գեղարվեստական խոռոքը, —ասում է ընկ. Կամեները, —Վլադիմիր Իլյիչը զնահատում եր շատ բարձր և տալիս եր նրան խոչոր նշանակություն: Դրա համար ել ավելի տաք քննազատության եր յենթարկում նրան, յերը թվում եր Իլյիչին, թե զենքի արձակած զնակակը անցնում է նշանի կողքով»:

* Մախիզմ՝ Փիլիսոփայության մեջ՝ իրեալիստական պայմանիկզմ, վայով տարգել ելին Ա. Բողդանով, Լունաշարսկի և մյուս «վակերյուսցիները», վարոնց գեն զուրու յեկամ ընկ. Լենինը իր «Մատերիալիզմ և իմպերիալիտիզմ» հայմանի հատորով, անվանելով մախիզմը սեակցիոն փիլիսոփայություն (տես Լենին, Ծօր. օգոստի, 1923):

** Ոտղովիզմ՝ իրենց «Ճախ» համարով վակերյուսցիների տուշարկը՝ յետ կանչել բայց վեկ ներկայացուցիներին, բայկոտ հայտարարել բոլոր լեզու հնարավորություններին (Պետական Դումա, պրոֆմություններ, ապահովագր. գրամական գաղտնաբառներ և այլն) ցարիզմի պայմաններում և տանել միմիշյան գործունեք-անդրասահային աշխատանք: Ընկ. Լենինը անիմա պարքար սկսեց «սուպովիզմի զեմ, ապահովացեց, վոր գա մի գանգավոր քայլ և մասսաներից կորվելու, և ցըց նրա կողմեակիցների պարանը»:

Այս ել պետք է ասել, վոր Լենինը մարքսիզմի փիլիսոփա-
յության խնդիրներում ներողամիտ եր Գորկու նկատմամբ, առհա-
սարակ համբերող, գտնում եր նույնիսկ թուլաւարելի, վոր նա-
գրի վոչ-ֆրակցիոն հրատարակությունների մեջ։ Սակայն հիմնա-
կան սիամերի նկատմամբ անինա իեր։ Որինակ, իր հայտնի
«Խոստովանություն» գրքից հետո, յերբ Գորկին Գոստովսկու մա-
սին գրած հոգվածում (1913 թ.) մի անգամ ել հնարավոր է հա-
մարում (Լևսաշարսկու հետ միասին) «աստվածորոնման»։ Եւ
«աստվածութեղծման» հայտնի արսուրդը, Լենինը ամենախիստ քա-
ռերով է վորակում Գորկու սալթաքումը, համարելով այն «ուսակ-
ցիոն և բուրժուական» հնարագիտություն։

Բայց նույն նամակներում Լենինը առանձին հոգատարու-
թյուն և ցուցադրել հիվանդ Գորկու նկատմամբ, միշտ խորհուրդ-
ներ տարով նրան և ստիպելով բժշկվելու հիմնական կերպով և
հորագույն մեթոդներով։

1913 թվի սկզբներին Գորկին հիվանդանում է, ըստ յերե-
վութին, բավական լուրջ։ «Թանգագին Ա. Մ. (Ալեքսեյ Մաքսի-
միչ),—գրում է նրան Լենինը,—այդ ինչ եք անում գուք, ձեզ
վատ եք պահում։ Շատ եք աշխատել, հոգնել եք, ներվերդ ցա-
վում են։ Դա անկարգություն է։ Մանավանդ կապրիում, այն ել
ձմեռ ժամանակ, յերբ յեկողների թիվը, յերեխ, քիչ ե, և կարող
ելիք կանոնավոր կանք վարել Առանց հսկողություն եք, ինչ ե,
ձեզ բաց եք թողել։ Ճիշտ եմ ասում, լավ չե։ Հավաքեցեք ձեզ և
հաստատեցեք խիստ ուժիմ։ Հիվանդանալ ներկա ժամանակնե-
րում՝ անթուլատըլի բան ե»...

Հետագա գրեթե բոլոր նամակներում Լենինը կրկին վերա-
գրանում է Գորկու բժշկության հարցին։ Գրում ե, վոր իրեն-
առանձնապես անհանգստացնում է նրա հիվանդությունը, խոր-
հուրդ տալիս գնալ գերմանական սանատորիա (St. Blasien, Շվեյ-
ցարիայի մոտ), «վորաեղ բժշկում և բովորովին առողջացնում են
թոքային հիվանդներին, կարողանում են լիակատար կերպով
սպիտացնել, լավ կերակրում են, հետո սիստեմատիկորեն սովորեց-
նում ցրտի և հետո գուրս թողնում վորպես աշխատանքի ըն-
դունակ և պիտանի մարդիկ... Շատ եմ վախենում, վոր դա ֆասի-
ձեր առողջությանը և խախտի ձեր աշխատանքի ունակությունը...
Շատ եմ խնդրում լրջորեն սկսել բժշկության գործը. հավատաց-
նում եմ, կարելի յե բոլորովին լավանալ, իսկ անուշաղիր թող-
նել—ուղղակի անսաստված բան ե և հանցավոր»։

Իսկ թե ինչ եր Լենինը Գորկու համար,—դրա մասին կա-
րիք ել չկա խոսելու, քանի վոր Հոկտեմբերյան հեղափոխության-
ծանր տարիներին, քաղաքացիական կոիմերի դաժանում,
յերբ Գորկին սալթաքել եր բայց կիզան դիրքերից, անգամ այդ
լքյալ վիճակում Լենինի մասին նա սքանչացումով է խոսում «Կոմ-
մունիստական Խոտերնացիոնալիք» 12-րդ համարում (1920 թվի).
վեր հանելով հանձարեղ զեկավարի պատմական դեմքը, նրա մե-
ծագործությունը։

Գորկին հետեւայն և գրում Լենինին նվիրած իր հոգված-
ներից մեկում. «Լենինի գերը վորպես Ռուսաստանի ուժորմա-
տորի, իմ կարծիքով, ավելի փոքր ե, քան նրա նշանակությունը
վորպես համաշխարհապետ հեղափոխականի։ Նա վոչ միայն այն-
մարդն ե, վորի վրա պատմությունը դրել և մի սարսափելի պար-
տականություն՝ հիմնավորապես հեղադրյելու մարդկալին խարս-
րդեա, դանդաղաշարժ, ծուզ մրջնոցը, վորի անունն և Ռուսաս-
տան,—այլ և նրա կամքը՝ դա մի անդուլ տառան * ե, վորի հար-
վածները հզորապես թափահարում են Արևմուտքի ամրակուռ կա-
պիտալիստական պետությունները և Արևելքի պտրկական բռնա-
պետությունների հազարամյակներով պառկած գուղձերը»։ «Իսձ
թվում ե, թե նրան գրեթե չի հետաքրքրում անհատական-մարդ-
կայինը. նա մտածում է միմիայն կուսակցությունների, մասսա-
ների, պետությունների մասին, և այս բանում նա ոժտված է
նախատեսության շնորհքով, մտածող-փորձարարի հանձարեղ ին-
տությացով...»։

«Լենինի ամբողջ կյանքի հիմնական նպատակը համաձարդ-
կային բարիքն ե, ուստի նա անխուսափելիորեն պիտի նախա-
տեսեր հեռավոր զարերում ունենալիք վախճանը այն մեծ պրո-
ցեսսի, վորի սկզբնավորությանը ասկետորեն և հերոսարար ծա-
ռայում ե նրա ամբողջ կամքը»։

Այսպես և բնորոշել Գորկին միջազգային պլոտիտարիատի
հանձարեղ զեկավարին, աշխարհի բոլոր ճնշվածների համար պաշ-
տամունքի առարկա զարձած մեծ հեղափոխականին։

* *

Գրական ասպարեզ ե մտել Գորկին 1892 թվին իր «Մակար-
Չուլլրա» գրվածքով։ Նրա գրական առաջին լրջանի գործերը կա-
րելի յե բնորոշել ոռմանտիզմով և բողոքող ինդիվիդուալիզմով։

* Պարսպակարծան հարվածող մեքենա (հնում)։

անհատապաշտությամբ։ Գորկին հանդես և գալիս վորովես ջատագով ուժեղ տիպերի, նահանջ և զիջում չխմացող անհատների։ Բայց այդ ուժեղ անհատներին նա չի վերցնում վիրասանների համար սովորական դարձած ինտելիգենտ կամ սոցիալական վերին խավերի «հերոսներից»։ Նրա «անհատները» ուստական ստորին մոռացված խավերից են — բռուակներ, կրանքից ծեծված, դժոն, սոցիալական անարդարության հանդեպ գաղաղած լուժակնապությաներ։ Դա ոսւս հասարակության և գրականության համար մի անժանոնթ աշխարհ էր, զոր նա աշնակ գունեղ ու գրավիչ պատկերավորությամբ ներկայացրեց։

Գորկու բողոքով, փիլիսոփայող բռոյակները կամ նրա հերիաթների հերոսները մի պահանջ ունեն — անհատի ազատագրությունը նրան կաշկանդող հասարակական բոլոր կապանքներից։ Ճիշտ ե, ոսւս գրականության մեջ 90-ական թվականներին անհատապաշտության լիրդիչներ ելին նույնական գեկագենաները, սիմվոլիստները, բայց հիմնական տարրերություն կար վերջինների և Գորկու ինդիվիդուալիզմի միջն։

Սիմվոլիստների անհատապաշտությունը ուներ ինքնազնի բնույթ։ Նրանց պահանջն եր անհատի ներքին ազատազրումը՝ բուրժուական կարգերի արգեն տիրող շրջանակում։ Սոցիալականքաղաքական հեղաշրջման խնդիր չունելին սիմվոլիստները։ Գորկու անհատապաշտությունը, ընդհակառակը, բմբուսացում եր, մի՛ տեսակ բունտարություն հենց այդ կարգերի դեմ, այդ կարգերից բղովող անհավասարության և ուրիշ ալյանսակ կաշկանդումների դեմ։

Բողոքով լինելով՝ նրա հերոսներն անզուսպ են ծայր աստիճանի և մի տեսակ սոցիալական խորթացման գատապարտված։

«Փակար Զուգրա»-ի կոյկո Զուարն ու գեղեցկունի Ռազգան, իրար սաստիկ սիրող զաւցը, չեն հասկանում իրար, շնորհիվ յուրաքանչյուրի անզուսպ անհատականության, անմիտ անզիջողականության։ Ամեն մեկը նրանցից, ինչներով իր ախաղես ասած անհատական բացարձակ ինքնուրույնությունից, պահանջում և մյուսի ստորագասությունը, և սերը այդ մերկու «ուժեղ» անհատականությունների փոխփում և գողբերգության։ Լոյկոն սպասում է Ռազգակին, Ռազգալի հայրն ել նույն զանակով սպասում է լոյկոյին այն ժամանակ, ինը վերջինս վաճիրը կատարելուց հետո կնոջ դիակի վրա ընկած հեկեկում եր։

Գորկու այս տիպի ոսմանտիկ գրվածքների ինդիվիդուալիզ-

մը գերազանցորեն բնագլական ն։ Նրա «ուժեղ անհատների» գործողության դրդիչը բնագդն ե, բայց նեղ, տարերացին և անկոտում, բայց նեղ, անձնական շրջանակում, վորովհետեւ չունի կազմակերպվելու սոցիալական միջավայր, կազմակերպված ձևով ել իր ուժը գործադրելու համար։ Յեկ զրա համար ել Գորկու այդ շրջանի հերոսների նշանաբանը, թե՝ «լավ և կործանվել քան հասզանցվել»—կրում ե շատ պրիմիտիվ բնույթ։

Գորկուն գրավողը, բայց լեռնութիւն, լեղել և ամբողջացած ուժեղ անհատը, վորը չգիտե, թե ինչ և զիջումը, ինչ և համակերպումը մի միջավայրում, ուր սոցիալական անիրավ կարգերի և տիրող ուեակցիալի հեղծուցիչ մթնոլորտի հանդեպ չպիտք և լինի վհջ համակերպում, վհջ զիջում։

«Ուժեղներ չկան», — ասում ե հոսետես զարձած պառավիզերգիլը և մտածում — ուր են կորել կորովի մարդիկ, — այդ բառերի մեջ զնելով հասարակական իմաստ։

Սակայն բունտար և լավատես Գորկին «կորովի և ուժեղ» մարդիկ գտնում և վարի խավերում, տալիս նրանց լեզենդար կերպարանք, բարձրացնում մինչև անձնազորության աստիճանը Ազգական ուժեղ ու կորովի լիբ նրա նանկոն, վորը իր թշվառ ժողովը գրդին փրկելու և տիրող թանձր խավարը փարատելու համար սեփական ձեռներով պատռեց իր կուրծքը, հանեց այնտեղից սիրտը, դեպի մարդիկ տածած մեծ սիրս կրակով վառված միրտը, լուսավորեց նրանով ճահճուտ մութ անտառը, և ճահճճների աշխարհում հյուծված, տառապող ժողովրդին առաջնորդեց դեպի լայնարձակ լուսավոր դաշտավայրը («Պառավ իզերգիլը»)։

Այսպես «Պառավ իզերգիլ» հերոսը — Դանկոն, նույնական ուժեղ և անսահանջ, բայց այլև սոցիալական խորացման գատապարտված մարդ չե, ինչպես «Մակար Զուգրա» կամ «Խանը և իր վորդին» գրվածքների հերոսները։ Ըսդհակառակը, նրա ուժեղ ու կորովի արգեն գործադրվում են հանուն մասսաների փրկության։ Այստեղ «ուժեղ անհատի» հետ կապված ե վոչ թե նեղ անհատականը, այլ իր նման մարդկանց փրկելու անձնազորությունը։

— Դեպի սիրացործություն, — անա ուժեղների, կորովի մարդկանց, բացերի գերագույն սպատակը, վոր չերգել և Գորկին իր հայտնի «Բազեկի լերգի» մեջ։ Այստեղ լավում և վոչ միայն բողոքի ձայնը ընդդեմ տիրող հասարակական և քաղաքական ուեակցիալի, ընդդեմ մեջանական ճախճախուտի, վորի անձնազո-

գումը «սողալու ծնված» իժն ե, այլ պարզապես զգացվում ե «սախապատրաստվող հեղափոխական պայքարի հեռավոր շռնչը»:

«Բազեյի յերգի» մեջ Գորկին հնչեցնում ե հեղափոխական ռուսամդրությունների արձագանքը:

— Ո՛, յերջանկություն կովի, պայքարի, — զոշում ե վիրավոր բազեն, զորը «վոստինների հետ մղած կովի մեջ արնաքան լեղած»՝ կուլ ե գնում ծովի ալիքներին։ Գորկին նախագուշակում ե գալիք փոթորիկը և «քաջերի խենթության», այսինքն հեղափոխության ըմբռատության փառքն է յերգում, «քաջերի խենթությունը» համարելով կյանքի գերազույն խմաստը։

Դիտելով վոստիկանական-կալվածատիրական մուսաստանի ձնշգած մասսաների վիճակը, տիրող խավարը, հասարակական կյանքի մեռելությունը, թագավորող մարակն ու շղթան՝ Գորկին 90-ական թվականների իր պատմվածքների յերկար շարքով ցուցադրեց նախ այդ կյանքի մռավիլ հատակը։

Մինչեւ Գորկին վոչվոք կարծես չեր նկատել սուսական կյանքի այդ «հատակը», տիրող կարգերից տառապող «նախկին մարդկանց», չեր լսել նրանց փիլիսոփայությունն ու բողոքի ձայնը։

«Զելկա», «Կոնօվալով», «Մալվա», «Ռուզ ամուսիները», «Նախկին մարդիկ» և այլ գրվածքներում շարան-շարան դայիս-անցնում են հերոսների խմբեր, զորոնց ամենազգալիչ կողմը բացասում ե տիրող կարգերի և Գորկու հերոսների համար ընդհանուր գարձած այն ճշմարտությունը, թե «մարդը ինքն է իր բախտի դարբինը»։ Բայց կարեռն այն ե, թե Գորկու պատմը-գածքներում նրանք դժւրս են գալիս այնպես, զոր ընդունակ լինեն զառնալու իրենց «բախտի դարբինը»։ Իհարկե, վոչ։ Գորկու բոստակները գազազած մարդիկ են, բայց պայքարելու անընդունակ, զորովհետեւ կոլլեկտիվ ուժ չեն։

Բավական ե հիշել նրա «Հատակում» պիեսի հերոսներին, զոր պարզ լինի, թե վորքան անոդնական են ու մոլորված նրանք, և զոր այդ մարդկանց փրկությունը վաչ թե իրենցից պիտի բղխի, այլ տրիշ տեղից։ Վորտեղից։ Ազանդակ կարգերի խորտակող միակ ուժը կազմակերպված պրոլետարիատը կարող եր լինել, զորի վրա և բենեաց իր հայացքը Գորկին, իերը 900-ական թվականների սկզբին տեղի ունեցան բանվորական հսկայական գործադունքներ, տնտեսական պահանջների հետ յերման հանելով քաղական

Ցեղ ահա հանձին պրոլետարիատի Գորկին գտավ ապագա

կյանքի կառուցողին, վոր ընդունակ ե մահացու հարված տալ հին կարգերին, ընդունակ ե պայքարելու և հաղթելու։ Գորկին որդանական ատելություն ուներ զեպի բուժ ցարիզմը, զեպի կալվածատեր-բուրժուական սեփականությունը։ Իր մի շաբք հետագա դրվածքներում նա հանդես է բերում բանվորական տիպեր, պատկերացնում նրանց գործադուլը, պայքարը, ընդհարումը ցարական վոտտիկանների ու ժանդարմների հետ։ «Մըրկարերի» յերգիչը դառնում է ոռուսական պրոլետարիատի սիրելի հեղինակը, զառնում է հեղափոխական մասսաների պարծանքը, իսկ մեծ հեղափոխական լենինը նրան անվանում է «պրոլետարական արվեստի անպայման խոշորագույն ներկայացուցիչ», ընդունելով, զոր Գորկին իր զեղարվեստական գործերով խակական պրոլետարական զրոյ և։

Գորկին ըմբռնեց պրոլետարիատի գերը գալիք հեղափոխության մեջ, նախագուշակեց ու յերգեց իր «Մըրկահավ»-ով սպասվող մեծ փոթորիկը։ Այդ արձակ բանաստեղծությունը նա գրեց առաջին հեղափոխությունից յերեք տարի առաջ։ Յերգեց «վես ու հպարտ մըրկահավի» ճախրանքը, զոր դուրս եր յեկել խիզախորեն դիմագրելու «վունացող հոգմերին» և «Ճայթող ամպրոպին»։

«Մըրկի, շուտով մըրիկ կպայմի սաստիկ»։ Խոկ «հաղթանակի մարդարկին» ահա կանչում ե։ — «Փոթորիկն անեղ թող ուժդին պայմի»։

Այդ շրջանի զեղարվեստական արձակի մեջ Գորկին, թողնելով բոստակներին, հանդես է բերում պրոլետարական գեմքերի ամբողջ մի շարան, հակագրելով նրանց թե ինտելիցիենցիալին, զոր թուլամորթ և և ֆրազարան, և թե զուղացիությանը, զորից սպասելիք չունի։

Հանրածանոթ ե այն կարծիքը, թե Գորկին բացասական մոտեցում ունի զյուղացիությանը, համարելով նրան հետագեմ, նախապաշարված և զերի մասնավոր սեփականության։ Խենև իր գրական գործունեցության արշալուսին նա հակագրել է գյուղին ժամանակակից քաղաքը, զորի խառնարանում միայն զարգանում է մարդկության մեծ մասի աղատագրության սաղմը։ Դա խոկապես այն ժամանակ — 90-ական թվականներին — հասկանալի

* Շատ տարրինակ ե այդ տեսակինից ընկ. Ռագեկի այն կարծիքը, թե Մարքսի Գորկին կարող եր յեկ հս-եց համարվել իր զբաժներով։ Ընկ. Ռագեկը չի նկատել այն, զոր հս-երական կուտացության բազան զյուղացիությունն եր, զորի պատմական զերը ժանգաման բացառում եր Գորկին։ Կարելի յեր յերեակայել մի հս-եց առանց զյուղացիության։

միունկակցիա լիր նարողնեկների սահմանադրության», մուժիկի իդեալիզացիայի դեմ: Իր գրվածքներով Գորկին պատռեց գլուղի նարողնեկության այդ ոռմանտիկ շղարշը և ոռուական հեղափոխական դեմոկրատիայի ուշադրությունը կենտրոնացրեց հեղափոխական մարքսիզմի գծած ուղիների վրա: Բայց և այսպես չի կարելի ասել, վոր Գորկին բացասարար և վերաբերվում գլուղական բոլոր խավերին, վոր նրա համար բոլոր գլուղացիք միևնույն մակարդակի վրա լին: Առաջին աշխանի գլուղածքներում, —ինչպես «Մալվա», «Նախկին մարդիկ», «Կիրիկա» և այն, — Գորկին գլուղական վորոշ տիպերի նկատմամբ ցուցադրում և առանձին համակրանք, ընդգծելով գլուղացու աշխատանքի գրական կողմերը: Խիստ քննադատության լենթարկելով գլուղացիական Ռուսաստանի մութ կողմերը՝ Գորկին ուղում եր ցուց տալ, վոր հասարակական ատելի կարգերի հեղաշրջողը գլուղը չի լինելու: Հեղափոխությունը պիտի գա քաղաքից, վորովհետեղ և կենտրոնացած բանվոր դասակարգը, նրա առաջապահը, պայքարող կազմակերպությունը:

Հոկտեմբերից միքանի տարի հետո Գորկին լենինին նվիրած իր հողվածում, ակնարկելով գլուղացիությունը՝ գտնում և, վոր հեղափոխության հետևանքով՝ «գլուղացիների զգալի տոկուր ուղինել կուշտ բուրժուաներ—և վոչ ավելի»:

Խոսքը, ուրեմն, վերաբերում է վոչ բոլոր գլուղացիներին, ոչ նրա այն խավերին, վորոնք բուրժուաներ են ուղում դառնալուրիշ աշխատանքը շահագործելով:

Ենք այսպես, խստորեն քննադատելով լիբերալ և նույնիսկ արմատական ինտելիգենցիային, վորի ճառերը լիբերալ չեն համապատասխանել նրա գործերին, նաև չհավատալով գլուղացիությանը, — Գորկին իր հայացքը դարձնում է բանվոր դասակարգի կողմը:

Հիշենք նրա այդ կարգի միքանի պատմվածքները:

«Զարանեի» պատմվածքում Գորկին գուրս և բերել գրաշար նիկոլա Գվոզդյովին, վորը դատարկ ու հիմար բան և համարում բուրժուական լիբերալ մամուլի անվերջ զրուցները «գործարանացիների որենսդրության» և նման բանվորական խնդիրների մասին: Իր այդ կարծերը զրաշարը փակագծի մեջ ավելացնում է վերօնիշալ հարցին նվիրված մի ճոճուան նողված շարելիս: Գրաշարի այդ ծանոթությունը չի նկատում խմբագիրը, և հողվածք մյուս որը լուս և տեսնում ծանոթությամբ: Գվոզդյովը իր հան-

գուգն քայլի համար ապարանից անմիջապես դուրս և ընկնում, բայց հետեւալ որը, գինովի վիճակում՝ պատահելով խմբագրին, նրա լեռներն եւ շպրտուն թուլամորթ, տատանվող, բուրժուազիալին սպասավորող, բայց ազատամիտ, քրազներ գործածող ինտելիգենտի կեղծիքը, նրա վոչնչությունը:

«Յումա Գուրգելեվ» պատմվածքում լրագրական տանջված, հիվանդ աշխատակցի բերանով Գորկին դարձալ հայտարարում է, վոր աշխատավոր ինտելիգենցիան միմիայն պրոլետարիատի հետ կինք, վորովհետեւ նա այլ ճանապարհ չունի, վորովհետեւ շահագործվող, հալածվող մարդկության միակ ազատարարն ապագին նայող պրոլետարիատն է, փիզիկապես և հոգեպես առողջ բանվարդը:

— Ընկերներ, — ասում է նա բանվորներին, — մենք բախտով կապված ենք իրար, վորպեսզի իրար լրացնենք... Ապագան ձերն եւ, բարեկամներ: Մեծ աշխատանք և սպասում ձեզ... Այդ դժուք պիտի ստեղծեք նոր կուլտուրա... ամեն ինչ ազատ, կենդանի և վար:

— Մենք հապթենք, — գոչում է մեքենավար Նիլը «Մեծանելեր» պիեսում:

Նիլը համոզված է, վոր գրության տերը պիտի լինի նա, ով աշխատում, արտադրում է: Նա գիտե, վոր այժմ տիրողներն ու հրամայողները «խոզերն են, հիմարները և գողերը», բայց — «վոչինչ, մենք կհաղթենք», — պնդում է նա:

Անա նրա աշխարհայացքը և հավատը պրոլետարիատի ուժերի վրա:

Ավելի լայն ու խոր աշխանակ և վերցրել Գորկին բանվորական շարժումը պատկերացնելու համար իր հետագա, մանավանդ «Թօնամիներ» և «Մայրը» գրվածքներում: Յերկու դեպքումն ել հեղինակը պատկերում է պրոլետարական պայքարող մասսաներին և նրանց ըստ ամենայնի իրեալականացրած ներկայացուցիչներին, վորոնք գրվածքում ստացել են ուժանափել գունավորում:

Զնաբելով գեղարվեստական պակասություններին, «Մայրը» վեպի հեղափոխական տեսներնցը այնքան ուժեղ եր, վոր ցարական ցենզուրան արգելեց նրա տպագրությունը Ռուսաստանում: Բայց նա լուս տեսավ արտասահմանում 1907 թվին, ուեկցիալի որերին, դարձավ մասսաների վրա հետաքրքրության առարկան, կարդացվում: Եր հափշտակությամբ, տարածվում միլիոնավոր որինակներով:

Ավելի մեծ լեղավ գրքի արժանիքը քաղաքական տեսակե-



տից, վարովհետեւ դա մի զդաստացուցիչ պատասխան եր՝ ուղղված ցարական իշխանության և բուրժուազիացին, վոր հեղափոխական դասակարգի դատը չե թաղված, թէ նա գեռ գալու յէ, գալու յէ իրրե մասսայական շարժման մի քրեթիմնդիր ուրագան:

Այդ ուրագանը՝ յեկալ ուղիղ տասը տարի հետո: Ճիշտ ե, «Թշնամիները» դրամայում և «Մայրը» վեպում կովող պրոլետարիատը պարավում ե, կոխվը վերջանում բանվորների բանտարկությամբ, տաժանակիր աշխատանքով և կախաղանով: Բայց մի խորը համոզում մնում ե վեպի ընթերցումից, —այն, վոր չնայած բոլոր ժամանակավոր պարտություններին, հաղթանակը, այնուառ մնախիվ, բանվորների կողմին և լինելու:

Այսպես ե գրել Գորկին իր հեղափոխական-դեմոկրատական և պրոլետարական գրվածքները քսան տարի առաջ, յերբ սուսական բանվորությունը տակավին ապրում եր գիտակցության շերտավորման պրոցեսը, յերբ նոր-նոր բարձրացող գասակարգի վառ առնչերին ու վերասլաց ձգումներին այելի համապատասխան եր սոմանտիկ գունավորում ունեցող արվեստը:

Գորկու գործերը դիտելիս առաջին տպավորությունն այն ե, վոր նրա պատկերած միջավայրը բազմակողմանի և տիպերը բազմազան են: Նա չի սահմանափակվում իրականության մի անկյունով: Նրա հետաքրքրության առարկան հասարակական կյանքի բոլոր խավերն են: Յեղ դա ամենամեծ կոչումն ե ամեն մի գրողի: Այդ տեսակետից շատ հարուստ ե Գորկու տիպերի գալերեան՝ կազմակերպվող բուրժուազիա, կուպեցներ, մեշաններ, սուսական միապատճաղ պրովինցիան, բոսյակներ, չուղակներ, բանվորներ, գյուղացիներ և խտելիքներներ: Բոլորն ել իրենց հատուկ պայմաններում, հատուկ հոգեբանությամբ, զատողությամբ և ձգումներով, վորոնք, առաջն, բեկլում, պատկերանում են՝ հեղինակին հատուկ լուսաբանությամբ ու կենսահայեցողությամբ:

Գորկու գրվածքների մեջ ուրուն տեղ են բռնում նրա «Հերիաթները», վորոնց նյութը վերցված ե գլխավորապես իտալական բանվորների և աշխատավորության կյանքից: Լցված խորը հավատով վեպի շինարար աշխատանքը, լուսաջինջ յերեխաները, բանվորների զասակարգացին համերաշխությունը, կորովի մարդկանց գեղեցկությունը, —կենսաթրթիու ու պայծառ այդ պատմը վածքները Գորկու ստեղծագործության լավագույն ենքից են: Այս հատորում ապվող «հերիաթները» մի ծաղկաքաղ են Գորկու համանուն ավելի մեծ հատորից:

Վերև մենք ակնարկեցինք Գորկու խորովովիական այն սալքաքումների մասին, վոր նա գործուց իր «Խոստովանություն» գրքում և Դոստոյևսկու մասին գրած հողվածում, —այն ե՝ «աստվածածեղծման» վերաբերմար, —և վորոնց գեմ իր ժամանակին այնպիս բռնուն կերպով հանդես յեկալ լենինը: Դա սոցիալիզմին մի տեսակ հավատի, նոր աստվածության «խորություն» տալու փորձն եր, վերջինիս հետ «Ճշմարտության-Սրբարության» («Правда-Справедливость») գաղափարը կապելու համար:

Իր այդ սալքաքումը հետագայում Գորկին ճանաչեց: Բայց տատանվող գրողը մի այլ սալքաքում ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ, յերբ քաղաքացիական դաժան կովկների միջոցին հեղափոխության առջև պատասխանառվության կանչվեց նաև ինտելիգենցիայի հականեղափոխական մասը: Գորկին պարզապես վախեցավ անհախիսնթաց հեղափոխության բերած արծատական հեղաշրջումից, հնի ավերածությունից: Նրան թվաց, վոր ժողովրդական, մանավանդ գուղղացիական տարրերը, վորոնց նկատմամբ իրաւական և Գորկին միշտ, անկարելի կինի գնել վորոշ հունի մեջ, ուժեղ զեկավարության տակ, և վոր իբր թե հանուն սոցիալիզմի սկսած մեծ շարժումը հիանդի անգուստ ավելի, դաժան խստությունների և ամեն ինչ վոչնչացման լենթարկելու անիշխանականության: Դուրս ե գալիս, վոր ցարիզի, կալվածատիրական և բուրժուարական կարգերի չարաշար տապալումը տենչացող ու քարոզող Գորկին մի տեսակ ներքին խուճապ զբաց, հենց վոր Հոկտեմբերին այդ ամենս սկսեց իրագործել ուսև հեղափոխական պրոլետարիատը, իր հետ ունենալով ամբողջ գյուղացիությունը: Մի խորօվ՝ հոկտեմբերի հետ կապված տասնյակ միլիոնների տարերային շարժումը Գորկուն թվաց մասսայական խենթություն, —և այն ել այն Գորկուն, վորը իր հեղափոխական գործունելության արշալուսին իրեն հատուկ պաֆոսով յերգել ե «քաջերի ինենթությունը», հնի գեմ անհավասար պայքարի յելած, անարդ բռնության ու շահագործման, խավարի ու թշվառության դեմ ծառացած «քաջերի ինենթությունը»...

Սակայն յեթե զեղարվեստական մեծ գրող և հեղափոխական Գորկին զիտե սխալվել աղա նա զիտե նաև իր սխալը ճանաչել: Հոկտեմբերյան հեղափոխությունից միքանի տարի հետո լենինին սմիրած հողվածում Գորկին զրում ե, «Կար մի մոմենտ, յեր թուսաստանի ժողովրդի նկատմամբ բնական խղճահարությունն ատիպում եր ինձ խենթությունը համարել զրեթե վոճրագործու-

թիւն։ Բայց այժմ, յերբ տեսնում եմ, թե ինչպես այս ժողովուրդն ավելի լավ գիտէ համբերութիւնը տանջվել, քան աղնվորեն և գիտակցորեն աշխատել (ելի պեսսիմիզմ «Ժողովրդի», այսինքն գուշացիութիւն նկատմամբ.—Ա.)—իս կը լին յերգում եմ քաջերի ուրարագան խենթութիւն փառքը։ Անշուշտ սխալն այսաեղ լիովին չի հանաչված։ Բայց պետք ե լենթագրել, վոր վերջիվերջու մեծ գրողը նորից յերգելու յի սուս հաղթական պրոլետարիատի ստեղծագործական կորովը, նրա տենչերը և գերազուն ջանքերը սոցիալական կյանքի բարձր ձեւեր դարբնելու և «անհրաժեշտութիւն թագավորութիւննից» գեպի «ազատութիւն թագավորութիւնը» անցնելու համար։ Դա նշանակում ե, վոր սուսական պրոլետարիատի հեղափոխական արամազութիւնների վաղեմի «մրրկաբերը» «կը կին յերգելու յի քաջերի սրբազն խենթութիւն», այսինքն աշխատանքի պաֆոսի փառքը։

Սակայն դա հնարավոր կլինի այն ժամանակ, յերբ յերգիշը իր խարիսխը կծփի յերկրի սրառում, ֆիզիկապես կապրի խորհրդակին ստեղծագործական կյանքի կենդանի խառնարանում։

Իսկ մինչ այդ, ինչպես վերջին տարիների ընթացքում, նրա ստեղծագործական ֆանտազիան վերաբռնպերը յի անցյալի կյանքն ու տիպերը, վարոնք ապրել ու դործել են մինչև Հոկտեմբերը կամ Հոկտեմբերի առաջին ծանր տարիներում։

Գորկու վերջին խոշոր և գեղարվեստական գերազանց արժեկ ունեցող գրվածքը «Արտամոնովների գործե» ե, ուր հեղինակը տալիս ե սուս բուրժուական յերեք սերնդի կյանքի խտացած պատկերացում։ Առաջին սերունդը կապիտալ կուտակող է, ծագումով գյուղացի-բռնունցը, դադար չունեցող, անզուսպ բնագուների տեր, նախաձեռնող։ Հաջորդող սերունդներն արգեն այլասերվում են, զնում գեպի անկում, մինչև վոր Հոկտեմբերյան հեղափոխութիւնը գալիս ե սրբում և նրանց վորպես պարագիտացն տարր։

Բացի գրանից Գորկին տպագրել ե մի շաբք ինքնակենսագրական պատմվածքներ («Իմ համալսարանները», «Հրդեհները», «Պահապանը», Տոլստոյի, Անդրեյի մասին և ուրիշն.), վորոնք գրված են հիշողութիւնների և դիացութիւնների ձևով։ Վոճը հասցրած ե իդեալական մաքրութիւնն, հղկված պատկերները՝ կատարելութիւն։

Գորկին, վորքան մեղ հայտնի յե, պատրաստում ե գարձար

մի նոր մեծ վեպ, ուր պատկերանալու յի մեր բարդ ժամանակների հետ կապված ձոտիկ անցյալը՝ գործող բազմաթիվ հին և նոր դեմքերի գալիքեալով։ Նկատելի բեղմնավորութիւնն և ցուցադրումն ամ վերջին տարիներս, կարծես ապրելիս լինի ստեղծագործական մի նոր թարմ շրջան։

Գորկին, ճիշտ ե, հեռու յի խորհրդավին սահմաններից և գրահանար ել հաճախ անկատար և լինում նրա պատկերացումը Խորհրդավային մեծ Միութիւն նկատմամբ, սակայն ապրելով Յեվլուստամ, նա զզվանքով և գիտում, թե ինչպես «կապիտալի չարպանամարը խեղում և մարգկութիւն մեծամասնութիւնը՝ աղքատութիւնը» ականոն պարագաների մեջ աշխատանքի պաֆոսի փառքը։ Բայց այս անգամ արդեն՝ ստեղծագործական «խենթութիւն», այսինքն աշխատանքի պաֆոսի փառքը։

Վոճքագործութիւններով լցոված կապիտալիստական աշխարհը պետք ե կործանվի, այլապես փրկութիւն չկա աշխատանքի մարդկանց համար։

«Ինչպես հին չոռմը արժանի գարձավ կործանման,—ասում ե Գորկին լինինին սվիրած նույն հոգվածում,—այնպես ել ժամանակակից աշխարհի վոճիրներն արդարացնում են նրա կործանման անհրաժեշտութիւնը։ Դա պատմական անհրաժեշտութիւնն է, վորը չի կարող վերացնել վոչվոք և վոչ մի բան»։

Գորկին յեղել ե և կմնա սուսական և միջազգային պրոլետարիատի սիրելի գրողը, վորովհետեւ նա պրոլետարիատի հետ միասին այժմ ել հավատում ե, վոր պրոլետարիատի սոցիալական մեծ պատքարը միայն ընդունակ և մարգկութիւննը տանելու դեպի տեսաշալի համայնակեցութիւնն, գեպի կոմմունիզմ։ Վորովհետեւ զա պատմական անհրաժեշտութիւնն է, վորը չի կարող վերացնել վոչվոք և վոչ մի բան»...

ՍՈՒՐԻԱԹՅԱՆ

Մայիս, 1927
Թիֆլիս

ՄԻ ԱՆԳԱՄ ԱՇԽԱՆԲ...

...Մի անգամ աշխանը յես մի շատ անհարժար և անախորժ դրության մեջ լնկա: Մի ոտար քաղաք ելի յեկել վոչ մի ծանոթ չպատահեց, զրաբանումս ել փող չկար, և յես մնացի այդպես առանց ընակարանի ու առանց կոպեկի: Առաջին որեքը յես ծախեցի հագուստիս մի մասը, վոր կարելի յեր ծախել: Հետո ուզերովեցի ուեպի նավահանգիստը, վոր դանդում և «Գետարերան» կոչվող հեռավոր քաղաքանասում: Նավագնացության ժամանակ այստեղ կյանքը յուսում եր, աշխատ, աշխատանքով լի. մարդ հեշտությամբ կարող եր իր համար գործ գտնել: Իսկ այդ ժամանակ ամեն ինչ դատարկ եր ու խաղաղ, վորովհետեւ արդեն հոկտեմբեր ամսվա վերջերն եցին:

Յես թափառում ելի միայնակ դատարկ շինությունների ու փոքրիկ տախտակամած խանութների միջև ու հազիվ ելի շարժում հոգնած վլոտքերս: Աչքերս զետնին հառած, ուզում ելի արդ ցեխերի մեջ ուտելիքի վորեն մնացորդ գտնել և մտածում ելի միննույն ժամանակ, ինչ լավ բան և կուշտ լինելը...

Քաղաքակրթության ներկա սրբամաններում հոգեկան քաղցը ավելի հեշտ կարելի յե հագեցնել, քան մարմնականը: Դուք թափառում եք յերկար փողոցներով, ձեր շարքը բարձրանում են գեղեցիկ շինություններ, վորոնց մասին ամենայն համարձակությամբ կարող եք ասել, վոր նրանք նույնչափ գեղեցիկ են և ներքուստ նույնչափ ձոշակով ու շքեղ կահավորված: Այդ բոլորը կարող են մեջ քաղցը մտածմունքներ առաջ բերել ճարտարապետության, առողջապահության և ելի ուրիշ շատ մեծ-մեծ բաների մասին: Ձեզ պատահում են տաք ու վեղեցիկ հագնված մարդիկ, նրանք անչափ բարի յեն և քաղաքավարի: Նրանք ամենայն զգուշությամբ խուլս են տալիս ձեզանից, վորպեսզի չնկատեն ձեր ցավալի գոյությունը... Աստված վկա, քաղցած մարդու հոգին ավելի լավ և կերակրվում միշտ, քան կուշտ մարդու հոգին: Ահա ձեզ մի գրություն, վորից կարելի յե շատ սրամիս յեղբակացություն դուրս բերել կուշտ մարդկանց ողափին:

...Գիշերը մոտենում եր: Անձրե եր գալիս և հյուսիսից մոնչաւով փշում եր քամին: Նա կատաղի շվեց եր բարձրացնում դատարկ մնացած փայտաշն խանութներում և ծեծում եր հյուրանցների տախտակած պատուհանները: Գետի ալիքները նրա հարվածներից ուշում ու փրփռում եին և կատաղի արագությամբ, միմյանց վրա թուչելով, շտապում, անհետանում եին մթության մեջ... Կարծես զետը զգում եր, վոր ձմեռը մոտենում է, և վախեցած փախչում եր սառուցի կաշկանդող շղթաներից, վոր հենց այդ գիշեր կարող եր զցել նրա վրա հյուսիսային քամին: Յերկինքը թանձը եր ու խավար, այնաեղից անընդհատ տեղում եին անձրեի մանր կաթիլներ... Քիչ հեռվում նշանքող յերկու չորացած ու ծոված ծառերը և նրանց մոտի կողքի վրա ընկած նավակը—լրացնում, ընդդում եին բնության արդ տեսարանը:

Հատակը կոտրված, շուր թիկած նավակ և սառը քամուց կոռպատված, ծեծված ու ծերացած ծառեր... Շուրջս ամեն ինչ ավելի ու անապատ և դարձել. յերկինքը շարունակում է սղալ, արտասվել: Մոռալ ու դատարկ և ամեն ինչ: Կարծես ամեն բան իմ շուրջը սկսել և մեռնել. շուրով միմիայն իս պիտի մնամ կենդանի, իսկ հետո ինձ ել սպասում և նույն սառը մահը:

Այդ ժամանակ իս 18 տարեկան էի: — յերանելի ժամանակ... Յես յերկար թափառեցի սառն ու խոնավ ավազներով, ատամներիս կրծտոցով շատ յերկեր հյուսեցի սովի և ցրտի պատճին, և հանկարծ փոքրիկ խանութներից մեկի յետել տեսա մի փոքրիկ կծկված ու գետնին կպած կանացի մարմին: Անձրեից թրջված շորերը կպել եին նրա կռացած ուսերին: Յես մոտեցա նրան ու սկսեցի դիտել: Նա ձեռքով փորում եր թաց ավազը և ուզում եր, ըստ յերեսութին, անցք բանալ դեպի խանութի ներսը...

— Այդ ինչի համար ես փորում,—հարցրի իս, նստելով կողքին...

Նա մի ձիչ արձակեց և վեր թուավ: Այժմ, յերբ նա, զիմացն կանգնած, վախեցած նայում եր ինձ իր լախն բացած կապուտ աշբերով, յես տեսա, վոր զա իմ հասակակից մի աղջիկ և, վերին աստիճանի գրավիչ դեմքով, վորը, դժբախտաբար, զարդարված և 2 հատ մեծ կապուտ բծերով: Այդ մի փոքր փչացնում եր տպավորությունը, թեև կապտաճները շատ կանոնավոր եին գասավորված: Մի-մի հատ հավասար չափի աշքերի տակը և մի հատ ձակատի մեջտեղը: Յերեսում եր, վոր խփող ձեռքը կատարելագործել և մարդկային դեմքեր փշացնելու արհետում:

Աղջիկը նայում եր ինձ վրա, և նրա աշքերում փայլող լեռ կլուղը հետզհետե մարում, անհետանում եր... Ահա նա ավագոտ ձեռքերը թափ տվեց, ուղղեց զլի չիթ աղլուխը, կծկվեց ու ասաց: — Ինչպես տեսնում եմ, զու յել ես սոված... զե, մի փորիր տեսնեմ... Իմ ձեռքերը հոգնել են: Անտեղ, — նա զլի շարժումով ցուց տվեց խանութը, — անպատճառ հաց կլինի, գուցե և մերշիկ: Այս խանութում գեռ առուտուր կա...

Յես սկսեցի փորել. իսկ նա միքիչ կանգնեց, նայեց ինձ վրա, ձեռո նստեց իմ կողքին և սկսեց ոգնել...

Մենք լուր աշխատում ենինք:

Յես չեմ կարող հիմա հաստատ ասել հիշում եփ արգուք այդ ժամանակ քրեական որենքների հաստափոր ժողովածուն. բարուագիառություն, սեփականության իրավունք և այլ այսպիսի բաներ, վորոնք, ինչպես ասում են իմաստուն մարդիկ, յերեք շղետք և մոռանալ կցանքում, վոչ մի զիավածում... Վորապեսպի կարելուն չափ մոտ իննեմ ճշմարտությանը, խոստովանվում եմ, կարծեմ, այնքան տարբել եփ փորելով, վոր ամեն բան մոռացել եփ, բացի... այն բանից, ինչ վոր կարող եփ գտնել խանութում:

Սրգեն մթնում եր: Թաց ու ցուրտ խավարը հետզհետե թանձրանում եր իմ շուրջը: Ալիքների աղմուկը հետզհետե խլանում եր, իսկ անձրեն ավելի ու ավելի ուժգին ծեծում եր նավակի տախտակները... Հեռվից լավում եր գիշերապահի ճրբալի ու մելամաղձու ձայնը...

— Հատակը տախտակոծ և թիչ չե, — կամաց հարցրեց ինձ իմ ոգնականը:

Յես չհասկացա ինչի մասին և հարցնում և լոեցի:

— Գուցե տախտակած ե... Այդ ժամանակ մեր շարչարանքը իզուր կլինի. հողը կփորենք, կհամսնենք տախտակներին, հետմ... Ավելի լավ և կողպեքը կոտրենք... Թուր կողպեք և յերեռում...

Լավ մաքերը շատ սակավ են ծագում կնոջ զլիում, բայց և այնպիսի... ծագում են, ինչպես տեսնում եք: Յես միշտ զնահատել եմ լավ մտքերը և աշխատել եմ կարելուն չափ ողտվել նրանցից:

Կողպեքը գտա, քաշեցի ու դուրս պոկեցի իր ողակների հետ միասին... Ընկերունիս իսկույն ոճի պես գալարվեց և ներս սոցաց խանութը բացված քառանկյունի անցքով:

Կեցցնո ողա, — բացականչեց նա ներսից:

Կնոջ մի փոքրիկ գովասանքը ինձ համար ավելի արժե, քան աղամարդի յերկար գովարանությունը, կուզեք լինի այդ աղա-

մարդը նույնիսկ ավելի պերճախոս, քան բոլոր հին ու նոր հոետառները միասին վերցրած։ Բայց այն ժամանակ տրամադրությունս այսքան լավ չեր, և իս առանց ուշադրություն դարձնելու ընկերունուս սիրախոսութիւն վրա, կարճ ու վախեցած հարցրի։

— Իսն կա՞...

Նա միապաղադ ձայնով սկսեց թվել եր գյուտերը։
— Մի գամբուզ...շիշերով, դատարկ տողբակներու...մի հովանոց...մի մրկաթե դուց...։

Դրանցից վոչ մեկը չեր կարելի ուտել։

Յես զգում ելի, վոր հույսերս չքանում են։

...Բայց հանկարծ նա ուրախ բացականչեց։

— Ահա... այ վորտեղ ե։

— Ո՞վ։

— Հացը... մի բոմբի...միայն թրջված ե, վերցրու...։

Բոմբին ընկավ վրաքերիս մոտ, իսկ քիչ հետո հայտնվեց և ինքը հարգելի ընկերունիս։ Յես իսկուն մաս-մաս արի հացը և սկսեցի աղանձագահ ուտել...։

— Դե ինձ ել տուր տեսնեմ...և պետք ե այստեղից հեռանալ...։

Նա ուշադրութիւմը նայեց չորս կողմը։

— Այ, ինչ վոր նավակ ե յերեսում, գնանք նրա տակը նըստենք։

— Գնանք։

Յեվ մենք գնացինք դեպի նավակը։ Յերկուսս ել ագահությամբ լափում ելինք մեր ավարը։ Գետը մոռնչում եր, անձրել հետպահու վարարում... Մի ինչ-վոր տեղից յերկարու սուր շվաց եր լավում։ կարծես մեկը, ինչ-վոր հզոր ու վոչվորից չվախեցող մի ելակ սուրում ու ծաղրում եր մեր աշխարհի կարգերը, այդ անպիտան աշնանալին յերեկոն և մեղ՝ այդ յերեկոյի յերկու հերոսներիս... Սիրտս կծկում ու նվում եր այդ շվացից։ Այնուամենանիվ յս մեծ ախորժակով ուտում ելի հացը։ Բարեկամունիս յետ չեր մնում ինձանից։ և մենք այդպիս մոտենում ելինք նավակին։

— Անունդ ինչ ե, — չփետեմ ինչու հարցրի յս։

Նատաշա, — պատասխանեց նա ծամելով։

Յես նայեցի նրան և ստատիկ ցավ զգացի սրտիս մեջ։ Հետո հայացքս ուղղեցի դեպի իմ մոռաջ տարածված մթությունը, և ինձ թվաց, վոր բախտիս միշտ հեղնու ու այլանդակ դեմքը խորը ըրդավոր կերպով նայում ե ինձ ու ժպտում...։

...Անձրեւ շարունակում եր ծեծել նավակի կողերը, և նրա մեղմ շիշփոցը տիտուր մտածմունքներ եր առաջացնում իմ մեջ Քամին շվացով ներս եր խուժում հատակի մի ծեղքից, վորտեր մի փոքրիկ տաշել, քամու շնորհիվ, շարունակ ինչ-վոր անհանգիստ ու վողբայի ձայններ եր հանում։ Գետի ալիքները ձողփուն ելին ափերը և նույնպիս վողբայի ու հուսակտուր ձայններ հանում։ Նրանք կարծես մի ինչ-վոր բանեկին պատմում, վոր վագուց ձանձրացրել, զզվեցրել եր նրանց, մի սրտմաշուկ բան։ վորից նրանք կուղենալին փախչել բայց վորի մասին զեռ անհրաժեշտ է յերկար խոսել պատմել... Անձրեւ շիշփոցը միանուած եր ալիքների աղմուկին, և նավակի շորջը, զորշ մթության մեջ մի յերկար հառաչ եր լավում։ գա՝ բնության անմիտ կատակներից զզված, ամառվա ու աշնան, տաքի ու ցրտի, արեի ու անձրեի անվերջ փոփոխություններից նեղացած ու հոգնած ծերուկ-յերկագնդի յերկար ու ծանր հառաչն եր..։ Քամին ել իր շառաչունով տիտուր, հուսահատ յերգեր եր հորինում ու տարածուածեաի ալիքների ու նրա սե ու անբնակ ափերի վրա...։

Մեր տեղը, նավակի տակը, զուրկ եր հարմարություններից նեղվածք եր ու խոնավ։ ծակված հատակից թափվում ելին անձրեւ ցուրտ կաթիները, սողոսկում եր քամին։ Մենք լուռ նատեղողում ելինք։ Հոգնածությունից աչքերս փակվում ելին։ Նատաշան մեջքը զեմ եր տվել նավակի կողին ու կուչ յեկել մի փոքրիկ գունդ եր դարձել։ Ծնկները ձեռքերով գրկած ու կզակը նրանց հենած, նա անթարթ նայում եր գետի կողմը, և նրա մեծու լայն բացած աչքերը ավելի ևս մեծ ելին յերեսում իրենց տակի կապտածների շնորհիվ։ Նա բոլորովին չեր շարժվում։ և այդ անշարժությունն ու լուսթյունը, — զզում ելի, — կամաց-կամաց ինչ-վոր ահ եր զցում սրտիս մեջ։ յս վախենում ելի իմ հարեւամունուց...ուղում ելի խոսել նրա հետ, բայց չգիտելի ինչպես սկսեմ։

Նա ինքը խոսեց։

— Ախ, անիծյալ կյանք,... — պարզ ու վորոշ արտասանեց նու Յեվ այդ գանգատ չեր բախտից։ Նրա ձայնի մեջ այնքան անտարբերություն կար, վոր չեր կարելի ասածը գանգատի տեղը ընզունել։ Յերեսում եր, վոր մարդ ուղղակի մտածել ե կյանքի մասին և յեկել և մի փորոշ յեղքակացության, վոր և համոնում և այժմ, և փորին յս չելի կարող պատասխանել առանց կեղծելու առանց ինձ հակասելու։ Յես լուռ ելի, իսկ նա կարծես իսկի չել ել նկատում ինձ, առաջվա պիս անշարժ նստած եր։

— Մարդ չի լել սատկում, պրծնի...—նորից խոսեց Նատաշան, այս անգամ կամաց ու մտազրազ, և դարձյալ գանգատի վոչ ժի նշուլը: Դարձյալ լերեռում եր, վոր մարդ մտածել ե կյանքի մասին, նայել ե իր վրա և հանգիստ հոգով լեկել այն լեզրակացության, վոր իր անձը կյանքի ծաղրից ու կատակներից ազատելու համար նա մի բան միայն կարող ե անել—«սատկել»:

Մաքի արջափ ճշտությունն ու պարզությունը սիրոս լըդրեց անասելի ցավով ու զզվանքով, և յս զգում ելի, վոր, լեթե շարունակեմ լսել, լաց պեսք և լինեմ... խոկ այդ ամոթ կլիներ մի կնոջ առջե, մանավանդ վոր նա ինքը ահա լաց չեր լինում: Յես վճռեցի խոսել:

— Ո՞վ ե թակել քեզ,—հարցրի յիս, վորովհետեւ չկարողացաւրից, ավելի մարդավարի խոսք գտնել:

— Պաշկեն, ուրիշ ո՞վ պիտի լինի,—պարդ ու հանգիստ պատասխանեց նա:

— Պաշկեն ո՞վ ե:

— Իս սիրելինը... մի հացթուխ:

— Շատ և ծեծում քեզ...

— Շատ... ամեն հարբելիս ծեծում ե:

Յեվ հանկարծ նա ավելի մոտեցավ ինձ ու սկսեց Պաշկի, իր և իրենց հարաբերությունների մասին լերկար պատմություն անել: Ինքը «փողոցն ընկած աղջկերանցիցն ե, վորոնք... և ալն», իսկ նա մի շեկ լեզերով, լավ գարմոն ածող լերիտասարդ ե: Նա հաճախ ացելելիս ե լեզել «հասարակաց տունը» և իր ուրախ բնագործությամբ ու գեղեցիկ շորերով, իր «գարսովի» կոշիկներով ու 15 սուրլիանոց վերաբերություն գրավել ե նատաշայի սիրությը: Այն ժամանակվանից Պաշկեն սկսել ե մշտապես «նիսիա ոպտը-վել»... և լերը հաստատվել ե այդ գերում, սովորություն և գարձըրել իր համար նատաշալից վերցնել այն փողերը, վոր ուրիշ լուրերը առանձին տալիս են լեզել նրան իրեն նվեր, հարբել այդ փողերով և հետո կալ նատաշալին ծեծել... Բայց այդ դեռ վոշինչ, նա սկսել եր նատաշի առաջ «բարձը փոխել», ուրիշ աղջկերանց լեմելից բնկնել...

— Դե զո՞ւ ասա, սրտիս չե՞ր գիպչի այդ... Ուրիշներից յես բնչով եմ պակաս... Նշանակում ե յս նրա համար խաղալիք ելի, ծաղրի առարկա: Ասանք որը իրավունք վերցրէ նապահելից վոր գնամ զրունելու. յեկա նրա մոտ, տեսնեմ իունկնեն հարրած-արաքված նստած ե նրա սենյակում: Ինքն ել,

ինարկի, հարբած եր: Ասում եմ՝ «այս ստոր արարած,—ստոր խաւըբամ...»: Նա վրա պղծավ ինձ ու սկսեց ծեծել. ի՞նչ մազերից քաշ տալ հատակի վրա, ի՞նչ վոտքերի տակ զցել ջարդել... մի սաղ տեղ չթողեց... Յեկ այդ դեռ ելի վոչինչ, շորերս ամրողջովին պատասխեց... Ահա նայիր սրանց: Հիմա յես վճր քարովը տամ գլուխս, ի՞նչպես լերեամ խաղելինն: Բոլորը պատառուեց, շորերս ել, թիկնոցս ել... Բոլորովին նոր եր թիկնոցս. հինգ ուուրի ելի տվել... զիսաշորս ել պոկեց... Ախ, աստված, հիմա յես ի՞նչ անեմ,—վայ տվեց նա հանկարծ վշաացած ու խեղգվող ձայնով:

Վախում եր նույնպես հետզհետեւ սաստեացող քամին... Ատամ-ներս սկսեցին նորից պար զալ: Նա յել կուչ եր գալիս ցրտից և արգեն այնքան մոտեցել եր ինձ, վոր յես կարողանում ելի մթության մեջ տեսնել նրա փալուղ աչքերը:

— Ի՞նչ գարշելի բաներ եք բոլոր տղամարդիկդ,—խոսեց նա նորից: Վոտքերիս տակ կցցելի ձեզ բոլորիդ... Վոր մեկը առաջիս սաստելիս լիներ ձեզանից, լերեսին կթքելի, չեմի խղճա... կեղտնա խողեր... Վնասում եք, վազում ավագ ժամանակ ժամանակ ամանան, և հենց վոր ինձ պես մի անխելքը ձեռքներդ ընկնի, պատրաստ եք իսկուն վոտնատակ տալ... գծուծ անասուններ...

Նրա հայնուանքները շատ պես-պես ելին, բայց ուժ չկար մեջները. վոչ բարկություն և վոչ ատելություն դեպի այդ «գծուծ անասունները»: Ընդհանրապես նրա խոսակցության տոնը շատ հանգիստ եր, բոլորովին չեր համապատասխանում ասածների մաքին և շատ աղքատ եր ձայնի լելեջներով: Բայց և այնպես այդ ինձ վրա ավելի լեր ազգում, քան մինչեւ այդ ժամանակ իմ բած բոլոր հոռետեսական ճառերն ու կարգացած գրքերը: Ազդպես ե. մեռնողի մի ճիզը ավելի բնական ե, ավելի ուժեղ ու ցընցող, քան մահվան ամենագեղարվեստական ու ամենասոսուկ նկարդրությունը:

Սիրոս շատ վատ եր. գուցե ավելի ցրտից, քան թե հարեւանունու ճառերից: Յես ակամալից մի ծանր ու լերկար տնքոց արձակեցի ու ատամներս կրծտացրի:

Հենց նույն վալրկանին լերկու սառը, փոքրիկ ձեռք փաթթվեցին ինձ, և յս լսեցի մի քաղցր ու մեղմ կարեկցությամբ հնչող ձայն.

— Հը, ի՞նչ պատահեց քեզ...

Յես պատրաստ ելի լենթաղրել, վոր այդ հարցը տալիս ե ինձ վոչ թե նատաշան, վորը մի բոպե առաջ բոլոր տղամարդ-

կանց գարշելի արարածներ հայտարարեց ու այնքան հայնոյեց բոլորին,—այլ մի ուրիշը՝ բայց նա նորից սկսեց խոսել. և այս անդամ ավելի շուտ-շուտ:

— Ի՞նչ կա, հը. ոո չես մրտում. սառել ես... այ անպիտան, հստել ես ու լոել. ինչու չելիք ասում, վոր մրտում ես. զե պառկիր, ձգվիր... յս ել կպառկեմ: Հա, այսպես. հիմա գրկիր ինձ, լավ գրկիր: Տեսնում ես, ինչ լավ բան ե. հետո մեջք մեջքի կտանք, կպառկենք, այսպես գիշերը կանցնի.... Յերեկի գինու յս տվել գլուխդ.... Թէ՞ տեղից դուրս են արել.... Բան չկա....

Նա ինձ միթիթարում եր, սիրտ եր տալիս:

Ո՛, յերիցս նզովյալ լինեմ յես: Վարպիսի հեզնություն կյանքի կողմից: Յերեակայեցնք, այդ ժամանակ յս ամենալուրջ կերպով զբաղված եին մարդկության ապագայի խնդրով. յս յերազում եին սոցիալական բարենորդության ապագայի խնդրով. յս յերազում եին մասին. խորը-իմաստուն գրքեր եին կարգում, վորոնց մեջ հայտնած մաքերը, թվում եր, չեն կարողանում լավ ըմբռնել նույնիսկ իրանք հեղինակները....

Յես պատրաստվում եիի մի «խոշոր ներգործող-հասարակական ուժ» դառնալ, և ինձ թվում եր, վոր մասամբ արգեն հասել եմ իմ նպատակին: Համենայն զետք այդ ժամանակները յս յերեակայում եին, վոր յս մի բացառիկ իրավունք ունեմ ապրելու վորպես կյանքի համար մի անհրաժեշտ մեծություն, վորպես պատմության մեջ խոշոր գեր կատարելու ընդունակ մի մարդ....

Յեկ ինձ եր, վոր տաքացնում եր իր մարմնով մի պատիվը ծախած կին, մի անրախտ, ջարդված-տրորված ելակ, վորը վոչ տեղ ունի կյանքում, վոչ զին, և վորին յս գլխի չընկա ոգնելու, այնինչ ինքը ինձ ահա ոգնում եր... իսկ յեթե զլիք յև ընկնեցի, հազիվ թե կարողանայի վորեն կերպ ոգնել նրան....

Ալ, յս կուզեի, վոր այդ բոլորը մի յերադ լիներ, մի անմիտ ու ծանր յերազ....

Բայց, ավաղ.... Անձրեկ ցուրտ կաթիները շարունակում եին թափվել ինձ վրա. կուրծք կպած եր մի ուրիշ տաք կրծքի, յերեսս շոյում եր նրա տաք շնչառությունը.... թեկ փոքր ինչ ողեշունչ, բայց այնքան կենդանարար....

Քամին վոռնում ու հեռում եր, անձրել ծեծում եր նազակի տախտակները, ալիքները հեռում ու աղմկում եին: Մենք կպել եինք միմանց, բայց գարճակ դողում եինք ցրտից: Յեկ այդ իրականություն եր:

Իսկ նատաշան դեռ ինչ-վոր խոսում եր, և այնպիսի քաղցր ու կարելից ձախով, ինչպես միայն կանալք կարող են խոսել: Այդ գգվող ու շոյով խոսքերից կրծքիս տակ մի ինչ-վոր տաքություն առաջացավ, և այդ տաքությունից մի ծանր բան հարվեց ու ընկավ սրտիս վրացից: Այդ ժամանակ արտասուրքի մի հեղեղ թափվեց իմ աչքերից, վորը սրբեց-տարավ այն բոլոր կեղար, վիշտն ու չարությունը, վորով լցվել եր սիրտս այդ գիշերվա ընթացքում....

Իսկ նատաշան խոսում, համոզում եր ինձ:

— Դե, բավական ե, սիրելիս, ինչքան լաց լինես. բավական ե: Ասածով ամեն բան կանցնի, կլավանաս, նոր գործ կգանես.... Բոլորը կանցնի...—և շարունակ համբուրում եր ինձ.... համբուրում եր անթիվ, անհամար ու չերմ համբուրներով....

Այդ առաջին կանացի համբուրներն եին, վոր մատուցանում եր ինձ կյանքը, և, պետք ե ավելացնել, այդ ամենալավ համբուրներն եին իմ կյանքում, վորովնետես բոլոր մնացածները վոչինչ չելին տալիս իմ հոգուն, չնայած վոր շատ ու շատ ավելի թանգ եին նստում ինձ...

— Դե սուս, ասում եմ.... Յես վազը քեզ համար մի տեղ կանեմ, գործ կճարեմ...—կարծես յերազում լսում եին նրա քաղցը 22ունջը:

...Մինչի լուս մենք այդպես զրկված, պառկած եինք:

Իսկ յերբ վոր լուսացավ, դուրս յեկանք նավակի տակից և դնացինք քաղաք.... Հետո բարեկամաբար բաժանվեցինք մի-մանցից...

Նրանից հետո յս այլևս յերեք չեմ պատահել նատաշին, թեև ամբողջ մի կես տարի փնտուել եմ նրան: Քաղաքի բոլոր մոռթ խորշերում... նրան, իմ անհաման նատաշին, վորի հետ յս անցկացրի նկարագրած գիշերը, մի անգամ աշնանը....

Յեթե նա մեռել ե արդեն, վոր շատ լավ կլիներ նրա համար,—թող հանգչեն հանգիստ նրա վոսկորները. իսկ յեթե գեռ կենդանի յեւ խաղաղություն նրա տանջվող հոգուն. և թող յերբեք նրա մեջ չարթնանա իր անկման զիտակցությունը... վորովնետես այդ կլիներ նրա համար մի նոր, ավելորդ ու անպտուղ տանջանք....

ԻՄ ՈՒԳԵԿԻՑԻ

I

Յես նրան պատահեցի Ռդիսսալի նավահանգստում։ Մի յերեք որ շարունակ իմ ուշաղը թխունը գրավում եր նրա թիկնավետ, ամրակազմ կերպարանքը՝ գեղեցիկ միքքով շրջադպած արեւվելյան տիպի գեմքով։ Նա միշտ աչքովս եր ընկնում։ Իս տեսնում էիր թե ինչպես ամբողջ ժամերով կանգնում եր պատճեշի հաստաբարին՝ ձեռնափայտի կոթը բերանը կոփած, ու կարոտագին դիտում նավահանգստի պղառը ջուրը՝ իր սե նշանաւ աչքերով։ Որը տասն անգամ նա մոտովս անց եր կենում անհոգ գառարիաշնիկի քայլվածքով։ Ո՞վ ե... Յես սկսեցի հետեւ նրան։ Նա իել կարծես դիտմամբ, ինձ գրգռելու համար, ավելի ու ավելի հաճախ եր աչքովս ընկնում, և, վերջապես, իս սովորեցի ջոկիլ հեռվից նրա մոդալին, վանդակավոր բաց գունի հագուստը և ու լեվոպական ձեի գլխարկը, նրա ծուլ քայլվածքը և բութ տիսուր հայացքը։ Նա միանգամայն անբացատելի էր այտեղ, նավահանգստում, նավերի ու շոգեշարժների սուլոցների, շղթաների շառաչի, բանվորների աղմուկի, մարդուս ամեն կողմից համակած՝ նավահանգստի կատաղի-ջղալին ժխորի մեջ։ Բոլոր մարդիկ զրադպած եին, հոգնած, բոլորը վազվում, գոռզուստմ, հայնուում ելին փոշու, քրտնքի մեջ... այդ տարրորինսկի կերպարանքն աշխատանքի ժխորում զանդաղ անց ու դարձ եր անում մեռելացին տիսուր գեմքով, անտարբեր գեպի ամեն ինչ...»

Վերջապես, արդեն չորրորդ որը ճաշին իս հանդիպեցի նրան և գնացի, ինչ ել լինի՝ իմանալ թե ով ե։ Նրանից քիչ հեռու տեղավորվելով՝ սկսեցի հաց ու ձեռուկ ուտել և դիտել նրան՝ հնար մտածելով, թե ինչպես անեմ, վոր՝ վնրքան կարելի յե՝ քազաքավարի ձեռվ նրա հետ խոսակցություն բանամ։

Նա կանգնած եր՝ թեիր արկղիկների կուլտին կոթնած և աննպատակ շուրջը մտիկ անելով՝ մատներով թիթիկացնում եղ ձեռնափայտը, կարծես ֆիւտ ածելիս լիներ։

Ինձ, «բոսյակի» շորով՝ բեռնողի թոկը մեջքիս և ածխալին

փոշուց աղտոտված մարդուս դժվար եր նրան—այդ ֆրանտին հետո խոսել տալ Բայց ի զարմանս իմ, իս հետո տեսա, վոր նա ինձնից չի հեռացնում աչքերը, ու նրանք վառվում են մի խիստ անդուրեկան, ագահ՝ անասնական կրակով։ Յես վճռեցի, վոր իմ դիտողությունների առարկան քաղցած ե, և շուրջս արագ մտիկ տալով՝ կամացուկ հարցրի նրանից։

— Քաղցած եք։

Նա ցնցվեց, ագահորեն բաց արավ ամրակազմ, առողջ ատամների կարծես մի հարցուրակ և նույնպես կասկածանքով շուրջը մտիկ արավ։

Մեզ վրա վոչվոք ուշաղը թխուն չեր դարձնում։ Այդ ժամանակ իս ձմերուկ ու ցորեն հացի մի կտոր կոփեցինրա ձեռը։ Նա խեց այդ բոլորը ու անհետացավ՝ նատելով աղբանքի կուլտի խտեռում։ Յերբեմն այնտեղից գուրս եր գալիս նրա գլուխը, յելվոպական գլխարկով, վորը զրված եր ծոծրակին և ծածկում եր քրտնքուր թուխ ճակատը։ Նրա գեմքը փայլում եր բաց բերան ժպիտով, և նա, չգիտեմ ինչու, շուտ-շուտ աչքերով եր անում ինձ՝ վոչ մի վայրկյան չգաղարելով ծամելուց։ Յես նրան նշան արի՝ սպասել ինձ, զնացի միս գնելու, գնեցի, բերի, ավի նրան և կանգնեցի արկղների մոտ այնպես, վոր բալորովին ծածկեցի իմ խեղճ ֆրանտին կողմնակի հայացքներից։ Մինչև այդ նա ուտում ու անդպար գիշատիչ կերպով շուրջն եր մտիկ անում, ասես վախում եր, վոր պատառը կիսեն, ալժմ նա սկսեց հանգիստ ուտել, բայց ելի այնպես շտապ ու ազանաբար, վոր իս ցավ ելի զգում այդ սովալլուկ մարդուն նայելիս, ուստի մեջքս դեպի նա դարձրի։

— Բлагոձարу! * (շնորհակալ եմ)։ շատ շնորհակալ եմ։ — Նա թափահարեց ուսը, ապա ձեռս ել բոնեց ու սկսեց անողորմաբար թափահարել։

Հինգ րոպեկից հետո նա արդեն ինձ պատմում եր, թե ով ե։ Վրացի, իշխան Շաքրո Պտածեն, Յութայիսի հարուստ կալվածատիրոջ միակ զավակ, կովկասյան լերկաթուզու կալարաններից մեկում գրասենեկալին ծառալող, ապրելիս և լինում մի լիներով հետ։ Այդ ընկերը հանկարծ անհետանում ե՝ հափշտակելով տանելով իր հետ իշխան Շաքրոյի փողերն ու արժեքավոր իրեղները, և ահա իշխանը հետամուտ ե՝ լինում նրան։ Մի կերպ

* Այս սուբրեն խոսում եր կոպիտ արտասանությամբ։

պատահմամբ նա խմանում է, վոր ընկերը տոմսակ և վերցրած յեղել Բաթում գնալու. իշխան Շաքրոն նույնպես ուղևորվում է այնտեղ: Բայց Բաթումում յերևում է, վոր ընկերը գնացել և Ողեսսա: Այն ժամանակ իշխան Շաքրոն վերցնում է ինչ-վոր վանո Սվանիձելի անցաթուղթը,—մի սափրիչի,—նույնպես ընկեր, բայց նշաններով իրան վոչ նման, ու ճանապարհ և ընկնում Ողեսսա: Այնտեղ նա հայտնում է վոստիկանութիւնը գողության մասին, նրան խոստանում են, թե կդանեն զողին, նա սպասում է յերկու շաբաթ, փողերը վերջացնում, և ահա արգեն յերկորդ որն եր, վոր բերանը պատառ չեր զրկի:

Յես լուսմ ելի նրա հայնոյանքների հետ խառն պատմությունը, նայում նրան, հավատում, և խղճում ելի աղային: Նա դեռ տղա յեր, քսան տարին մտած, բայց միամմությանը նայած նրան կարելի յեր ավելի փոքր համարել: Նա հաճախ և խորին զայրութով հիշում եր այն սերտ բարեկամության մասին, վորը կապում եր նրան գող ընկերոջ հետ, վորը զողացել եր այնպիսի իրեր, վորոնց համար Շաքրուի դաժան հայրը հավանորեն կմորթեր իր վորդուն «խանչալով», յեթե վորդին նրանց չգտնի: Յես միտք արի և տեսա, վոր յեթե չոգնեմ այդ տղային, անկուշտ քաղաքը նրան կկլանի: Յես գիտեի, թե յերեմն ինչ չնշին դիպվածներ են մարդկանց մղում բռույակների դասակարգի մեջ, իսկ ներկա պարագայում իշխան Շաքրուի համար ամեն շանսեր կային ընկնելու այդ հարգելի, բայց չճարգվող դասը: Մեջս ցանկություն զարթեց նրան ոգներու: Յես Շաքրուին առաջարկեցի գնալ և վոստիկանապետից թուղթ խնդրել, նա կակացեց և հայտնեց, վոր չի գնալ: Ինչո՞ւ: Բանից գուրս յեկավ, վոր նա չի տվել իր բնակած համարների փողը, իսկ յերը նրանից պահանջել են, նա մեկին իսկել ե, հետո թագնիկը և այժմ արդարացի կերպով յենթագրում ե, վոր վոստիկանությունը նրա բանը բուրդ կանի այդ փողը չտալու և հարգածի համար. հա, իդեալ, նա շատ ել լավ չի հիշում—մի հարգման հասցերի, թե յերկու, յերեք, թե չորս:

Բանը գժվարանում եր: Յես վճռեցի անշքան աշխատել մինչև վոր բավական փող վաստակեմ նրա համար Բաթում գնալու, բայց, ավագ, բանից գուրս յեկավ, վոր այդ իսկի յել շուտ գլուխ գալու բան չի, վորովհետեւ սովալալուկ Շաքրոն ուտում եր յերեք մարգու չափ և ավելի:

Ագդ ժամանակ «սովլախների» մեծ հոսանքի շնորհիվ նավահանգստում որպարձերը շատ ցածր ելին, և ություն կողեկ վաս-

տակեց յերկուսս վաթսունն ուտում ելինք: Բացի զբանից, գեռ աինչև իշխանին հանդիպել յես վորոշել ելի Ղրիմ գնալ, ուտոտի և չելի ուղում յերկար մնալ Ողեսսա: Այն ժամանակ յես իշխան Շաքրուին առաջարկեցի ինձ հետ վոտով գնալ այսպիսի պայմաններով. յեթե յես նրա հետ Թիֆլիս գնացող ուղեկից չգտնեմ, այն ժամանակ ինքս տեղ կհասցնեմ, իսկ յեթե գտնեմ, այդ դեպքում մենք իրար հրաժեշտ կտանք:

Իշխանը նայեց իր պճրուն մուճակներին, գլխարկին, անդրավարտիքին, ձեռքը քաեց կուռափկին, միքիչ միտք արավի, միքանի անգամ հառաչ քաշեց ու, վերջապես, համաձայնեց: Յեկանապարհ միասին վոտով մանապարհ ընկանք Ողեսսալից Թիֆլիս:

II

Յերբ հասանք Խերսոն, յես ճանաչում ելի իմ ուղեկցին իբրև միամիտ-վայրենի, չափազանց անզարգացած, ուրախ մի տղայի—յերբ նա կուշտ եր լինում, լրված—յերբ քաղցած եր, ինչպես ուժեղ և պարզածիտ մի կենդանի:

Ճանապարհին նա ինձ պատմում եր Կովկասի մասին, կալվածատեր վրացիների կյանքի, նրանց գվարձությունների և գեպի գլուղացիներն ունեցած հարաբերությունների մասին: Նրա զրուցները հետաքրքրական ելին, ինքնուրուցն, գեղեցիկ, սակայն պատմողին նկարում ելին իմ առջև չափազանց վոչ գովելի կողմից: Պատմում եր նա, որինակ, այսպիսի մի գեպք.

Մի հարուստ իշխանի մոտ նրա հարկանները քեփի հավաքվեցին. գինի խմեցին, չուրեկ կերան ու խորոված, կերան լավաշ ու փլավ, և հետո իշխանը հյուրերին տարավ գոմբ: Զիերը թամբեցին: Իշխանն իր համար վերցրեց ամենալավը և քշեց դաշտի միջով: Կրակու ձի յեր: Հյուրերը գովում ելին նրա վայելչագեղություններն ու արագավագությունը: Իշխանը նորից ե ոլանում, բայց հանկարծ մի գլուղացի սպիտակ ձիու վրա նստած գաշտն ե գուրս թոշում և իշխանի առաջը կտրում,—կտրում ե ու... հպարտ ծիծաղում: Իշխանն ամոթահարվում է հյուրերի առջև... խստությամբ կիսում է հոնքերը, ձեռքի նշանով մոտ կանչում գլուղացուն, և յերբ նա մոտենում է, այն ժամանակ իշխանը սրի մի հարգածով կտրում է նրա գլուխը և ատրճանակն արձակելով ձիու ականջի մեջ՝ սպանում է ձին, իսկ հետո իշխանությանը հայտնեց իր արածը: Յեկ նրան տաժանակիր աշխատանքի ցեն գատապարտում...

Շաքրոն այդ հազրութեամ և ինձ իշխանին ափսոսող տանօվ։ Յես փորձում եմ ապացուցել նրան, վոր խոճալու բան չկա, սահան նա խրառական իշխանակով ասում ե ինձ.

— Իշխաններ քիչ կան, գուշացիներ՝ շատ։ Մի գուշացու համար չի կարելի գատապարտել իշխաններին։ Ինչացու յէ գուշացին։ Այ, — և Շաքրոն ցուց ե տալիս ինձ մի գունտ հող, — իսկ իշխանը — ասադ ե։

Մենք վիճում ենք, և նա բարկանում ե։ Յերբ նա բարկանում ե, ատամները բաց ե անում գալիք նման, ու յերեսը սրվում ե։

— Լոիր, Մաքսիմ։ Դու չես ճանաչում կովկասյան կյանքը, — գոչում ե նա։

Իմ պատճառաբանութիւններն անզոր ելին նրա իրասածության առաջ, և այն, ինչ վոր ինձ համար պարզ եր, նրա համար ծիծաղելի չեր։ Յերբ յես իմ հայացքների գերազանցության ապացուցներով նրան այնպիսի գրության մեջ ելի գցում, վոր նա չեր կարող ինձ հակառակել նա, առանց տարակուսելու, ասում եր ինձ։

— Գնա կովկաս, ապրեր այնտեղ կտեսնեա, վոր յես ճշմարիտ եմ ասում։ Ամենքն այդպիս են անում, նշանակում ե՝ այդպիս ել պետք ե։

— Ինչու յես պիտի քեզ հավատամ, քանի վոր մենակ դու յես ասում՝ այս այսպիս չե, իսկ հազարավորներն ասում են՝ այսպիս ե։

Այն ժամանակ յես լրում ելի՝ հասկանալով, վոր պիտք ե գնչ թե խոսքերով, այլ փաստերով առարկել նրան, այդ մարդին, վորը հավատացած ե, թե կյանքն ինչպիս վոր կա, լիսկին որինական ե ու արդարացի։ Յես լրում ելի, իսկ նա հիացմունքով շրթունքները չիշխացնելով խոսում եր կովկասյան կյանքի մասին, վորը լի իս կրակով ու ուրունությամբ։ Այս զրուցներն ինձ հետաքրքրելով ու գրավելով՝ միննուն ժամանակ վրդովում ու կատաղեցնում ելին իրենց վարագությամբ, հարստությանը և բիրտ ուժին յերկրագեկելով։ Մի անգամ յես հարցրի նրանից թե նա գիտի արդյոք Քրիստոսի վարդապետությանը։

— Իհարկե, — ուսերը թոթվելով պատասխանեց նա։

Բայց յերբ հարցուվորձ արի, բանից գուրս լեկավ, վոր նա այսքանը գիտի. մի Քրիստոս ե յեղել, վոր հրեական որենքների գեմ ե գուրս յեղել, և հրեաները դրա համար խաչել են նրան խաչի վրա։ Բայց նա աստվածած ելու ուստի և խաչ վրա մեռել, այլ համբարձել ե յերկինք և այն ժամանակ մարդկանց ավել կյանքի նոր որենք…

— Ինչ որենք, — հարցրի յես։

Նա նայեց վրաս ծաղրական յերկմառությամբ և հարցրեց.

— Դու քրիստոնյան յես։ Հը։ Յես ել եմ քրիստոնյան Աշխարհիս վրա համարա ամենքը քրիստոնյան յեն։ Դեհ ել ինչ ես հարցնում ։ Տեսնում ես, թե ինչպիս են ապրում ամենքը... Հենց դա յել Քրիստոսի որենքն ե վոր կա։

Յես, գրգովված, սկսեցի նրան պատմել Քրիստոսի կյանքի մասին։ Նա սկզբում ուշադրությամբ լսում եր, հետո այդ ուշադրությունն սկսեց հետզհետե թուլանալ և վերջապես վերջացավ հորանջով։

Տեսներով, վոր նրա սիրան ինձ չի լսում, յես սկսեցի նորից դիմել նրա խելքին և խոսել փոխադարձ ոգնության ոգտավետության, գիտության ոգտավետության, որինավորության ոգտավետության, ոգտավետության, շարունակ ոգտավետության մասին... իմ պատճառաբանությունները վշրջում ելին՝ դիպչելով նրա աշխարհասկացողության պատին։

— Ով ուժիղ ե, նա ինքն իր որենքն ե, նրան պետք չի սովորել նա կույր-կույր ել կդանի իր ճամպան, — ծուլորեն առարկեց ինձ իշխան Շաքրոն։

Նա կարողանում եր ինքն իրան հավատարիմ մնալ։ Դա մեջս հարգանք եր զարթեցնում գեափի նա. բայց նա վայրենի յեր, խրտասիրտ, և յես զգում ելի, վոր յերբեմն մեջս ատելություն եր բոնվիւմ գեափի Շաքրոն։ Սական հուզաս չելի կորցնում մեր մեջ շփման կետ և հող գտնելու, վորի վրա յերկուս ել կարողանաւ յինք միանալ և իրար հասկանալ։

Մենք անցանք Պերկոպը և մոտենում ելինք Յալթային։ Յես յերազում ելի Ղրիմի հարավալին ափը, իշխանը ատամների արանքով իր վիրական յերգերը յերգելով՝ մոալ եր, Բոլոր փողս վերջացավ, և աշխատելու տեղ ել չկար տակավին։ Մենք շտապում ելինք Թեոդոսիա, ուր այդ ժամանակ սկավում ելին նավահանգիստը շինելու աշխատանքները։

Իշխանն ինձ ասում եր, վոր նա յել և բանելու, և վոր, փող աշխատելով, մենք ծովով կզնանք Բաթում։ Բաթումում նա շատ ժամաթիւներ ունի, և անմիջապես ինձ համար գոնապանի կամ պահապանի տեղ կդանի։ Նա խփում եր ուսիս և լեզուն քաղցր ծրփ-ծրփացնելով՝ հովանավորաբար ասում։

— Յես քեզ համար այնպիսի կյանք ստեղծեմ, վոր ծծը, ծծը։ Գինի խմես — ինչքան ուզես, վոչխարի միս — ինչքան ուզես։

Կպսակվես վիրուհու հետ, մի հաստիկ վիրուհու, ծծը, ծծը, ծծը... նա քեզ համար լավաշ կթխի, յերեխաներ կըերի, շատ յերեխաներ, ծծը, ծծը:

Այդ «ծծը, ծծը»-ն առաջ ինձ ղարմացնում եր, ապա սկսեց գրգռել հետո արդեն ինձ հասցնում եր թախծալի կատաղության: Ռուսաստանում այդպիսի հնչունով խողերին են կանչում, իսկ Կովկասում նրանով արտահայտում են հիացք, ափսոսանք, բավականություն, վիշտ:

Շաքրոն արդեն խիստ գլուխել եր իր մողավին, գիեստը, և նրա մուճակները ճաքճաքվել ելին շատ տեղ: Զեռնափայտն ու չեղրոպական գլխարկը ծախել ելինք յերսոնում: Այդ գլխարկի տեղը նա գնել եր յերկաթուղարին աստիճանավորի մի հին քուրաֆկա:

Յերբ նա առաջին անգամ գլխին դրավ այն,—սաստիկ ծուռ դրավ,—ինձնից հարցրեց.

— Սազնում հ: Գեղեցիկ ե:

III

Յեկ ահա Դրիմ ենք: Անցանք Սիմֆերոպոլը և ուղղվեցինք դեպի Յալթա:

Յես գնում ելի համբ սքանչանքի մեջ հոգի այդ հրաշալի կտորի բնության առաջ, հողի, վորին ամեն կորմից փաղաքը ունի ծովը: Իշխանը հառաջում եր, վշտանում և շուրջը տիտուր նալ-գածքներ ցցելով՝ փորձում եր լցնել իր դատարկ ստամոքսն ինչ վոր տարորինակ հատապտուղներով: Նրանց սննդարար հատկություններին ծանոթ լինելը հաջող յելքի յեր հասցնում վոչ միշտ, և հաճախ նու չար լումորով առում եր ինձ.

— Յեթե փորս տակն ու վրա անի, ի՞նչպես պետք և շարունակեմ ճանապարհու, հը, ասա, ի՞նչպես:

Մի բան վաստակելու ճնարավորություն չեր ներկայանում, և մենք չունենալով վոչ մի գրոշ հացի փող՝ սնվում ելինք մրգերով և ապագայի վրա կապած հույսերով: Իսկ իշխան Շաքրոն սկսել եր արգեն ինձ հանդիմանել ծուլության և, ինչպն եր ասում, «բերանաբացության» համար: Նա ընդհանրապես զարձել եր անտառելի, բայց ավելի շատ նեղացնում եր ինձ իր զբուցներով իր առասպելական ախորժակի մասին: Բանից դուրս ե գալիս, վոր նա ժամը 12-ին նախաճաշելով «մի զառնուկ», յերեք շիշ գինի, ժամը 2-ին կարող եր առանց մի առանձին դրժ-

վարության ճաշին ուտել յերեք ափսե ինչ-վոր «չախոխբիլի», կամ «չերթմա», մի ամբողջ թավա փլավ, մի ամբողջ շամփուր խորոված, «ինչքան ուղես՝ տողմա» և գեռ ելի կովկասյան շատ խորտիկներ, և այդ ժամանակ կիսմեր գինի—«ինչքան քեֆը տար»: Նա ամբողջ որերով պատճում եր ինձ իր խոհանոցագիտական հակումների և հմտությունների մասին, —պատճում եր՝ շրթունքները չմիացնելով, վառվող աչքերով, ատամները բաց անելով ու կրծտելով, հնչուն կերպով ներու քաշելով ու կուլ տալով քաղցած թուքը, վոր առատությամբ ցայտում եր՝ նրա պերճախոս շրթունքներից:

Մի անգամ Յալթայի մոտ ինձ վարձեցին մրգեղենի մի այդի կտրտած ձյուղերից մաքրելու. յես որավարձս նախորդք առա և ամբողջ հիսուն կոպեկի գնեցի հաց ու միս: Յերբ գնածս բերի, այգեպանն ինձ կանչեց, և յես գնացի՝ այդ գնած բաները հանձնելով Շաքրութին, վորը հրաժարվել եր աշխատանքից, պատճառարանելով. թե գլխացավ ունի: Մի ժամից հետո վերադառնալով յես համոզվեցի, վոր Շաքրոն իր ախորժակի մասին խոսելիս՝ դուրս չեր յեկել ճշմարտության սահմանից. իմ գնածից վոչ մի փշրանք չեր մնացել: Դա ընկերական վարձունք չեր, բայց յես սուս արի իդժրախառություն իմ, ինչպես յերեաց հետագալում:

Շաքրոն նկատեց իմ լոռությունը և նրանից սպավեց իր ձևով: Այդ ժամանակից սկսվեց մի տեսակ զարմանալի անմիտ բան: Յես աշխատում ելի, իսկ նա զանազան պատճառաբանություններով հրաժարվում եր բանից, ուտում-խմում եր ու ինձ աշխատել ստիլում: Ինձ համար ծիծաղելի և ցավալի յեր նայել նրան, այդ առողջ տղամարդին, վոր ընչաքաղցությամբ մտիկ եր անում ինձ, յերբ յես գործս վերջացրած՝ հոգնած վերադառնում ելի նրա մոտ, վորը մի շվաք տեղ սպատելիս եր ինում ինձ: Բայց ավելի վշտալի ու վիրավորական եր տեսնել, վոր նա ծիծաղում եր վրաս այն պատճառով, վոր յես բանում եմ: Նա ծիծաղում եր, վորով-հետեւ սովորել եր վորովմություն խնդրել, և վորովինետեւ յես նրա աչքում մի անկենդան խրավիլակ ելի: Յերբ նա սկսեց վորով-մություն հավաքել սկզբում քաշվում եր ինձնից, բայց նետու, յերբ մոտենում ելինք մի թաթարական գլուղի, նա սկսում եր աչքիս առաջ պատրաստիկ մուրալու: Դրա համար նա հենվում եր փայտին և գոտը գետնով քաշ տալիս, ասես թե ցավելիս լիներ, իմանալով, վոր ժամատ թաթարները առողջ աղամարդին վորորմություն չեն տալ: Յես վիճում ելի նրա հետ, ցուց տալիս նրա այդպիսի զրադարձունքի ամոթալիությունը... նա ծիծաղում եր:

— Յես չեմ կարողանում բանել—կարճ առարկում եր նա: Նրան վողործություն քիչ ելին տալիս: Յես այդ ժամանակ սկսել եմ հիմանդանալ: Ճանապարհը որեցոր զանոնում եր ավելի դժվար և իմ հարաբերությունները Շաքրոյի հետ ավելի ծանր: Նա այժմ արդեն խիստ պահանջում եր, վոր յես նրան կերակրեմ:

— Դու ինձ տանում ես: Տար: Միթե յես կարող եմ վոտով այդքան հեռու տեղ գնալ, հը՝, յես սովոր չեմ: Յես գրանից կարող եմ մեռնել: Ի՞նչ ես ինձչարչարում, սպանում: Յես վոր մեռնեմ, վոնց կլինի: Մերս լաց կլինի, հերս լաց կլինի, ընկերներս լաց կլինեն, եղ ինչքան արցունք և անում համ:

Յես այսպիսի խոսքեր եմ լուսմ, բայց չելի բարկանում: Այդ ժամանակ սկսել եր մեջս ծագել մի տարութինակ միտք, վոր ինձ հարկադրում եր դիմանալ այդ բոլորին: Պատահում եր—նաքնած և լինում, իսկ յես նրա կողքին նստած, դիտելով նրա հանդիսա, անշարժ դեմքը, կրկնում եմ ինքս ինձ, կարծես մի բան գուշակելով.

— Իմ ուղեկիցը... ուղեկիցս...

Յեկ գիտակցությանս մեջ յերբեմն ծագում եր այն միտքը, թե Շաքրոն միայն ոգտավում եր իր իրավունքից, յերբ այնպես վստահ ու համարձակ պահանջում ե ինձնից ոգնություն ու խնամք: Այդ պահանջի մեջ կար բնավորություն, կար ուժ: Նա ինձ հարըստահարում եր, յես նրան յենթարկվում ելի և ուսումնասիրում, հետեւում նրա դեմքի լուրաքանչյուր դողոցին, աշխատելով պատկերացնել, թե ուրիշ անձնավորություն թարանելու այդ պրոցեսսի մեջ ուր և ինչի վրա կանգ կառնի նա: Իսկ նա իրեն շարավ եր զգում. յերգում եր, քնում ու ծիծաղում վրաս, յերբ քեփը տալիս եր: Յերբեմն իրարից բաժանվում ելինք յերկու-յերեք ուրով, գնում զանազան կողմեր. յես նրան հաց ու փող ելի տալիս, յեթե լինում եր, և ասում, թե վորտեղ ինձ սպասի: Յերբ կրկին հանդիպում ելինք, այն ժամանակ նա, վոր ինձ ճանապարհ դրած եր ինում կասկածանքով ու տխուր չարությամբ, դիմավորում եր սաստիկ ուրախ, հրձագած և միշտ ասում եր ծիծաղելով.

— Յես կարծում եմ, թե դու ինձ մենակ թողել, փախել ես: Հա, հա, հա...

Յես նրան ուտելու բան ելի տալիս, պատմում ելի իմ տեսած գեղեցիկ տեղերի մասին, և մի անգամ Բախչա-Սարալի մասին խոսելիս, լուսալ պատմեցի Պուշկինի մասին և ասացի նրա վոտանավորներից: Այդ բոլորը վոչ մի տպավորություն չարագ վրան:

— Ե՛, վոտանավորներ: Դա յերգեր են և վոչ թե վոտանավորներ: Յես մի մարդ եմ ճանաչում, վրացի, Մատո Լեժավա, նա յեր յերգ ասում է: Ա՛յ, զա յերգեր ելին... վոր յերգում եր—ալ, ալ, ալ... բարձր... շատ բարձր եր յերգում: Կասես թե կոկորդը խառնջորում են խանչալով... Նա մի գիննվաճառ մորթեց, հիմի Սիրիր և գնացած...

Ամեն մի նրա մոտ վերագանակիս յես ավելի ու ավելի ելի ընկնում նրա աչքում, և նա չեր կարողանում այդ թագցնել ինձնից:

Գործներս շատ վատ եր: Յես հազեվ ելի հնարավորություն գտնում մի կամ մեկ ու կես ոուրի աշխատել շաբաթական, և ինքնըստինքան հասկանալի յե, վոր այդ ավելի քան քիչ եր յերկուսիս համար: Շաքրոյի մուրալը չեր նպաստում անունդը տընտեսելուն. նրա ստամոքսը մի փոքր անդռնող եր, վոր կլանում եր անխտիր ամեն ինչ—խաղող, սեխ, աղ զրած ձուկ, հաց, չորացրած մրգեր—և ժամանակի ընթացքում նա կարծես ավելի յեր մեծանում ծափալով և ավելի ու ավելի զոհեր պահանջում:

Շաքրոն սկսեց շտապեցնել ինձ Ղրիմից զուրս գալու, պատճառաբանորեն հայտնելով ինձ, վոր շուտով արդեն աշունը վրակնասնի, իսկ ճանապարհ գեռ շատ կա: Մյուս կողմից ել յես նայել վերջացընել ելի Ղրիմի այդ մասը, և մենք ճանապարհվեցինք գեպի թերզոսիա այն հուսով, վոր «միքանի շահի կցենք ճանկեներս», վորից ելի զուրկ ելինք: Նորից պետք և սնվելինք մրգերով ու ապագայի հուսով...

Խեղճ ապագա: Նրա վրա զրած մարդկալին հուսերի շատությունից նա կորցնում է համարյա իր բոլոր հմայքը, հենց վոր ներկա յե զառնում:

Ալուշտալից քսան վերստ հեռանալով՝ մենք կանգ առանք գիշերելու: Յես Շաքրոյին համողել ելի ծովափով զնար թե են ալուշտելու: Յես յերգություն համողել ելի ծովափով զնար թե են ալուշտելու: Ելուսինը զուրս եր զալիս: Սոսիների ճամկավոր սաղարթից սավերներ ելին ընկնում և սողում քարերի վրայով: Մի ինչ-վարթաչուն յերգում եր ըմբաս ու զիլ: Նրա արծաթահնչուն դալլալ յիշները հալչում ելին ալիքների մեջ ու փաղաքչող վշշոցով

լոգած ողի մեջ, և յերբ նրանք անհետացան, լսվեց մի միջաւոր ջղակին ճռճողոցը: Խարուէկը զվարթ այրվում եր, և նրա կը ակլ թվում եր կարմիր ու գեղին ծաղիկների մի լոցավառ փունչ: Նա յել եր ստվերներ առաջացնում, և այդ ստվերներն ուրախութախ ցատկում ելին մեր շուրջը՝ ասես լուսնի դալուկ ստվերների առաջ պարծենալով իրանց աշխուժութիւնը: Ծովի լայն հորիզոնն ամայի յեր, նրանից վեր յերկինքն անամպ, և իս ինձ աշխարհիս մի ծալրումն ելի զգում՝ դիտելիս տարածությունը՝ մարդու հոգին դիութող այդ առեղծվածը... Գիշերլա փառահեղ զեղեցկութիւնը հոգեգմայլ՝ յս առես հալչում ելի գուշների, ձախների ու հոտերի զարմանալի ներդաշնակութիւնն մեջ, ինչ-զոր մեծ բանի մոտ լինելու յերկշոտ զգացումով լցվում եր հոգիս, և սիրոս թպրտալով թալիանում եր կյանքի վայելքով...

Հանկարծ Շաքրոն բարձրածայն քրքջաց:

— Հա, հա, հա... Ինչ ախմար կերպարանք ունես: Աւզուկի վոչխարի: Ա, հա, հա, հա...

Յես վախեց, կարծես թե զիլիս հանկարծակի վորոտը թնդաց: Բայց այդ ավելի վատ եր: Դա ծիծաղելի յեր, այս, բայց բնչպիս վիրափորական եր... Նա, Շաքրոն, լալիս եր ծիծաղից, յս ինձ լալու պատրաստ ելի զգում ուրիշ պատճառով: Կոկորդումս կարծես քար կար, յս չելի կարողանում խոսել և վայրագ աշքերով նրան ելի նայում, զորով ավելի ելի սաստկացնում նրա ծիծաղը: Նա, փորը բոնած, թավալվում եր գետնի վրալով. յս ել գեռ չելի կարողանում ինքս ինձ հավաքել նրա հասցրած վիրափորանքից... Ինձ խիստ ծանր վիրափորանք եր հասցված, և այն քիչ մարդիկ, փորոնք հուսով են, զոր կհասկանան այդ. — Փորովհետեւ գուցե իրանք զգացել են այդորինակ մի բան, — նրանք նորից կիմրզգան իրանց հոգում այդ ծանրությունը:

Վերջ տուր, — կատաղած զոռացի յս:

Նա վախեց, ցնցվեց, բայց զեռ ելի չեր կարողանում իրան զապել. ծիծաղի բոնկումները զեռ ելի բոնում ելին նրան, նա ուռցնում եր թշերը, աչքերը չուռմ և հանկարծ նորից փոթկացնում: Այն ժամանակ յս վեր կացա ու հեռացա նրանից: Յես յերկար գնում ելի առանց մտածելու, համարյա առանց գիտակցելու, մենակութիւն և վիրափորանքի այրող թույնով լցված: Յես գրկում ելի ամբողջ բնութիւնը և լուս, ամբողջ հոգով սերս ելի հալունում նրան, վառ սերը մի մարդու, փորը միքիչ բանաստեղծ ե... իսկ բնութիւնը, հանձին Շաքրուի, քրքջում եր վրաս հա-

փըշտակութիւնս համար: Յես հեռու կգնալի մեղաղըական վճիռ կայացնելում բնութիւն, Շաքրուի և կյանքի բոլոր կարգերի դեմ, սակայն յտակեցու արագ քալիեր լավեցին:

Մի բարկանար, — ամոթահարված արտասանեց Շաքրոն կամաց դիազելով ուսիս: — Դու աղոթում եիր: Յես չգիտելի: Յես ինքս չեմ աղոթում...

Նա խոսում եր չարություն արած յերեխալի յերկչոտ տոնով: և յս, չնայելով հուզմունքիս, չկարողացա չտեսնել նրա խղճալի կերպարանքը՝ շփոթմունքից ու վախից ծիծաղելի կերպով ծըռմը ըսկած:

— Յես ալիս քեզ ձեռք չեմ տալ: Ճշմարիտ: Յերբեք:

Նա բացասարար թափահարեց գլուխիր:

— Յես տեսնում եմ, զոր զու խոնարհ ես: Բանում ես: Ինձ չեմ ստիպում: Մտածում եմ — ինչո՞ւ: Ուրեմն հիմար ե նա վոչխարի պես . . .

Այդ նա ինձ միսիթարում եր: Այդ նա ներողություն եր խնդրում ինձնից: Ինարկե, այգափիսի միսիթարանքներից ու թուղություն հայցելուց հետո ինձ գոչինչ չեր մնում անելու, յեթե վոչներել նրան վոչ միայն անցյալը, այլ և ապագան:

Կես ժամից հետո նա խորը քնած եր, խկ յս նստած ելի նրա կողքին ու նայում ելի նրան: Քնած ժամանակ ուժեղ մարդ անգամ անպաշտպան ու անողնական և թվում, խկ Շաքրոն արգահատելի յեր: Նրա հաստ շրթունքները կիսարաց յեին և կիտած հոնքերի հետ միասին պատկերացնում ելին նրա զեմքին զարմանքի զուտ-մանկական մի արտահայտություն: Շնչում եր նա համաշափ, հանգիստ, բայց յերբեմն զեզերում ու զառանցում եր վրացերեն ամբողջ գարձագածքներ ասելով՝ աղաչանքով ու փութ-կոտ: Մեր շուրջը թագավորում եր այն լարված խաղաղությունը՝ վորից միշտ մի բան ես սպասում, և փորը յեթե կարողանար յերկար շարունակիել մարդին խելքից կհաներ իր կատարյալ անդորրությամբ: Ալիքների մեղմ ճողիկունը չեր հասնում մեզ, մենք գտնում ելինք մի փոսում, փորը պատած եր կպչուն մացաներով, կարծես քարացած կենդանու բրգբրգոտ քերան լիներ: Յես մտիկ ելի անում Շաքրուին ու մտածում: «Սա իմ ուղեկիցն ե... Յես կարող եմ սրան այստեղ թողնել բայց չեմ կարող նրանից հեռանալ, փորովհետեւ նրա անունը — լեզիոն ե... Սա իմ ամբողջ կլանքի ուղեկիցն ե... Նա մինչեւ կերեղման կուղեկցի ինձ»...

IV

Թեոդոսիան իդերեւ հանեց մեր հուշերը՝ Յերբ մենք տեղ՝ հասանք, այնաեղ կար մոտ չորս հարյուր մարդ՝ մեզ պիս գործի պատուիս և նույնպես ստիպված բավականանալ նավամատուցին պատճեղ շինելուն հանդիսաւես լինելու գերով՝ Աշխատում ելին թուրքեր, հույսեր, վրացիներ, սմոլենսկցիներ, պոլտավցիներ։ Ամենուրեք—թե քաղաքում, և թե շուրջը—խմբերով շրջում ելին «սովորակների» գժգույն, չարչարված կերպարանքներ, և գալուրի պաշտամքով դես-դեն ելին թափառում ազնվան ու տավրիկան բոստակները։

Տեսնելով վոր արտեղ վոչենչ չկա, և վոր պատճեղ կամենում են շինել առանց մեզ, մենք գնացինք կերչ։

Իմ ուղեկիցը կատարում եր իր խոսքը և ինձ ձեռք չեր տալիս. բայց նա սաստիկ սովում եր և մեկի ուտելը տեսնելիս՝ ուղղակի գալիք նման կրծտում եր ատամները՝ ինձ սարսափեցնելով կանազան կերակուրների տեսակների նկարագրությամբ, կերակուրներ, վոր նա պատրաստ եր կլանելու։ Միքանի ժամանակից ի վեր նա սկսել եր հիշել կանանց մասին։ Սկզբում հարևանցիորեն, ափսոսանքի հառաջանքներով, ապա հաճախ, «արենցի մարդու» ընչաքաղց ժպիտներով. նա, վերջապես, հառավ այն աստիճանի, վոր այլևս չեր կարող չառել ինձ մի վարեցի գործնական փիլիսոփայական կեղաստություն այս կամ այն հանգամանքի առիթով, յերբ մոտովն անցնում եր կանանց մեռին պատկանող վորեւ անձնավորություն, ինչ տարիք և ինչ արտաքին ել ունենար։ Նա ճառում եր կանանց մասին այնպես ազատ, առարկալի այնպիսի ճանաչողությամբ և նայում եր նրանց վրա այնպիսի զարմանալի բաց տեսակետով, վով յես միայն թքուում եմի... Մի անգամ փորձեցի նրան ապացուցել, վոր կիշել նրանից վատ արարած չի, բայց տեսնելով, վոր նա վոչ միայն վերավորում և ինձնից իմ հայացքների համար, այլև պատրաստ և կատաղության հասնել այն ստորացման համար, վորին, նրա կարծիքով, յես ինթարկում եմի իրան, —թողի փորձերս մինչև այն ժամանակ, երբ նա կուշտ կլինի։

Մենք կերչ ելինք գնում այլես վոչ թե ծովափով, այլ գաշտափարով՝ ճանապարհը կարձելու գիտումով, և մեր պարկում կար ընդամենը մերք զրպանքանոց մի գարի բոքոն, վոր գնել ելինք մի թաթարից մեր վերջին շահանոցով։ Շաքրով՝ զուշերում հաց մուրալու փորձերը վոչ մի հետեանքի չհասցըն։ ա-

մենուրեք կարճ պատասխանում ելին. «Զեղպեսները շատ կան»... Այդ մեծագույն ճշմարտություն եր. իրավ, այդ ծանր տարին անշափ շատ ելին մի կտոր հաց վորոնողները։

Իմ ուղեկիցը հանդուրժել չեր կարող «սովորակներին», —վորումություն ժողովելու մեջ իր մրցակիցներին։ Նրա կենսական ուժերի պահեստը՝ չնայելով ճանապարհի գդվարության և վատ անգառության թուց եր տալիս նրան ընդունելու այնպիսի մաշված և խղճալի տեսք, վորով մուրացկաններն, արդարեւ, կարող ելին պարծենալ վորպես մի տեսակ կատարելությամբ, և նա նրանց գեռ հեռվից տեսնելիս՝ ասում եր.

— Եկի գալիս են: Թյու, թյու: Ի՞նչ են զիջում: Ի՞նչ են մանգալիս: Միթե Ռուսաստանը նեղ է: Չեմ հասկանում: Ռուսաստանի ժողովուրդը շատ տիմար է:

Ցել յերբ յես բացարում ելի նրան այն պատճառները՝ վորոնք ստիպել ելին տիմար ուռւ ժողովրդին Ղրիմում շըջել հաց մուրալու նպատակով, նա անվստահությամբ գլուխն որորելով՝ առարկում եր.

— Չեմ հասկանում: Ի՞նչպես կարելի յե... Մեզ մոտ Վրաստանում այդպիսի անմտություններ չեն լինում:

Մենք կերչ հասանք ուշ յերեկոյան և ստիպված յեղանք գիշերել նավահանգստի՝ նավից ափը տանող կամրջակների տակ։ Մեզ անհրաժեշտ թագնվել. մենք զիտեցինք, վոր մեր գալուց քիչ առաջ բոլոր ավելորդ մարդկի՝ բոսակները կերչից դուրս ելին հանգած, և վախում ելինք, վոր վոստիկանատուն ընկնենք, և վորովինեան Շաքրոն ճանապարհորդում եր ուրիշի անցագրով, ուստի այս հանգամանքը կարող եր մեր վիճակի մեջ լուրջ բարդություններ առաջ բերել:

Նեղուցի ալիքներն ամբողջ գիշեր առատությամբ վողողում ելին մեզ ցոլքերով, և լուսաբացին մենք զուրս յեկանք կամրջակների տակից թրջված ու փետացած։ Ամբողջ որը շըջեցինք ծովափին, և բոլորն, ինչ վոր հաջողվեց մեզ վաստակել, մի հատ յերկուշահանոց եր, վոր յես սացած մի տերտերակնողից, վորի մի պարկ սեխը շուկացից տուն տարա:

Ազգմ հարկավոր եր նեղուցով անցնել Տաման։ Վոչ մի մակուկատեր չեր համաձայնում ընդունել մեղ իբրև մակուկավար՝ միուս ափն անցնելու համար, վորքան ել վոր խնդրեցի։ Բոլորը զրդոված ելին բուսակների գեմ, վորոնք մեր գալուց քիչ առաջ այլտեղ շատ սիրազգործություններ ելին կատարել, իսկ մեղ անհիմապես նրանց դասից ելին համարում։

Յերբ հասավ յերեկոն, յես անհաջողություններիս ու վորչ աշխարհիս վրա չարացած լինելուց՝ վճռեցի բավական վտանգավոր մի բան բռնել և գիշերը հասնելուն պես ի կատար ածել:

V

Գիշերը յես ու Շաքրոն կամաց մոտեցանք մաքսալին նաւահանգստին, վորի մոտ յերեք մակուզկ կար՝ ծովափնյա քարե պատում ամրացրած ողակներից շղթաներով կապած։ Մութն եր՝ քամին փչում եր, մակուզկներն ընդհարվում եին իրար, շղթաները շառաչում եին... Յեվ ինձ համար հեշտ ու հարմար եր տեղահան անել ողակն ու հանել քարից։

Մեզնից վեր հինգ արշինաչափ տարածության վրա ման եր գալիս մաքսալին զինվոր պահապանը և ատամների արանքով սուլում եր։ Յերբ նա մեզնից մոտիկ կանգ եր առնում, յես ընդհատում եիր աշխատանքս, բայց դա ավելորդ զգուշություն եր. նա չեր կարող յենթադրել թե մինչեւ կոկորդը ջրի մեջ մարդ կա նստած՝ ալիքից քշկելու վտանգին յենթարկվելով։ Առանց այն ել շղթաները անընդհատ շառաչում եին և առանց իմ ոգնության։ Շաքրոն արդեն ձգվել եր մակուզկի հատակին և ինձ ինչ-վոր մի բան եր շշնջում, վորը յես չկարողացա գլխի ընկնել ալիքների աղմուկի պատճառով։ Ողակը ձեռներումս եր... Ալիքը խեց նավակը և միանդամից նետեց նրան ափից հինգ սաժեն հետո։ Յես բռնել եիր շղթայից և լողում եիր նավակի հետ, հետո մտա մեջը։ Մենք հանեցինք յերկու ծածկութալին տախտակ և թիակների տեղակ նրանց ամրացնելով թիատեղերում՝ ճանապարհ ընկանքը...

Մեր գլխավերև ամպերն եին թոչում, մեզնից վար ալիքներն եին գես-ղեն ընկած, և Շաքրոն ցուռկին (նավաքթին) նստած՝ մերթ կորչում եր աչքիցո՞ն նավարթի հետ միասին ջրացին խորխորատների տակն անցնելով, մերթ բարձրանում եր ինձնից վեր և գոռալով՝ թրմփում համարյա ինձ վրա։ Յես նրան խորհուրդ տվի տեղը պինդ նստել և չգոռգոռալ, յեթե չի ուղում, վոր պահապանը լսի։ Այն ժամանակ նա սուս կացավ։ Յես նրա յերեսի տեղ տեսնում եիր մի ճերմակ բիծ։ Նա բոլոր ժամանակ զեկն եր բռնած։ Մենք ժամանակ չունեինք մեր գերերը փոխելու և վախում եր բռնելով մի տեղից մյուս տեղն անցնել։ Յես բարձր ասում եիր նրան, թե ինչ դիրք տալ նավակին, և նա իսկուսն ինձ հասկանալով՝ անում եր ամեն բան այնպես արագ,

վոր կարծես թե հենց նավաստի յեր ծնվելը թիակներ փոխարինող տախտակները քիչ ելին ոգնում ինձ և միայն ձեռներիս կոշտերն ելին հարում։ Բամին փշում եր հակառակ, և յես քիչ ելի հոգում այն մասին, թե ուր և տանում մեզ, աշխատելով միայն, վոր նավաքիթը նեղուցի լախությամբ լինի։ Դա հեշտ եր անել, զորովհետեւ գեռ յերեւամ ելին կերչի կրակները, Ալիքները յերեւամ ելին մեզ նավերի վրայով և զայրագին վշտում ելին՝ իրար ընդհարվելով։ Քանի շատ ելինք գեսլի նեղուցը տարվում, այնքան ալիքներն ավելի ուժգին ու ավելի աղմկող ելին դառնում։ Արդեն լավում եր մի ինչ-վոր մոնչչուն, վայրենի, ահարկու... Իսկ նավակը շարունակ տարվում եր ավելի ու ավելի արագ, շատ գժվար եր ընթացքի ուղղությունը պահպանել։ Մենք մի գլուխ գլորվում ելինք խոր վիճերի մեջ և վեր ելինք թոշում ջրացին բլուրները, իսկ գիշերն ավելի ու ավելի յեր մթնում, և ամպակուտաերն ավելի ելին ցած իջնում։

Նավաքթի վրայով յերեացող կրակները վրորան խավարի մեջ, և այն ժամանակ սարսափելի դարձավ։ Թվում եր, թե կատաղի ջրի այդ տարածությունն արդեն ել սահմաններ չունի։ Վոչինչ չեր յերեւամ, բայց նավակին ընդպառաջ թոշող ալիքներից։ Ազդ ալիքները ձեռիցո խլեցին մի տախտակը, մուռն ել ինքս զցեցի հատակը և յերկու ձեռով ամուր բռնեցի նավերզրից։ Շաքրոն վայրենի ձայնով վայում եր ամեն անզամ, յեր նավակը վեր-վեր եր թուզում։ Զայրացած տարերզով պատած և նրա աղմուկից խլացած՝ յես ինձ զգում ելի խոճախի ու անզոր այդ մուալ խավարի մեջ։ Սիրտս անհույս, չար հուսահատությամբ համակված՝ պեսնում ելի շուրջ զարհուրելի միորինսակություն—ամենուրեք միայն այդ ալիքները ճերմակ բաշերով, վորոնք ցրվում ու աղի ցոլեր ելին զանում, ու ինձնից վեր ամպակուտաերը, խիտ, թանձր, սուլնափես նման ալիքներին... Յես հասկանում ելի միայն մի բան։ այն ամենն, ինչ կատարվում եր շուրջս, կարող ել լինել անչափ ուժգին և ավելի անոելի, ու յես բարկանում ելի, վոր նա իրան պահում ե և չի ուղում այդպիս լինել։ Մահն անխուսափելի յեւ Բայց անհրաժեշտ և այդ անաշառ, ամեն բան ծանրութեթեւ անող որենքը մի վորես բանով պահումէն, վորովհետեւ նա չափազանց և ծանր ու բիրտ։ Յեթե ինձ վիճակված լիներ ալրվել կրակում կամ խեղդվել ճահճալին մամուռի մեջ, յես կաշխատելի ընարել առաջինը— ելի մի տեսակ ավելի վայելուչ ե...

— Առագաստը պարզենք, — գոչեց Շաքրոն։

- Ո՞ւր և, —հարցը ի՞ն:
- Իմ չեքմենս շինենք առաջաստ...
- Գցիր այստեղ, զեկը բաց չթողնեա...
- Շաքրոն սուսուփուս իրար յնկավ նավաքթի վրա:
- Բոնիբ...

Նա գցեց զեափի ինձ իր չեքմենը: Հատակի վրայով մի կերպ փորսով տալով՝ իմ նավածածկութից պոկեցի մի տախտակ ևս, հաստ շորի թեւ հազցրի նրան, նավակի նստարանների մոտ տնկեցի. վոաներս դևմ տվի և վերցրի մյուս թեւն ու փեշը թե չե, յերբ մի բոլորովին անսպասելի բան պատահեց... Նավակը սովորականից շատ բարձր ցատկեց, ապա ցած թուավ, և իմ ինձ ջրի մեջ տեսա մի ձեռումս պահած չեքմենը, իսկ մյուսով բոնած թոկից, վոր պատեր աված նավեզրի դրսի կողմից: Ալիքները գոսոցով ցատկում եին գլխիս վրայով, և իմ կուլ ելի տալիս դաւնազի ջուրը: Նա լցվեց ականջներս, բերանս, քիթս... ձեռներով ամուբ բոնած թռկից՝ իմ բարձրանում ու իջնում ելի ջրի վրա՝ գլուխո թրիկաց նելով նավեզրին և չեքմենը նավակի հատակը ցցելով՝ աշխատում ելի՝ ինքս ել թուշեմ նավակը: Իմ տասնյակ ճիգերից մեկ հաջողվեց, իմ նավակը հեծա և իսկուն տեսա Շաքրովին, վոր գլորվում եր ջրի մեջ յերկու ձեռով բոնած նույն պարաններից: վոր իմ հենց նոր բաց ելի թողել: Բանից յերեաց, վոր նրանք պատում ելին ամբողջ նավակի շուրջը՝ անցկացված լինելով յեղերին ամբացված յերկաթե ողակներով:

— Կենդանի յես.—գոչեցի իմ նրան:

Այդ վայրկանին նա ջրից բարձր ցատկեց և նույնպես նեաւ վեց նավակի հատակը: Յես նրան բոնեցի, և մենք միասին զեմառեմ յելանք: Յես նոտած ելի նավակի վրա՝ ինչպես ձիու, վոտներս գցած թոկերի մեջ, ինչպես ասպանդակների, — բացց այլ անհուսալի յեր, ամենաչնչին ալիքը կարող եր հեշտությամբ վայլ գլորել ինձ թամբից: Շաքրոն ձեռներով պինդ բոնեց ծնկներս և գլուխը զեմ տվավ կրծքիս: Նա ամբողջովին դորում եր, և իմ զզու ելի, թե ինչպես ելին դոզուում նրա ծնոտները: Պետք եր մի բան անել: Հատակը լարձուն եր, կարծես լուղ քսած լիներ: Յես Շաքրովին ասացի, վոր նա նորից ջուրը մտնի և բոնի մի նավեզրի թոկից, իսկ իմ նույնը կանեմ մյուս նավեզրի վրա: Պատասխանի տեղ նա սկսեց գլխով հրնիք կուրծքս: Ալիքները վայրենի պարով շարունակ ցատկում ելին մեր վրայով, և մենք հաղիւ-հաղ ելինք կարողանում տեղներս մնալ. մի վոտս սաստիկ կտրում եր

թոկը: Ամենուրեք, ուր միայն տեսանելի յեր, գոյանում ելին ջրի բարձր բլուրներ և աղմկով անհետանում:

Յես ասածս կրկնեցի Շաքրովին արդեն հրամանի տոնով: Նա ավելի ուժգին սկսեց գլխով հարու տալ կրծքիս: Հապաղել չեր կարելի: Յես ինձնից պոկեցի նրա ձեռները մեկը մյուսի յետեկից ու սկսեցի նրան ջուրը հրել աշխատելով, վոր նա թոկն իր ձեռը դցի: Յեկ ացտեղ կատարվեց մի բան, վոր ինձ ամենից աղելի վախեցրեց ալդ գիշեր:

— Խեղդում ես ինձ,— շնչաց Շաքրոն և մտիկ տվավ գեմքիս:

Սկդ իսկապես զարհուրելի յեր: Զարհուրելի յեր նրա հարցը, ավելի զարհուրելի՝ նրա հարցի տոնը, վորի մեջ հնչում եր և յերկ-չոտ հնազանդություն ֆակտին, և յերկչոտ խնդիր խնայելու, և վերջին հառաջանքը մի մարդու, վորը կորցրել և ճակտագրական վախճանից խոտսափելու հումքը, Բայց ավելի սարսափելի ելին մեռելացին-գունատ թրջված դեմքի վրայի աչքերը...

Յես գոչեցի նրան.

— Պինդ կաց,— և ինքս մտա ջուրը՝ թոկից բոնած: Վոտս խփեց մի բանի և, առաջին վարպէանի ցալի պատճառով, վոչինչ չկարողացա հասկանալ: Բայց հետո հասկացա: Մեջս մի ջերմություն բռնկվեց, իմ հարեցի և զզացի ինձ այնպես ուժեղ, քան յերեք...

— Պետին,— գոչեցի յես:

Գուցե մեծ ծովագնացները, վորոնք գտել են նոր յերկներ, նրանց տեսնելիս՝ այս բառը գոչել են ավելի մեծ զզացմունքով, քան թե յես, բայց կասկածում եմ, վոր նրանք կարողացած լինելին: Ինձնից ավելի բարձր գոչել: Շաքրոն ճշաց, և մենք ջուրը թափեցինք: Բայց շուտով հիասթափեցինք յերկուս ել ջուրը դեռ մինչեւ կրծքներս եր համում, և վոչ մի տեղ չելին յերեսում ցամաք ափի ավելի եցական նշաններ: Ալիքներն այստեղ ավելի թույլ ելին և արդեն չելին ցատկում, այլ համրուեն գլուրիվում ելին մեր վրայով: Բարեբախտաբար յես ձեռիցս բաց չելի թողել մակույլը: Յեվ ահա յես նրա մի կողի մոտ կանգնեցի, Շաքրոն մյուս կաղի, և փրկարար թոկերից բոնած սկսեցինք զգուշությամբ զնալինչ-վոր մի տեղ, մակույլը մեր յետեկից քաշելով:

Շաքրոն ինչ-վոր փնթխնթում ու ծիծաղում եր: Յես անհագիւտ մտիկ ելի անում շուրջաւ: Մութն եր: Յետեկից և մեղնից գեպի աջ ալիքների վշոցն ավելի ուժգին եր, առաջից դեպի ձափ՝ ավելի մեղմ: Մենք գնացինք գեպի ձափս:

ավագու, բայց ելի փոսփոս. յերեմին հատակին չելինք կպչում և թիւվագրում ելինք փոտներով ու մի ձեռով՝ մյուսով նավակից բռնած. յերեմին ջուրը միայն մինչև ծնկներս եր հասնում: Խոր տեղերում Շաքրոն վայում եր, իսկ յես դողում եի սարսափահաճար: Յել հանկարծ փրկություն—մեր առջն կրակ եր փայլում...

Շաքրոն դոռաց վորքան ուժումը կար, բայց յես շատ լավ ելի խանում, վոր նավակն արքունական ե, և խակուն հարկադրեցի Շաքրոնին հիշել այդ: Նա սուս արավ, բայց միքանի ըռպեցից հետո լովեցին նրա հեկեկանքները: Յես չկարողացա նրան հանգստացնել միջոց չկար:

Ջուրը քանի գնում՝ քչանում եր... մինչև ծնկներս... Ջուր ալևս չկա: Յես ու Շաքրոն ելի քաշ ելինք տալիս արքունական նավակը, բայց ուժներս հատան, և բաց թողեցինք: Մեր ճանապարհին ընկած եր մի տև կոճդ. ցատկեցինք նրա վրացով—և յերկուսս ել վոտաբորիկ ընկանք մի ծակող խոտի մեջ: Այդ ցավ եր պատճառում և հողի կողմից հուրասեր բան չեր, բայց մենք ուշադրություն չդարձրինք և վագեցինք գեպի կրակը: Նա մեզնից մի վերստ հետափորության վրա յեր և, զվարթ պլազմավ, ասես ծիծաղում եր մեր գեմ հանդիման, իսկ խավարն ահոելիորեն յերերվում եր նրա շուրջը...

VI

...Յերեք ահագին, բրդբրդոս շներ խավարի միջից դուրս պրծնելով՝ հարձակվեցին մեղ վրա: Շաքրոն, վոր մինչև այդ ժամանակ ջղաձգաբար հեկնեում եր, սարսափելի ճշաց և գետին ընկավ: Յես թաց չեքմենը շպրտեցի շների վրա և կուացա՝ ձեռքով վրոնելով քար կամ փայտ: Վոչինչ չկար, միայն խոտն եր ձեռներս ծակոտում: Շները միահամուռ մեղ վրա ելին պրծնում: Յես սուլում ելի, վորքան ուժումս կար, յերկու մատս բերանս դրած: Նրանք յետ քաշվեցին, ու խակուն ենթ լովեց վազող մարդկանց վոտների տրոփիսն ու խոսակցություն:

Միքանի բողեցից հետո մենք արգեն խարուկի մոտ ելինք, չորանների շրջանում, վորոնք հազած ելին փոչխարի մորթիներ՝ բուրդը դրախ կողմը դարձած:

Յերկուսը նստած ելին գետնին և ծխում ելին՝ ծուխն ահագին քուլաներով գուրս թողնելով: մինը բարձրահասակ, խիտ, սև միքարով և կաղակի բարձր փափախով—կանգնած եր մեր յետեր՝ արմատի ահագին կոմբալունեցող փախտին հենված, չորրորդը մի

ջանել չեկ տղա, ոգնում եր լացող Շաքրոնին շորերը հանելու: Մեղնից հինգ սաժենաչափ հեռու հողը մեծ տարածությամբ ծածկը ված եր ինչ-վոր թանձր, մոխրագուշն և ալիքաձն, գարնան՝ արդեն հալ ընկնող ձյունի նման մի բանի շերտով: Միայն յերկար ու անընդհատ նայելուց կարելի յե ջոկել իրար կիպ սեղմված վոչխարների առանձին կերպարնքներ: Այդտեղ նրանցից կար միքանի հազար, քնից և գիշերվա խավարից կիպ սեղմված, դարձած խիտ, տաք և հաստ շերտ, վոր ծածկում եր դաշտավայրը: Յերեմին նրանք մայում ելին վողբաձայն ու յերկշոտ...

Յես չեքմենը չորացնում ելի կրակի վրա և չորաններին ասում ելի ամեն ըան առանց թագցնելու: պատմեցի և այն միջոցի մասին, վորով ձեռք բերի նավակը:

— Մուր ե նա, են նավակը,— հարցուց ինձանից խոշոր ալեվոր ծերունին, վոր աշքն ինձնից չեր հեռացնում:

Յես ասացի նրանց:

— Գնա, Միխալ, մեկ մտիկ տուր...

Միխալը, այն սեամիրուքը, փայտն ուսը զցեց և ուղևորվեց գեափի գետափի:

Շաքրոն, վոր ցրտից գողղողում եր, ինձ խնդրեց տալ իրան առաք, բայց վեռ թաց չեքմենը, ստկացն ծերն ասաց.

— Սպասիր. առաջ մեկ վագվզիր, վոր արյունող տաքացնես: Վազիր խարուկի շուրջն, ապա:

Շաքրոն մկրից չհասկացավ, բայց յետո հանկարծ պոկ յեկավ տեղից և մերկ՝ սկսեց պարել մի աներեսակայելի վայրենի պար, խաղաղնդի նման վոստոստալով խարուէկի վրալով, պատելով մի տեղում, վոտները գետնին արոփելով, ձեռները դես-դեն թաւի տալով: Դա մի չափազանց ծիծաղելի պատկեր եր: Յերկու չորանը գետնին թավալիում ելին՝ ամբողջ կոկորդով ծիծաղելով, խակ ծերը լուրջ, անհուզ գեմքավ աշխատում եր թաթերով ծափ տալ պարի տակտի համեմատ, բայց չեր կարողանում հանգը գտնել, մտիկ եր տալի Շաքրոի պարին՝ վլուխն որորելով ու յեղերը շարժելով և թանձրացած բասով շարունակ ձայն եր տալիս.

— Հայ-համ: Եղպես, եղպես: Հայ-համ: Ծափ, ծափ:

Խարուէկի կրակով լուսավորված Շաքրոն ոճի նման գալարդում եր՝ ամենաբազմազան պողաներ բոնելով, ցատկում եր մի վոտի վրա, մանր արոփեւններ եր անում յերկու գոտներով, և կրակի լուսով փայլող նրա մարմինը ծածկում եր քրտանքի

Խոշոր կաթիւներով: Ազդ կաթիւները կրակից թվում ելին կարմիր՝ ինչպես արյուն:

Ազմա արդեն բոլոր յերեք չոքանն ել ծափ ելին տալիս, իսկ իս ցրտից գողարով՝ ցամաքեցնում ելի ինձ խարուցկի մոտ և մտածում, վոր իմ ապրած արկածը բախտավոր կղարձներ կուպերի և Ժյուլ-Վերնի մի վորեւ յերկրագոռերի: Կա և նավարկություն, և հուրասեր ընիկներ (արորիգեններ) և վայրենիների պար խարուցկի շուրջը:

Ահա Շաքրոն արդեն նստած եր գետնին՝ չեքմենով փաթաթված և ուտում եր՝ մերթ-մերթ նայելով ինձ իր սե աչքերով, վորոնցում կայծկլուում եր մի բան, վորը մեջս անախորժ զգացում եր զարթեցնում: Նրա շորը չորանում եր՝ խարուցկի մոտ հողում ցցած փախուրից կախած: Ինձ ել հաց ու աղ արած ճարող տվին ուտելու:

Միխալը յեկավ ու լուռ նստեց ծերունու կողքին:

- Հը, — հարցրեց ծերը:
- Նավակը կա, — կարճ պատասխանեց Միխալը:
- Ջուրը չի քշիլ:
- Չե:

Յեկ բոլորը լսեցին՝ նորից ինձ դիտելով:

— Հը, — հարցրեց Միխալն՝ իսկապես առանց մեկնումնելին դիմելու, — տանի՞լ սրանց ստանիցան (զյուղ) ատամանի (զյուղապետի) մոտ: — Գուցի՞ ավելի լավ ե ուղղակի մաքսալին ծառաբշողների մոտ տանել:

Միխալին վոչվոք չեր պատասխանում: Շաքրոն իրան համար ուտում եր և սուս եր:

— Կարելի յե ատամանի մոտ տանել... նույնպես և մաքսալին ծառաբշողների մոտ... Դա յել ե լավ, նա յել, — ասաց ծերը՝ քիչ լուռ մնալով:

— Կաց, պապի... — սկսեցի յես:

Բայց նա վրաս վոչ մի ուշադրություն չդարձրեց:

- Ուրեմն եղանու Միխալը Են բանը... Նավակն ենտեղ եւ:
- Ընը, ենտեղ եւ:
- Հը... ջուրը չի քշիլ:
- Ծծը... չի քշիլ:

— Դե թաղ ենտեղ ել կենա... Իսկ եզուց մակուցկավարները կդնան կերչ և իրանց հետ կվերցնեն կտանեն; Ի՞նչ կա, վոր շտանեն գատարկ նավակը: Հը: Ուրեմն եղանու... Իսկ հիմի գուք,

զոչաղներ... բան... վանց և են ինչը... Յերկուսդ ել չվախեցա՞ք: Զե՞ ըստ-բո՞... Կես վերստ ել անցած լինելիք, ծովումը կլինելիք հիմի: Ի՞նչ կանելիք, յեթե ծովը ընկնելիք: Հը: Յերկուսդ ել տակ կանելիք յերկաթի պես: Կմեղդվելիք կդնալիք:

Ծերը յսեց և սկսեց նայել վրաս՝ բեղերում հեգնական ժպիտ:

— Ի՞նչ ես սուս կացել, այ տղա, — հարցրեց նա ինձնից:

Յես ձանձրացել ելի նրա դասողություններից, վորոնց, չհամանալով, համարում ելի ծաղը մեր հասցեին:

— Ա՛յ, ականջ եմ դնում քեզ, — ասացի յես բավական բարկացած:

— Ե՛, վոր ի՞նչ, — հետաքրքրվեց ծերը:

— Ե՛հ, ի՞նչ կա, վոր ի՞նչ ի՞նի:

— Ել ի՞նչ ես ինձ ձեռք զցում: Եղ ի՞նչ կարգ ե՞ քեղնից մեծին ձեռք առնել:

Յես սուս կացա:

— Բայց ուտել չ՞ս ուզում ել, — շարունակեց ծերը:

— Չեմ ուզում:

— Ե՛հ, մի ուտիր: Չես ուզում — չես ել ուտիր: Բայց կարելի յե ճանապարհի համար հաց կվերցնես:

Յես ուրախությունից վեր թնա, բայց ինձ չմատնեցի:

— Ճանապարհի համար կվերցնելի... — հանգիստ ասացի յես:

— Եներ... Դե ուրեմն սրանց ենտեղ հաց ու ճարպ տվեք ճանապարհի համար... բայց կարելի յե ուրիշ ել բան կա. Ի՞նչ վոր կա, նրանցից ել տվեր:

— Ուրեմն դրանք դնալու յեն, — հարցրեց Միխալը:

Մյուս յերկուսն իրենց աչքերը ծերի վրա բարձրացրին:

— Բա եստեղ ի՞նչ պիտի անեն վոր:

— Ախր մենք ուզում ելինք ատամանի մոտ տանել... Կամ ճաքսալին ծառաբշողների... — հիսաթափված ծանուցեց Միխալը:

Շաքրոն իսպուցկի մոտ իրար յեկավ և զլուխը հետաքրքրությամբ գուրս հանեց չեքմենից: Նա հանգիստ եր:

— Սրանք ատամանի մոտ ի՞նչ գործ ունեն: Անելու վաչինչ շունեն սրանք ատամանի մոտ կարծեմ: Հետո արգեն նրա մոտ կդնան..., յեթե ցանկանան:

— Իսկ նավա՞կն ի՞նչ կլինի, — ձեռք չեր քաշում Միխալը:

— Նավակը, — հարցրեց ծերը: — Ի՞նչ ե վոր նավակը: Տեղն ե:

Տեղն ե... — պատասխանեց Միխալը:

— Եհ, թող ուրեմն աեղը մնա: Իսկ առավուտան այ իվաշ-

կան կտանի նավահանգիստ, ենտեղից ել կվերցնեն կտանեն Կերչ=Պրծավ գնաց:

Յես ակնդեռ նայում ելի ծեր չոբանին և չելի կարողանում գտնել մի ամենափոքրիկ շարժում նրա ֆիեզմատիկ, արևառ ու քամհար դեմքին, վորի վրա վոստոստում ելին խարուցի ստվեր-ները:

— Մի բան դուքս չգա հանկարծ...—սկսեց մեղմանալ Միալը:

— Թե վոր լեզուկ քեզ պահես, հավատա, վոր վոշինչ չի լինի, իսկ յեթե սրանց տանես ատամանի մոտ, դա, յես կարծում եմ, վոր լավ չի լինել թե մեղ և թե սրանց համար: Մեկ հարկա-վոր և մեր գործն անել սրանց—գնալ ե՛, հեռոն աեղ եք գնա-լու, — հարցրեց ծերը, թես յես արդեն ասել ելի նրան, թե վոր-տեղ:

— Թիֆլս:

— Ճանապարհ շնոր կա: Ա՞յ, տեսնում ես, իսկ ատամանը կրոնի կամահի սրանց. թե վոր պահի, սրանք յերբ տեղ կհասնեն: Ուրեմն ավելի լավ և թող գնան իրանց քեֆին, ուր ուզում են: Հը:

— Ի՞նչ անենք: Թող գնան,—համաձայնեցին ծերի ընկեր-ները, յերբ նա վերջացնելով իր դանդաղ խոսքերը՝ շրթունքներն ամուր սեղմեց և հարցական կերպով նայեց բոլորին՝ մատներով վոլորելով իր գորշ մորուքը:

— Դեմ, ուրեմն, աստված ձեղ հետ, տղերք, — ձեռքով արաւէ ծերը: — Իսկ նավակը մենք իր տեղը կուղարկենք: Ենպես ե:

— Շնորհակալ եմ քեզնից, պապի, — զլիարկս վերցրի յես:

— Ինչի՞ համար ես շնորհակալ:

— Շնորհակալ եմ, ապէր, շնորհակալ եմ: — հուզված կրկնեցի յես:

— Ախր ինչի՞ համար ես շնորհակալ ե: Ա՞յ զարմանալի բան: Յես ասում եմ—աստված/ձեղ հետ, իսկ սա ինձ—շնորհակալ եմ: Միթե դու վախենում ելիք, վոր յես քեզ սատանի մոտ կուղար-կեի: Հը:

— Մեղքս ի՞նչ թագցնեմ, վախենում ելի..., — ասացի յես:

— Ո՞...—և ծերունին վեր քաշեց հոնքերը: — Յես ինչո՞ւ պետք ե մարդին վաս ճանապարհի վրա դնեմ: Ավելի լավ և, վոր յես նրան այն ճանապարհը գցեմ, վորով ինքս եմ գնում: Կարելի յե-դեռ ելի կպատահենք, ուրեմն ծանոթ կինենք: Կարող և պա-

տահել, վոր հարկավոր կլինի իրար ոգնել... Ջօ ՏՎԻՃՔԻ (ցտեսու-թյուն):...

Նա վերցրեց իր բրդոտ վոչսարենի գլխարկը և գլուխ տվալ մեզ: Գլուխ տվին և նրա ընկերները: Մենք հարցրենք Սնապալի ճանապարհն ու գնացինք: Շաքրոն մի բանի վրա ծիծաղում եր:

VII

— Ինչի՞ վրա յես ծիծաղում, — հարցրի նրանից:

Յես հիացած ելի ծեր չորանից և նրա կենսական մորալից, յես հիացած ելի և լուսաղիմի թարմ քամուց, վոր վչում եր ուղիղ մեր կրծքին, և այն բանից, վոր յերկենքը մաքրվել եր ամ-պերից, շուտով լուսանալու, արել յելնելու յի պայծառ յերկենքը, և փալուն գեղեցիկ որ և ծնվելու...

Շաքրոն խորամանկությամբ աչքով արալ ինձ և ավելի ուժ-գին քրքջաց: Յես ել ելի ժապում՝ լսելով նրա ուրախ, առուց ծիծաղում: Չորանների խարուցի մոտ մեր անցկացրած յերկու-յե-րեք ժամը և համեկ հացն ու ճարպը հոգնեցուցիչ ճանապարհոր-դությունից թողել ելին միայն մի թեթև վոսկրացավ. բայց այդ զգացումը չեր խանդարում մեր ուրախությունը:

— Ե՛, Բնչ ես ծիծաղում: Ուրախ ես, վոր կենդանի յես մնացել համ: Կենդանի ու գեռ կուշա ել:

Շաքրոն բացասարար շարժեց գլուխը, կողքիս խփեց արմուն-կով, բերանով ծամածություն արավ, նորից քրքջաց և, վերջա-պես, ասաց իր կոտրած լեզվով.

— Զի՞ս հասկանում, թե ինչո՞ւ յե ծիծաղս գալիս: Զի՞ս կումանաս: Դիտես, թե յես ինչ պետք ե անելի, յեթե ինձ տանելին այդ ատաման-ատամոժանի մոտ: Զի՞ս իմանում: Յես քեզ համար կասելի՝ նա ինձ ուզում ե խեղդի: Յեվ կակսելի լաց լի-նելը: Այն ժամանակ ինձ կիսդալին և բանտ չելին՝ նստացնիլ: Հասկանում ես:

Յես սկզբում ուզում ելի այդ իրրկ կատակ հասկանալ բայց ավաղ, նա կարողացավ ինձ համոզել վոր իր մտադրությունը լուրջ եր յեղած: Նա այնպես հիմնավոր ու պարզ կերպով համո-զում եր ինձ այդ բանում, վոր յես փոխանակ նրա վրա կատա-ղելու այդ պարզամիտ ցինդրմի համար՝ լցվեցի խորին խղճահա-րության զգացմունքով գեղի նա: Ուրիշ ի՞նչ կարելի յե զգալ գեղի մի մարդ, վորն ամենափալուն ժպտով և ամենաանկեղծ տոնով պատմում ե քեզ, վոր ինքը մտադիր եր քեզ սպանել: Ի՞նչ անել նրան, քանի վոր նա նայում եր այդ արարքին՝ վորպես մի սիրուն և սրամիտ բանի վրա:

Յես սկսեցի տաքացած ապացուցել նրան իր մտավրության բոլոր անբարոցականությունը: Նա շատ պարզողեն առարկում եր ինձ, վոր յես չեմ հասկանում նրա շահերը, մոռանում եմ նրա ուրիշի անցաթղթով ապրելը և այս, վոր զրա համար նրա բանը վատ կլինի...

Հանկարծ գլխումս մի դաժան միտք փայլեց.

— Կաց, — ասացի յես, — զուցի զու հավատացած ես, վոր յես ուզում եմ քեզ իւեղեր:

— ԶԵ... Յերբ զու ինձ ջուրն ելիք հրում — հավատում եմի, յերբ զու ինքոր մտար ջուրը — չհավատացի:

— Փառք աստծու, — բացականչեցի յես: — Ե՛, զրա համար ել ևմ շնորհակալ:

— ԶԵ, մի ասիր շնորհակալ եմ: Յես քեզ կասեմ շնորհակալ եմ: Այստեղ խարուցի մոտ զու մրսում ելիք, յես մրսում ելի... Զեքմենը քոնն եւ — Դու չպահեցիր քեզ համար: Դու չորացրիր և ինձ տվիր այս: Իսկ զու վոչինչ չվերցրիր: Այ քեզ շնորհակալություն: Դու շատ լավ մարդ ես, յես հասկանում եմ: Կդնանք թիֆլիս, ամեն բանի փոխարենը կտանաս: Հորս մոտ կտանեմ քեզ: Հորս կասեմ — այ մարդ: Ուտացրու սրան, խմացրու սրան, իսկ ինձ եշի հետ ախոսումը կապիր: Այ ինչպես կասեմ: Մեզ մոտ կապրես, այգեպան կլինես, գինի կիմես, սիրտ ինչ ուզի՝ կուտես... Ախ, ախ, ախ... շատ լավ կյանք կբաշես: Ուզզակիր... Կեր, խմբիր ինձ հետ միասին մի գավաթով:

Նա յերկար ու մանրամանորեն նկարագրում եր այն կյանքի համեմ ու հոտը, վոր պատրաստվում ե ստեղծելու ինձ համար թիֆլուսում՝ իրենց տանը: Իսկ յես նրա զրուցի ժամանակ մտածում ելի այն մարդկանց մեծ զժբախտության մասին, վորոնք զինվելով նոր մորալով, նոր ցանկություններով, մեն-մենակ առաջ ելին ընկելու կորել կյանքում և իրանց ճանապարհին հանդիպում են ուղեկիցների, նրանց համար խորթ, նրանց հասկանալու անընդունակ... ծանր և արդարի մենակների կյանքը... նրանք անմըսունչ տարվում են ողում... բաց նրանք տարվում են ինչպիս բարեկ սերմեր, թեպետ և սակավ են փթում արդարանդ հոգում...

Լուսանում եր: Ծովի հեռավոր կողմերը փայլում ելին վարդագույն վոսկու պես:

— Քունս տաննւմ ե, — ասաց Շաքրոն:

Մենք կանգ առանք: Նա պառկեց մի փսում, վոր փորել եր

քամին չոր ավաղի մեջ ծովափից վոչ հեռու, և զլուխը չեքմենի մեջ փաթաթելով՝ շուտով քնեց: Յես նստել ելի նրա կողքին և նացում ելի ծովին:

Նա ապրում եր իր լայնարձակ կյանքով, լի կարող շարժումով: Ալիքների խմբերն աղմուկով ափն ելին թավալգում և փշր-վում՝ ավաղին ընդհարվելով, իսկ ավաղը թուլ ֆշում եր՝ ծծելով ջուրը: Առաջընթաց ալիքներն իրանց ճերմակ բաշերը թափ տալով՝ աղմուկով խվվում ելին ափին և նահանջում՝ նրանից վետ մղմելով, իսկ նրանց ել հանդիպում ելին ուրիշ ալիքներ, վորոնք գալիս ելին նրանց ողնության: Նրանք ամուր գրկախառնվելով փրփուրի ու ցոլքերի մեջ՝ նորից ելին ափը զլորվում ու ծեծում նրան՝ ձգտելով իրանց կյանքի սահմաններն ընդլայնել: Հորիզոնից մինչև ափը՝ ծովի ամրածության վրա, ճնշում ելին ացէ ձկում ու կրովի ալիքները և շարունակ գնում, գնում իւրի մի խիտ զանգված՝ միմյանց հետ սերտ կապված նպատակի միությամբ... Արեն ավելի ու ավելի պայծառ եր լուսավորում նրանց շարքերը, և հեռավոր ալիքները հորիզոնաւմ՝ թվում ելին բռնորացին: Վոչ մի կաթիլ անհետ չեր կորչում ջրային զանգվածի այդ հսկայական շարժման մեջ, զանգվածի, վորը ասես թե փոկեցնչված և մի գիտակցական նպատակով և անա հասնում և նրան լայն չափածո զարկերով: Գրավիչ եր առաջընթաց ալիքների գեղեցիկ քաջությունը, ալիքների, վորոնք ըմբոստությամբ թռչում ելին լորիկ ափը, և լավ եր տեսնել, թե ինչպես նրանց իւակից խաղաղ ու ծիաբան զարիս և ամրող ծովը, հզոր ծովը, արգեն ծիածանի բոլոր գույններով արկեր ներկված և լի իր գեղեցկության և ուժի գուսապ գիտակցությամբ...

Հրվանդանի յետեկից, ալիքները պատռելով, զուրս լոգաց մի հսկայական շոգենավ և ծանր ու մեծ որորվելով ծովի հուզված ծոցում սուրաց իր յեղքերի վրա կատաղությամբ հարձակվող ալիքների վրապով: Այդ նավը, գեղեցիկ ու հուժկու, վարի մետաղը պապում եր արեից, մի ուրիշ անգամ զուցի կարողանար մտածել տալ մարդկանց հպարտ ստեղծագործության մասին, վոր սարկացնում և տարերքը... Բաց իմ կողքին պառկած եր մարդ-տարերքը:

VIII

Մենք անցնում ելինք թերեքի արջանով: Շաքրոն սաստիկ զգեզգած ու պատառուաված եր և սատանայի պես չարացած, թեն արգեն վոչ քաղցած այժմ, վորովհետեւ բավական փող ելինք վաս-

տակում: Նա վորեն աշխատանքի անընդունակ դուրս յեկավ: Մի անգամ փորձեց մի կալում հարդ արմղել և կեսարից հետո հիվանդացավ՝ փոյխով թաթերին արցունաներկ կոշտեր գոյացնելով: Մի ուրիշ անգամ մենք մի դժուիկ եցինք շուռ տալիս, և նա քլունգով զի կաշին պլոկեց:

Գնում եցինք շատ զանգաղ, — յերկու որ բանում եցինք, մի որ գնում: Շաքրոն չափազանց անզուսպ կերպով եր ուտում, և շնորհիվ նրա վորովայնամոլության, յես վոչ մի կերպ չկարողացա այնքան փող յետ գցել վորպեսզի հնարավորություն ունենամ հադնելու մի բան առնել նրա համար: Խսկ նրա բոլոր շորերը մի բազմություն եցին զանազանակերպ ծակերի, վորոնք մի կերպ կապկպված եցին զանազան զույնի կարկատաներով:

Մի անգամ մի ստանիցայում նա իմ պարկից հանեց՝ նրանց ծածուկ մեծ դժվարությամբ յետ գցած հինգ ոուրլի ու յերեկոյան դարձավ այն տունը, վորի բանջարանոցում յես աշխատում ելի, հարրած ու ինչ-վոր մի հաստիկ կազակ-կնոջ հետ, վորն ինձ այսպէս բարեկց.

— Բարե, անիծած հերետիկոս:

Խսկ յերբ յես այդպիսի մականունից զարմացած՝ հաքցրի նրան, թե ինչու յե ինձ հերետիկոս անվանում, նա ապլոմքով պատասխանեց.

— Նրա համար, ստատանա, վոր տղացին արգելում ես սիրել կանանց սեռը: Միթե դու կարող ես արգելել, քանի վոր որենքը թուլատրում ե... Անհեծք դու...

Շաքրոն կանգնած եր նրա կողքին և գրականապես զլխով եր անում: Նա սաստիկ հարրած եր և յերբ վորեն շարժում եր անում, ամրազջովին վոտնուձնուից ընկած որորվում եր: Նրա վարի շրթունքը կախ եր ընկած: Մթազնած աչքերը նախում եցին դեմքիս անմտորեն-համառարարա:

— Ե՞ւ, դու, ինչ ես աչքերդ պլշել վրաներս: Տուր նրա փողերը, — գոռաց դոչաղ կինը:

— Ի՞նչ փողեր, — ապշեցի յես:

— Տուր, տուր: Թե չե յես քեզ կտանեմ զինվորական կառավարչատուն: Տուր այն հարցուր հիսուն ոուրլին, վոր նրանից վերցրել ես Ողեսսալում:

Ի՞նչ անելի: Ստատանայի կինը հարբած-հարբած կարող եր խսկապես գնալ զինվորական տունը, և այն ժամանակ զիուղական իշխանությունը, վոր խիստ ե զանազան շրջիկ անձերի վերա-

րերժանք, կկալանավորեր մեզ: Ո՞վ գիտե, թե ինչ դուրս կգար այդ բանտարկությունից ինձ ու Շաքրովի համար: Յեվ ահա յես սկսեցի քաղաքագիտորեն սիրաշահել այդ կնոջը, վոր, իհարկե, մեծ ձիգեր հարկավոր չեկան: Մի կերպ յերեք շի գինու ոգնությամբ յես նրան խաղաղացրի: Նա ընկավ գետին ձմերուկների մեջ ու քննեց: Յես Շաքրովին պառկացրի, իսկ մյուս որը վաղ առավոտյան յես ու նա զուրս յեկանք ստանիցալից՝ թողնելով կնոջը ձմերուկների հետ:

Խմած լինելուց կիսահիվանդ, ձմլված և ուռած դեմքով՝ Շաքրոն ամեն բոպի թքոտում եր և ծանր հառաջում: Յես փորձում եցի նրա հետ խոսակցել, բայց նա ինձ չեր պատասխանում և միայն շարժում մը եր թավ գլուխը հոգնած ձիու պես:

Որը շոգանում եր, և խիստ ու բարձր, համարյա մեր ուսերին համանող խոտով ծածկված խոնավ հողի ծանր գոլորշիացումներով լցված եր ողը: Մեր շուրջն ամենուրեք ամրածված երկանաչ թավշե ծովը ու դեպի տոթ յերկինքն եր արձակում իր հյութալի բուրքը, վորից մարզու գլուխ պատուա եր գալիս...

Մենք գնում եցինք մի նեղ շավզով, վորով յետ ու առաջ եցին սողում փոքրիկ կարմիր ոճեր՝ գալարվելով մեր վոտների տակ: Չորս կողմը տիրող անդորրությունը քուն եր բերում մեղ վրա և զցում մի յերազալին նիրհի մեջ: Մեր յետում յերկնքով դանդաղ շարժվում եցին ամպակուտերի սև խիստ շարքեր: Իրար միանալով՝ նրանք ծածկեցին վողջ յերկինքը մեր յետում, մինչդեռ առաջներս պարզ եր տակավին, թեև արդեն ամպերի պատաներն այնտեղ վազեցին և կայտառ դեպի առաջ քշվեցին՝ առաջներս կարելով և ավելի ու ավելի խիստ ծածկելով յերկինքը: Հեռվում մի տեղ թնդում եր վորոտը, և նրա քրթմնջող հնչուններն ավելի ու ավելի եցին մոտենում: Անձրիի խոշոր կաթիլներն սկսեցին թափել և դիպչել խոտին: Խոտը մետաղանման խշում եր: Տեղ չկար ապաստանելու: Ահա մութն ընկավ, և խոտի խշոցը հնչեց թեև ավելի բարձր, բայց մի տեսակ վախեցած: Վորոտը թնդաց՝ և ամպերը դողողացին՝ կապուա կրակով համակած: Խոշոր անձրիը թափեց հորդ-հորդ, և վորոտի թնդոցները մեկը մյուսի յետեկից սկսեցին խորխու ու անընդմեջ դպրուած ամափի դաշտավայրում: Թամու և անձրիի հարվածներից կուացող խոտը պառկում եր գետնին և խշում՝ թուլ հնչուն հանելով: Յեկ ամեն ինչ դողում եր, ալեկոծգում: Շանթերը, մարդի աչքեր գոցելով, պատուում եցին ամպերը: Նրանց կապուա փալի մեջ

հեռվում էր մի լեռնաշղթա՝ շողալիս կապույտ կրակներով, արծաթագույն ու սոսը, իսկ յերբ շանթերը մարում ելին, նա անհետանում էր, կարծես խալար անդունդն էր զլորվում։ Ամեն ինչ փորոտում էր, ցնցվում, իստ մղում հնչունները և ծնում նրանց։ Ասես յերկինքը՝ պղտոր ու վալրացած՝ կրակով էր սըրբում իր վրայի փոշին ու ամեն մի աղտեղություն, վոր յերկրից բարձրացել էր դեպի նա, և յերկիրը թվում էր թե ցնցվում էր նրա ցասումից սարսափած։

Շաքրոն մըթմթում էր ինչպես վախեցած շուն։ Իսկ յես ուրախ ելի, յես մի տեսակ բարձրացել ելի սովորականից՝ զիտելով դաշտային մրրի այդ հզոր մոայլ պատկերը։ Հրաշալի բառուը գրավում և հերոսական արամադրություն էր ներշնչում՝ մարդի հոգին համակելով խրոխտ ու վալրենի մի ներդաշնակությամբ...

Յեզ յես ցանկանում ելի մասնակցություն ունենալ նրանում, մի բանով արտահայտել դեպի այդ խորհրդավոր ուժը ունեցածս, հոգիս լցնող հիացքի զգացումը, ուժ, վոր կործանում էր խավարն ու ամպերը... Կապույտ բոցը, վոր համակել էր յերկինքը, թվում էր՝ թե վառվում էր և իմ կրծքում. և ինչպի կարող ելի յես արտահայտել իմ մեծ հուզմունքը և իմ սքանչանքը բնության այդ փառահեղ պատկերի առաջ... Յես յերգեցի՝ զիլ, ինչքան ձայնումս կար։ Վորոտը թնդում էր, շանթերը շողշողում ելին, խոռը խշում էր, իսկ յես յերգում ելի և ինձ զգում այդ բոլոր ձայների հետ միացած... Յես գտություն ելի անում, այդ ներելի յե, վորովհետեւ վոչվոքի վնաս չեր հասնում, բացի ինձնից։ Յես լցված ելի ցանկություններով՝ վորքան կարելի յե՛շատ ձեռք բերել և ծեել կենդանի ու կարող գեղեցկություն է ուժ, վոր փոթորկում էր ամայի դաշտում, և ավելի մոտ լինել նրան... Փոթորիկը ծովում և մրրիկն ամայի դաշտում—յես չի-ուն ավելի փառահեղ յերկություն բնության մեջ։

Յեզ արդ, յես դոզում ելի՛ խիստ հավատացած, վոր իմ այդ գարմունքով վոչվոքի չեմ անհանգստացնիլ և վոչվոքի չեմ ստիպիլ խիստ քննադատության յենթարկել իմ արածը։ Բայց հանդարձ փոտիցս ամուր քաշեցին, և յես ակամայից նստեցի մի ջրալից փոսում...

Յերեսիս նայում էր Շաքրոն լուրջ ու կատաղի աշքերով։

— Դու խելքդ թոցրել ես։ Զես թոցրել։ Զի։ Ե՛, ուրեմն յիր, մի գոռար. յես կոկորդդ կպատռեմ, հասկաննում ես։

Յես ապշեցի և սկզբում հարցը նրանից, թե նրան ինչով եմ խանգարում...

— Վախեցնում ես, հասկացար։ Վորոտը վորոտում ե-աստված և խոսում, իսկ դու գոռում ես... Քեզ ինչացո՞ւ յես կարծում։

Յես նրան հայտնեցի, վոր իրավունք ունեմ յերգելու, յեթե ցանկանում եմ, ինչպես և նա։

— Իսկ յես չեմ ուզում, —կտրուկ ասաց նա։

— Մի յերգիր, —համաձայնեցի յես։

— Դու ել մի յերգիր, —խստությամբ ներշնչում էր ինձ Շաքրոն։

— Վոչ, ավելի լավ ե՞ յես կերգեմ...

— Լսիր, դու ինչ ես կարծում, —զալրացած խոսեց Շաքրոն։

Ո՞վ ես դու, դու տուն ունես, հայր ունես, ազգականներ ունես, հող ունես։ Ինչացո՞ւ յես դու աշխարքիս յերեսին։ Դու մարդ ես, կարծում ես։ Եղ յես եմ մարդ։ Յես ամեն բան ունեմ... —Նա խիեց իր կրծքին։ —Յես իշխան եմ... իսկ դու... դու փոշին ես։ Վոչինչ չունես։ Իսկ ինձ ճանաչում ե թությիսը, թիֆլիսը... Հասկաննում ես։ Դու ինձ հակառակ մի գնար։ Դու ինձ ծառայում ես։ —Գոհ լիինես։ Յես քեզ կհատուցանեմ տասնապատիկը։ Դու ինձ եզպիս ես անում։ Դու ուրիշ բան անել չես կարող, դու ինքդ ելիր անում, վոր աստված հրամայել և ծառայել ամենքին առանց վարձատրության։ Յես քեզ կպարզեատրեմ։ Ինչո՞ւ յես դու ինձ չարշարում։ բաներ ես սովորեցնում, վախեցնում ես։ Ուզում ես, վոր յես ել ենապես զառնամ, ինչպես դու։ Դա լավ չի։ Զի կարելի իրան նման դարձնել մի ուրիշն... Եխ, եխ, եխ... թիուհ, թիուհ...

Նա խոսում էր, չմիշմիացնում, փռացնում, հառաչում... յես նայում ելի նրա գեմքին՝ զարմանքից բերանս բաց։ Նա, ինչպես յերեսում ե, առաջ եր թափում բոլոր վրդովմունքները, վիրավորանքները և ինձնից ունեցած անբավականությունները, վոր զիզիկել էր իր մեջ մեր ճանապարհորդության ամրող ժամանակ։ Ավելի խորը համոզելու համար նա մատով խփում էր կրծքիս և ուսերս շարժում, իսկ ավելի ուժգին տեղերում՝ ամրող մարմնով վրաս եր գալիս։ Մեզ թրջում էր անձրել, մեր վերեն անընդհատ թնդում էր վորոտը, և Շաքրոն, վորպեսզի ձայնը լսեմ, գոռում եր, վորքան ուժումը կար։

Իմ դրության տրագիկոսիդմն ավելի ու ավելի պարզ յերեւաց իմ առաջ և ինձ ստիպեց, վորքան ուժ ունեի, քրքջալ...
Շաքրոն թքելով՝ յերեսը դարձրեց ինձանից:

IX

...Վորքան ավելի ելինք մոտենում Թիֆլիսին, այնքան Շաքրոն ավելի յեր դառնում կենտրոնացած ու մուալլ... Ինչ-վոր նոր բան եր յերեւամ նրա նիհարած, բայց ելի անշարժ դեմքին Վլաղիկավզից վոչ հեռու մտանք մի չերքեզական առւլ (գյուղ) և այնտեղ վարձեցինք սիմինդր քաղելու:

Յերկու որ բանելով չերքեզների մեջ, վորոնք համարյա չելին խոսում ոսերեն և անդադար ծիծաղում ելին մեղ վրա ու հայնուում մեղ իրանց լեզվով, մենք վճռեցինք առւլից հեռանալ՝ առւլցիների դեպի մեղ ավելի ու ավելի առող թշնամական վերաբերմունքից վախեցած: Առլից տաս վերստաչափ հեռացել ելինք, յերբ Շաքրոն հանկարծ դուրս քաշեց ծոցից լեզվիական քիսելի մի վաթեթ և հրճվանքով ցուց տվալ ինձ, բացականչելով.

— Ել հարկավոր չի բանալ: Կծախենք—ամեն բան կառնենք: Հերիք կանի մինչև Թիֆլիս: Հասկաննեմ ես:

Յես վրդովիլ ելի կատաղության աստիճան և քիսելը խելալով՝ մի կողմ ու յետ մտիկ տվի: Չերքեզները հանաքմասխարություն չգիտեն: Դրանցից քիչ առաջ մենք կազակներից լուել ելինք այսպիսի պատմություն, մի բոստակ՝ հեռանալիս այն առւլից, ուր բանել եր, վերցրել տարել եր մի յերկաթե զզալ: Չերքեզները յետեցի հասել ելին, խուզարկել, գտել ելին նրա մոտ այդ գուալը և փորը խանչալով պատուելով՝ զզալը խորը դրել ելին նրա վերքի մեջ, իսկ հետո հանգիստ հեռացել թողնելով նրան դաշտավայրում, վորտեղից կազակները նրան տարել ելին կիսակենդան: Նա յեր այս պատմել նրանց և ստանիցայի հանապարհն մեռել: Կազակները հաճախ և խիստ զզուշացնում ելին մեղ չերքեզներից, պատմելով խրատական պատմություններ այս վոգով, և յես հիմք չունելի նրանց չհավատալու:

Յես հիշեցրի Շաքրոյին այս մասին: Նա առաջս կանգնած լսեց և հանկարծ լուռ, ատամները կրծտացներով ու աչքերը կկոցելով, կատվի պես վրաս հարձակվեց: Հինգ րոպեյի չափ մենք հիմավորապես քոթկում ելինք իրար, և վերջապես Շաքրոն դայրութով պոռաց:

— Յերիք ե...

Զարչարված՝ մենք յերկար ժամանակ լուռ ելինք, իրար զեմ հստոտած... Շաքրոն խեղճ-խեղճ նայեց այն կողմը, ուր շպրտել ելի կարմիր քիսելը, ու ասաց:

— Ինչիք համար կովեցինք: Ֆան, ֆան, ֆան... Շատ հիմար բան եւ Միթե յես քեզնից ելի զողացեր... Դու բան ես անում, յես չեմ կարողանում... Յես ինչ անեմ: Ուզում ելի քեզ ոգնել...

Յես աշխատեցի բացատրել նրան, թե ինչ բան և զողությունը...

— Խնդրեմ, լըռ-ոիր: Քո գլուխդ փետի նման ե...—արհամարհական ձեռվ ասաց ինձ և բացատրեց.—Կմեռնիս, վոր զողանաս: Հը: Բայց միթե սա կանք եւ: Ձենդ կտրիր:

Վախելով, վոր նրան նորից կզրկում, լոեցի: Այդ արդեն գողության յերկրորդ զեպքն եր: Դեռ առաջ, յերբ մենք Զերնոմորիայում ելինք, նա թոցքել եր հուզն-ձկնորսներից մի գրավանի կշեռք: Այն ժամանակ ել քիչ եր մնացել կովեցինք:

Մենք շարունակեցինք ճանապարհը: Նա որ-ավուր դառնում եր ավելի ու ավելի մոալ և նայում եր վրաս տարորին, աչքի տակով: Մի անգամ, յերբ արդեն անցել ելինք Դարյալի կիրճը և իջնում ելինք Գուղառուրից, նա արագես խոսեց.

— Մի յերկու որից Թիֆլիս կհասնենք: Ծծը, ծծը,—ծթծը-թաց նա լեզվով և բացվեց բավականությունից:—Կզնամ տուն,—մւու ելիր:—Ճանապարհորդում ելի: Բաղնիս կզնամ... ըհա: Կուտեմ շատ... միս, շատ: Մորս կասեմ շատ եմ սոված: Հորս կասեմ ներիր ինձ, յետ շատ ցավ ու կանք եմ տեսել... զանազան տեսակ: Բույակները շատ լավ մարզիկ են: Յերբ պատահեմ, մի ոռլիք կտամ, կտանեմ զինետուն, կասեմ—զինի խմիր, յես ինքս ել եմ րուսակ յեղել: Հորս քեզ համար կասեմ... Այ մարզը, —մեծ յեղոր պես եր ինձ համար... բան եր սովորեցնում ինձ: Ծեծում եր ինձ, շունը... կերակրում եր: Յեվ հիմի, կասեմ, զու կերակրիր սրան զրա տեղակ: Մի տարի կերակրիր—այ թե ինչքան: Լսում ես, Մաքսիմ:

Յես սիրում ելի լսել յերբ նա խոսում եր այդպես. նա մի տեսակ պարզ և մանկական տեսք եր ստանում այզպիսի վայրկաններում: Այդպիսի խոսքերն ինձ համար հետաքրքիր ելին և այն պատճառով, վոր յես Թիֆլիսում վոչ մի ծանոթ մարդ չունելի, իսկ ձմեռը մոտենում եր. Գուղառուրում արզեն բուք պատահեց մեզ: Յես Շաքրոյի վրա միքիչ հուս ունելի:

Մենք արագ ելինք գնում: Անա և Մցիւթը—իրերիալի. Հին մալրաքաղաքը: Վաղը Թիֆլիս կհասնենք:

Դեռ հեռվից, հինգ վերստաչափ տարածության վրա, յետ

սա... Կովկասի մայրաքաղաքը՝ լեռկու սարերի մեջ սեղմված: Ճանապարհի վերջն եր Յես ուրախ ելի մի տեսակ, Շաքրոն—անտարեր: Նա բութ հայացքով առաջ եր նայում և մի կողմ թքոտում քաղցի փոխնքը, հիվանդու ծածածությամբ շարունակ փորք բռնելով: Այդ նա անզգուշությամբ հում գաղար եր կերեւ, վորքաղիլ եր ճանապարհին:

— Դու կարծում ես՝ իս—վրացի ազնվականս—կդնամ իմ քաղաքն որըցերեկով այսպես, ինչպես վոր կամ, պատուաված ու կեղաստ: Զե՞չե... Մենք կսպասենք յերեկոյին: Կանզնիր:

Մենք նստեցինք մի գատարկ շինության պատի տակ և վերջն ծխախոտի զլանակները վառելով, ցրտից գորդողալով, ծխեցինք: Ռազմավիրական ճանապարհից փչում եր սուր և ուժեղ քամի: Շաքրոն նստել՝ ատամների արանքով յերգում եր մի թախծալի լերգ... Յետ մտածում ելի մի տաք սենյակի և նստակաց կանքի՝ թափառական կյանքի հանդեպ յեղած մցուս առավելությունների մասին:

— Գնանք,—տեղից բարձրացավ Շաքրոն վճռական դեմքով: Մթնեց: Քաղաքը վառում եր ճրագները Այդ գեղեցիկ երկրակները հետզհետե, մեկը մյուսի յետերից ինչ-վոր մի տեղից դուրս ելին ցատկում խափարի մեջ, վոր պատել եր այն հովիտը, ուր քաղաքն եր թագնված:

— Լսիր, ինձ տուր այդ բաշլըզը, վոր լերես ծածկեմ... թէ չե՞ ծանոթներս ինձ կճանաչեն...

Յես բաշլըզ տվի: Մենք գնում ելինք Ոլգինսկայա փողոցի: Շաքրոն սուրում եր ինչ-վոր մի վճռական բան:

— Մաքըլիմ: Տեսնում ես ձիքարշի կալարանը—վերայի կամուրջը: Նստիր ենտեղ, սպասիր: Յես մանեմ մի տուն, ընկերոջոց հարցնեմ մերոնց մասին, հորս, մորս մասին...

— Շնուտ կդաս:

— Իսկսւն: Մի մոմենտ...

Նա արագ ներս խցկվեց մի մութ ու նեղիկ փողոց և անհետացավ նրանում... ընդմիշտ:

Յես այլևս յերեք չպատահեցի այդ մարդուն—իմ ուղեկցին կյանքիս համարյա ամբողջ չորս տարվա ընթացքում, բայց յես հաճախ եմ հիշում նրան՝ բարի զգացմունքով և ուրախ ծիծաղով:

Նա ինձ սովորեցրեց շատ բան, վոր չես գտնիլ իմաստունների գրած հաստ Փոլիանտներում (մեծածալ գրքերում), վորով-հետեւ կյանքի իմաստությունը միշտ ավելի խորն ու ավելի ընդարձակ և մարդկանց իմաստությունից:

ԸՆԹԵՐՑՈՂ

Գիշեր եր, յերբ յես փողոց գուրս յեկա մի տանից, ուր մոտիկ մարդկանց շշանում կարգացի իմ առաջին տպված պատմքածքը: Ինձ շատ ելին գովում, և յես ախորժելի հուզմունքի մեջ դանդաղ քայլում ելի ամայի փողոցով՝ կյանքիս մեջ տուային անգամ այցպես լիուլի զգալով ապրելու հաճուկքը:

Փետրվար ամսին եր, պարզ գիշեր եր, և անամպ լերկինքը խիստ աստղերով սփռված՝ զվարիթ ցրտություն եր չնշում յերկրին, վոր ծածկված եր հենց նոր յեկած ձյունի շրեղ զարդարանքով: Շառերի ճյուղերը ցանկապատից կախվելով՝ ճանապարհիս վրա դցում ելին սովերների հրաշալի նկարներ, պայծառ և զվարիթ պսպղում ելին ձյունի բյուրեղները լուսնի կապտագույն հեղ փայլի ներքո: Վոչ մի տեղ չեր յերեկում կենդանի ելակ, և վոտքերիս տակ ձյունի ճռճողը միակ ձախնն եր, վոր ընդհատում եր ինձ համար անմոռաց այդ պայծառ զիշերվա խորհրդավոր լուսնունը... Յես մտածում եմ:

— Լավ ե աշխարհիս վրա մարդկանց մեջ մի բան լինելը: Ու յերեակացությունս՝ չխնայելով պայծառ գույներ, նկարում եր ապագաս...

— Այս, գուք մի հրաշալի բան եք գրել... այդ փաստ ե, մտախոհ, կերպով ասաց մեկը յետեկցու:

Յես ցնցվեցի անակնկալությունից և շուրջն նայեցի:

Մուգ գույն հագած մի փոքրիկ մարդ հասավ ինձ և հավասար քայլեցի ինձ հետ՝ վարից վեր գեմքիս նայելով և ժպտարով: Նրա մենինչը սուր եր—հայացքը, այտուկըները, եսպանիոլիով ծնոտը, նրա փոքրիկ, չորչորոտկ կերպարանքն ամբողջովին աչք եր ծակում իր տարորինակ տձեռությամբ. քայլում եր թեթև և, կարծես, անձախ, ասեմ՝ սահում եր ձյունի վրայով: Յես նրան չելի տեսել այն տանը, ուր կարգում ելի, և հասկանալի յե, նրա ձայնից զարմացած ելի: Ո՞վ ե սա և վորտեղից:

— Դուք... նույնպես լուս ելիք, հարցըրի յես:

— Այս, հաճուկք ունեցա:

Նա խոսում եր տեսոր ձայնով։ Նրա շրթունքները նուրբ էին. սև, փոքրիկ ընչացքը չեր ծածկում նրանց ժպիտը, վոր չեր անհետանում և անախորժ տպավորություն եր թողնում, վորովնետեղ զգում եի, վոր այդ ժպատի տակ թագնված եր մի տեսակ կծու՝ ինձ համար աննպաստ միտք։ Սակայն յես այնչափ լավ եի արամաղրված, վոր չեի կարող կանգ առնել ուղեկցիս այդ գիծը դիտելու, և իրը ստվեր սահելով աչքիցս, արագ անհետացավ այն, տեղի տալով իմ պայծառ ինքնագոռության։ Յես գնում եի նրա հետ քովերով և սպասում եի, թե ինչ կասի նա, ծածուկ հուսալով, վոր նա կալելացնի այն հաճելի բովեների թիվը, վոր վայելեցի այդ յերեկո։ Մարդս աղաճ ե, վորովնետեղ ճակատագիրը շատ հազիվ և ժպառմ նրան գգվանքով։

— Լավ ե իրան մի բացառիկ բան զգալը, չ։— հարցրեց ուղեկիցս։

Նրա հարցի մեջ առանձին վոչինչ չնկատեցի և շտապեցի համաձայնել նրա հետ։

— Խե-խե-խե, — կծու ծալրով ծիծաղեց նա՝ նյարդու շփելով իր փոքրիկ ձեռքերը բարակ, կառչող մատներով։

— Դուք ուրախ մարդ եք յեղել...— սառնությամբ ասացի վեա՝ նրա ծիծաղից վիրավորված։

— Հա, յես ուրախ մարդ եմ, — հաստատեց նա և զլուխը թափ տվեց։— Նաև շատ հետաքրքիր եմ... միշտ ուզում եմ իմանալ. ամեն բան իմանալ—այդ իմ մշտական ձգտումն ե, և հենց այդ և վոր իմ մեջ պահպանում ե ժրություն և համարձակություն։ Այ, հենց հիմա կամենում եմ իմանալ, ինչ արժի ձեղ համար ձեր հաջողությունը։

Յես նրան նայեցի և ակամա պատասխանեցի։

— Մի ամսի չափ աշխատանք... Կարելի յե միքիչ ավելի...»

— Բնը, — արագ հարեց նա։— Միքիչ աշխատանք, հետո կենսական փորձի մի մասնիկ, վոր միշտ մի բան արժի... Սակայն, այնուամենայնիվ, այդ թանգ չե, և զուք այդ գնով ձեռք եք բերում այն գիտակցությունը, թե ահա այս վայրկանիս միքանի հաղար մարդ ապրում ե ձեր մտքերով, ձեր յերկը կարդալով։ Յեվ ապա հույս ե ծագում, թե կարելի յե, ժամանակով... ին, ին... և յերբ զուք մեռնեք... ին, ին, ին... Այս բոլորի համար կարելի յե ավելին տալ, ավելի՞ քան զուք մեղ տվիք—այնպիս չ։

Նա դարձալ ծիծաղեց իր քոքուն և խայթող ծիծաղով՝ խո-

քամանկությամբ վոտից զլուխ ինձ նայելով, սուր, սև փոքրիկ աչքերով։ Յես ել նրան նայեցի վերից վար և վիրավորված՝ սառնությամբ հարցրի նրան։

— Ներեցեք... Ո՞ւմ նետ հաճուցք ունիմ խոսելու։

— Ո՞վ եմ յես։ Գլխի չեք ընկնում։ Իսկ յես առաջման ձեզ չեմ ասիլ ով եմ... Մըթե ձեզ համար ավելի կարեոր և մարդու անունը գիտենալը, քան այն, թե ինչ կասի նա։

— Իհարկե, վոչ...— պատասխանեցի յես.— բայց այս բոլորը տարորինակ ե...»

Նա, չգիտեմ ինչու, ձեռք տվեց վերարկվիս թեին և կամաց ձիձաղելով՝ ասաց։

— Ես, թող լինի տարորինակ. ինչու մարդս յերբեմն թուզ չտա իրան գուլոս գալու սովորականի և առորյա աշխակից... և յեթե դուք հեռու չեք այդ անելուց—յեկեք անկեղծորեն խոսենք։ Յերեականեցեք, թե յես ընթերցող եմ... մի տարորինակ ընթերցող, վոր շատ հետաքրքիր ե և կկամենար իմանալ, ինչու համար և ինչպես և պատրաստվում գիրքը... որինակ, ձերը։ Դեհ, յեկեք խոսենք։

— Ո, խոնդրեմ...— ասացի յես։— Ինձ շատ հաճելի յե... այսպիսի հանդիպումն ե... խոսակցություն հնարավոր և վոչ ամեն որ։— Բայց յես արդեն ստում եի, վորովնետեղ ինձ համար այս բոլորը դառնում եր անհամու։ Մտածում եի. — Ինչ ե ուզում սա, և ինչ հիման վրա յես ինձ թուզ կտամ այս փողոցային հանդիպումին տալ մի տեսակ բանավեճի բնուցի։

Սակայն յես, այնուամենայնիվ, կամաց գնում եի ներա հետ և աշխատում եի զեմքիս վրա արտահայտել սիրալիր ուշադրություն զեսպի ուղեկիցս։ Այս բանը, հիշում եմ, ինչ դժվարությամբ եր հաջողում։ Բայց և այնպիս զվարթ տրամադրություն զես շատ ունեցի։ Յես չեք կամենում վիրավորել այս մարդուն՝ մերձելով խոսակցել նրա հետ։ միայն վճարեցի զգուշ լինել։

Մեր յետեկից լուսինը փալլում եր յերկնակամարի վրա, և մեր սավերները ընկած եին փոտքներիս տակ։ Միանալով և մի խավար բիծ կազմելով՝ նրանք մայթի վրայով սողում եին մեր առջենց, իսկ յես նայում եին նրանց և զգում եի, վոր իմ մեջ ծագում եր մի բան, վորը, այդ ստվերների նման, խավար եր, անըմբունելի, և ինչպիս նրանք, նույնպիս առջիս եր։

Ուղեկիցս բողեցաչափ լոեց և հետո խոսեց իր խոնհերին տիրապետող մարդու ինքնավասահ յեղանակով։

— Աշխարհիս վրա չկա վոչինչ ավելի կարևոր ու հետաքըլր-քիր, քան մարդուս արարքների գրղիչը... Այնպէս չէ:

Յես զիլով արի:

— Դուք համաձայն եք... Աւրեմն յեկեք անկեղծորեն խո-սենք... անկեղծ խոսելու առիթը բաց մի թողնեք, քանի դեռ ջանել եք...

— Տարորինակ մարդ.—մտածեցի յես և նրա խոսքերով հե-տաքրքրված՝ հարցը ծիծաղելով.

— Բայց այդ ի՞նչպէս... միանգամից: Յեվ ինչի՞ մտածի՞ խոսենք:

— Հապա ինչո՞ւ գանգաղ շարժվենք, յերը մի թոփչքով կա-րելի յե նպատակին հասնել.—աշխուժ պատասխանեց նաև՝ դեմ-քիս նայելով և վաղեմի բարեկամի մտերմությամբ բացականչեց:

— Խոսենք գրականության նպատակիների մասին:

— Խոզրեմ... թեպետ և, ինձ թվում ե, արդեն ուշ ե...

— Ո, ձեզ համար դեռ ուշ չե...

Յես կանգ առա՞ այդ խոսքերից զարմացած. նա արտասա-նեց այդ խոսքերը այնպիսի լուրջ համոզմունքով... և նրանք հնչում եին վորպին փոխարեւություն: Յես կանգ առա, ցանկա-նալով մի բան հարցնել նրան, բայց նա ձեռքս բռնելով՝ կտմա-ցուկ և զոռով առաջ տարավ, ասելով.

— Մի կանգնեք, վորովհետեւ ինձ հետ գուք լսվ հանա-պարհի վրա յեք... Բավական և այսքան հասածարանը: Ասացնք ի՞նչ և ուզում գրականությունը... զուք նրան ծառայում եք, պարտավոր եք այդ զիտենալ:

Զարմանքա աճում եր ի վաստ ինքս ինձ իշխելուն: Ի՞նչ է ուզում այս մարդն ինձանից: Ա՞վ ե սա:

— Բարեկամ,—ասացի յես,—համաձայնեցնեք, վոր ամենը, ինչ կատարվում և մեր մեջ...

— Ունի բավականաշափ հիմք,—հավատացնեք ինձ: Զե՞ վոր աշխարհումս վոչինչ չի կատարվում առանց բավականաշափ հի-մունքի... Աւրեմն գնանք արագ, բայց վոչ թե առաջ, այլ խորը...

Սնվիճելի յե, վոր այս խենթը հետաքրքրական եր, բայց նա ինձ բարկացնում եր: Յես գարձալ մի անհամբեր շարժում գործեցի գեպի առաջ. նա գալիս եր իմ յետեցից և հանդարտ առում եր ինձ.

— Յես ձեզ հասկանում եմ. ձեզ դժվար և այս վայրկանիս վորոշել այն նպատակը, վորին հետեւմ և գրականությունը:

Յես կփորձեմ վորոշել...—նա հառաչեց և ապա ժպտերես նայեց դեմքիս:

— Դուք կհամաձայնեք ինձ, յեթե յես ասեմ, վոր վրակա-նության նպատակին և—ոզնել մարդուն իրան ճանաչե-լու, զորացնել նրա հավատը գեպի իր անձը և զարգացնել նրա մեջ ձգտումը վեպի ճշմարտությունը, մաքանել մարդկանց մեջ տիրող գատարկության գեն, ունակությունն ընձեռել նրանց մեջ լավը գտնելու, զարթեցնել նրանց սրտի մեջ ամոթ, բարկությունն, քաջությունն, անել ամեն բան նրա համար, վոր մարդիկ գտնանա-յին ազնիվ ու զորեղ և կարողանացին ներշնչել իրանց կանքին գեղեցկության նուրբ վոգի: Ահա իմ բանաձելք. սա, իհարկե, լիա-կատար չե, ընդհանուր գծերով ե... Լրացլեք սրան այն ամենով, ինչ կարող և վոգի ներշնչել կանքին, և ասացեք՝ համամիտ եք ինձ:

— Այս, այդ այգպես ե...—ասացի յես:—Մոտավորապես այդ-պիս ե: Ընդունված և մտածել, վոր ընդհանրապես գրականու-թյան նպատակին և ազնվացնել մարդուն...

— Ահա թե ինչ մեծ գործի յեք ծառալում դուք.—ազգու-յեղանակով ասաց այս մարդը... և նորից ծիծաղեց իր կծու ծի-ծաղով:—խե, խե, խե:

— Սկայն ինչո՞ւ համար եք ասում այս բոլորը.—հարցը չես, այնպէս ձեւացնելով՝ իրը թե նրա ծիծաղն ինձ չի վիրավո-րում:

Հապա գուք ի՞նչ եք մտածում, ասացեք անկեղծ..

Սնկեղծ ասած....սկսեցի յես, մտածելով մի կծու ծաղը, և լսեցի: Ի՞նչ և նշանակում անկեղծ խոսել: Այս մարդը հիմար չե, նա պետք և զիտենա, թե վորքան նեղ են մարդուս անկեղ-ծության սահմանները, և ինչպէս ամուր և պահպանում նրանց ինքնասիրությունը: Նայելով ուղեկցիս զեմքին՝ յես ինձ խորը խայթված զգացի նրա ժպտից—այնքան հեղանաք և կծու ար-համարհանք կար նրանում: Յես գարձալ զգում եիի, վոր սկսում ևմ մի բանից վախենալ, և այդ յերկուողն ինձ ստիպում եր հե-ռանալ նրանից:

— Ցտեսություն,—ստոնությամբ ասացի յես՝ զիսարկս վեր-ցընելով:

— Ինչո՞ւ.—հանդարտ բացականչեց նա:

— Յես չեմ սիրում կատակը, յեր նրա մեջ չկա չափի զգացում:

— Աւրեմն զնամը եք... Զեր բանն ե... բայց, զիտե՞ք, յեթե գուք այժմ հեռանաք ինձանից, մենք այլևս չերեք չենք հանդիպել:

«Յերեք» խոսքը նա շեշտեց, և զա հնչում եր իմ ականջին ինչպես թաղման զանգահարություն։ Ասում եմ այդ խոսքը և վախճնում եմ նրանից. նա ինձ միշտ պատկերանում և ծանր ու սառն, մուրճի պես մի բան, վոր ճակատագրով սահմանված և մարդկանց հույսերը փշելու համար։ Այդ խոսքը կանգնեցրեց ինձ։

— Ի՞նչ եք կամենում, — թախծով և սրտնեղությամբ հարցը յես։

— Նստենք այստեղ, — սորից քմծիծաղ տալով՝ արտասանեց նա և ձեռքս պինդ բռնելով՝ ցած քաշեց։

Այդ վայրկանին մենք քաղաքալին այգու ծառուղու վրա եցինք, ակացիաների և համեմեների անշարժ և սառցապատ ճյուղերի մեջ։ Լուսնի լուսով լուսավորվելով՝ նրանք կախված էին ողի մեջ իմ գլխավերեր, և ինձ թվում եր, թե սառուցով և յեզամով ծածկված այդ կոշտ ճյուղերը թափանցում են կործքու և դիպչում են սրտիս։

Ուղեկցիս արտասովոր վարմունքից շվարած և տարակուսած յես նայում եմ նրան և լուսմ։

— Սա հիվանդ ե, — մտածեցի յես՝ կամենալով քաջալերել ինքս ինձ և բացատրել նրա արարքները։ Սակայն նա, չզիտեմ ինչպես, գուշակեց միտքու։

— Դու կարծում ես, վոր յես առողջ չեմ։ Թող այդ՝ ի՞նչպիսի դատարկ, վտանգավոր միտք։ Նրանով նախապաշարվելով՝ ի՞նչպես հաճախ հրաժարվում ենք մենք հասկանալ մարդուն միայն այն պատճառով, վոր նա մեղանից ինքնուրույն ե, և այդ միտքն ինչպես պինդ պահպանում և բարդացնում և մեր հարարերությունների տխուր անփութությունը։

— Ո, այս, — ասացի յես, ավելի ու ավելի դորեղ շփոթմունք զգալով այս մարդու առաջ։ — Սակայն, ներեցեք, յես կդնամ... արդեն ժամանակ ե։

— Գնա... սակայն իմացիր, վոր դու շտապում ես քեզ կորցնելու... — Նա բաց թողեց ձեռքս, և յես հեռացաւ։

Նա մնաց այգում, բլուրի վրա, վոր իջնում եր գեղի վոլ գան և վորը ծածկված եր ճյունի սպիտակ սավանով և կտրատված եր շավիղների մուզ յեւիղներով։ Նրա առաջ բացվում եր

ընդարձակ տեսարան գետի այն կողմը՝ անմոռունչ տիբրագին հարթավայրի վրա։ Այն մարզը մնաց ալգում, նստավ նստարաններից մեկի վրա և սկսեց նայել զեպի ամայի հեռաստանը։ իսկ յես գնում եմ ծառուղու յերկարությամբ և զգում եմ, վոր նրանից չեմ նեռանալ, բայց և այնպես գնում եմի։ Գնում եմի և մտածում. — կամաց, թե արագ պետք ե գնամ, վոր ցուց տամ նրան այնտեղ՝ յետեր նստած մարդուն, թե վորքան աննշան ե նա ինձ համար։

Անա նա կամացուկ շվշացնում և մի ծանոթ բան... Յես գիտեմ, ծիծաղաշարժ տխուր մի յերգ եր մի կուպի մասին, վոր հանձն եր առել կուպիրի առաջնորդի գերը։ Ենչու նա հենց այդ յերգն և շվացնում. — մտածեցի յես։

Յեկ այստեղ յես հասկացա, վոր այն բոպեցից, յերբ հանդիպեցի այս փոքրիկ մարդուկին, յես մտա բացառիկ և տարրոբինակ պգացողության մթին շրջանը։ Իմ վոզու առաջվա միապաղաղ և գոհ արամագրությունը սքողից մի կարեռ և ծանր ակնկալության մշուշով։

— «Ի՞նչպես կլինես առաջնորդ,

Յերբ ուղին և անձանոթ»։

Ճիշում եմ այն յերգի բառերը, վոր շվացնում եր մարդը։

Յես շուր յեկա և նրան նայեցի։ Մեկ ձեռքսվ ծնկին հենած և պլուխն ափին գրած։ Նա նայում եր ինձ, շվացնում եր, և նրա սե ընչացքը շարժվում եր լուսով լուսավորված յերեսին։ Մի ճակատագրական զգացմունքից դրված վճռեցի յետ դառնալ, Արագ մոտեցա, նստեցի կողքին և սսացի նրան անվրդով, բայց ջերմորեն։

— Բարեկամ, խոսենք պարզորեն...

— Այդ անհրաժեշտ և մարգկանց համար, — զլիսով արեց նա։

— Դուք, զգում եմ, մի տեսակ ուժ ունեք ինձ վրա ազգելու և, պարզ ե, ինձ բան ունեք ամելու. համ։

— Վերջապես, զու քո մեջ քաջություն գտար ինձ լսելու. — բացականչեց նա ծիծաղելով. բայց այժմ այդ ծիծաղը մեղմ եր, և մինչև իսկինձ թվաց, թե ուրախության պես մի բան լսեցի նրանից։ — Դեհ, խոսեցեք. — ասացի յես. — և յեթե կարող եք, խոսեցի առանց տարրինակությունների։

— Ո՛, շատ լավ։ Բայց համաձայնիք, վոր տարրինակությունն անհրաժեշտ եր նրա համար, վոր ուշագրությունդ գրավիչի դեպի ինձ։ Այժմ բթանում և մարդուս ուշագրությունը գեղով սովորական ու սպազը՝ իրբե չափազանց պաղ ու կողին

բան. իսկ ջերմացնել և նորբացնել մի բան մենք չենք կարող—
ինքներա սառն ենք ու կոպիտ. Մենք, թվում ե, նորից կամենում
ենք անուրջներ, գեղեցիկ մտացածին բաներ, ցնորք և տարորի-
նակություն, վորովհետեւ մեր ստեղծած կյանքը թափուր և գույ-
ներից, նսեմ ե և ձանձրալի: Իրականությունը, վոր մենք յերքեմն
այնպես տաք-տաք ուզում ելինք բարեշրջել—ջախջախեց և արու-
րեց մեզ... Ի՞նչ անենք: Փորձենք, թերևս մտացածինը և յերևա-
կալությունն ոգնեն մարդուս կարճ ժամանակով վեր ամբառնալ
յերկից յերևսից և լավ զննել նրա վրա իր կորցրած տեղը: Կորցը-
րած, այնպես չե: Չե վոր մարդս այժմ յերկի թազավորը չե, այլ
կյանքի ստրուկը. կորցրեց նա իր անդրանկության պարծանքը՝
խոնարհվելով փաստերի առաջ. այնպես չե: Իր ստեղծած փաս-
տերից նա հանում և յեղակացություն և ասում ե ինքն իրան.
ահա անփոփոխ որենք: Ու յենթարկվելով այդ որենքին՝ նա չի
նկատում, վոր արգելը և դառնում իր՝ քանդելու և ստեղծելու
իրավունքի պաշտպանության համար վարած պայքարին: Ասենք,
նա այս չի յիլ մաքառում, այլ միայն համակերպում ե... Ի՞նչո՞ւ
համար մաքառել: Նրան ով և տվել այն իդեալները, վորոնց հա-
մար նա անձնվիրություն ցուց տար: Ահա թե ինչու կյանքն
աղքատ և և տաղտկալի. ահա թե ինչու մարդուս մեջ թու-
լացել և ստեղծագործող վոզին... Վոմանք կուրորեն վո-
րոնում են մի բան, վորը մաքին թե տալով վիրականգներ մար-
դուս հավատը զեպի իր անձը: Հաճախ զնում եմ վոչ այն կողմը,
ուր գտնվում է հավիտենականը, մարդկանց միացնողը, ուր գտն-
վում և աստված... Նրանք, ովքեր վրիպում են զեպի ճշմարտու-
թյունը տանող հանապարհների մեջ,—կիորչեն: Թող կորչեն, չպետք
ե նրանց խանգարել. չարժե նրանց ափասալ—մարդ՝ շատ, կարե-
զոր և ձգտումը, կարեոր և հոգու իդը—գտնել աստծուն. և յեթե
կյանքի մեջ կիմնեն աստծուն ձգտող հոգիներ, այդ աստվածը
կիմնի նրանց հետ և կիենդանացնե նրանց. վորովհետեւ նա ան-
վերջ ձգտումն ե զեպի կատարելությունը... Այսպես ե:

— Այն,—ասացի յես.—այդ այգպես ե...

— Սակայն, զու գիտես համաձայնել,—նկատեց խոսակիցս
կծու քմծիծաղ տալով: Հետո նա լոեց՝ հեռուն նացելով: Ինձ թվաց,
թե նա յերկար և լուսմ, և յես անհամբեր ախ քաշեցի: Այդ ժա-
մանակ նա ինձ չուղղելով իր հայացքը, վորովհետեւ նա ան-
վերջ ձգտումն ե զեպի կատարելությունը.

— Ո՞վ ե քո աստվածը:

Մինչև այս հարցը նա խոսում եր մեզմ ու քաղցրությամբ,
ու ինձ հաճելի յեր նրան լսելը. ինչպես բոլոր մտածող մարդիկ՝
նա միքիչ տիտուր եր, մոտիկ եր իմ սրտին. յես նրան հասկա-
նում եմ, և իմ շփոթմունքը անհետանում եր: Յեվ ահա հանկարծ
նա գնում և վճռական մի հարց, վորին այնքան դժվար և պա-
տասխանել մեր ժամանակի մարդուն, յեթե այդ մարդն ազնվա-
րաը և վերաբերվում իրան: Ո՞վ ե իմ աստվածը. իրանի թե գի-
տենայի այդ:

Յես ընկճված եմ այդ մարդու հարցից. և ով իմ տեղը կը-
պահպաներ հոգու արիություն: Իսկ նա նայում եր ինձ իմ սուր-
աչքերով, շարունակ ժպտում եր և սպասում իմ պատասխանին:

— Դու շատ յերկար ես լուսմ, իրեն մի մարդ, վոր կարող
եր ինձ պատասխան տալ: Կարելի յե զու ասես ինձ վորեն մի
բան, յեթե յս քեզ հարցնմ. ահա թե ինչ, զու գրում ես, և հա-
զարավոր մարդիկ կարդում են. ախր խակապես զու ի՞նչ ես քա-
րոզում: Յեվ մտածել ես, թե արդիոք զու իրավունք ունես ոս-
կորեցնելու:

Կյանքիս մեջ առաջին անգամ այսպես ուշի-ուշով նայում եմ:
իմ խորքը: Թող չմտածեն, թե յս բարձրացնում կամ ստորաց-
նում եմ ինձ նրա համար, վոր մարդկանց ուշքը գրավեմ զեպի
ինձ,—աղքատից վողորմություն չեն խնդրիլ: Յես իմ մեջ զտա-
շատ բարի զգացմունքներ և իդեկը, շատ բան, վոր սովորաբար
կոչվում ե լավ, բայց այս բոլորը շաղկապող զգացմունք, կյանքի
բոլոր յերեսուցիներն ընդգրկող կարգավորյալ և պայծառ միտք—
յես չգտա ինձանում: Հոգուս խորքում շատ ատելություն կա. նա
շարունակ փտում և այնտեղ... յերբեմն ըսնկում ե բարկության
վառ կրակով, բայց ավելի շատ կասկածներ կան այնտեղ: Նրանք
յերեսու այնպես են ցնցում միտքս, այնպես են ճնշում սիրտս,
վոր յերկար ժամանակ յս լինում եմ իներքուստ խորտակված...
Վոչինչ չի զրդում ինձ ապրելու. սիրտս սառն ե՝ ինչպես մեռած.
միտքս թմրում ե. իսկ յերեակայությունս ճնշում և մղձավանջը:
Յեվ այսպես, վորպես կուլը և համբ՝ ապրում ես յերկար որեր և
գիշերներ, վոչինչ չցանկանալով, վոչինչ չհասկանալով. այն ժա-
մանակ ինձ թվում ե, վոր յես արդեն գիտել եմ և միայն տարու-
րինակ թյուրիմացությամբ ատկավին թաղված չեմ: Այսպիսի գո-
յության սարսափն ավելի ես սաստկանում և ապրելու անհրա-
ժեշտության գիտակցությամբ, վորովհետեւ մահվան մեջ ավելի քիչ
իմաստ կա, ավելի շատ—խավար... Հավանական ե, նա խլում ե
նույնիսկ ատելու հաճուքքը...

Ի՞նչ եմ քարոզում յես իսկապես, յես այնպիսի՞ն եմ—ինչպես կամ: Յեկ լինչ կարող եմ ասել մարդկանց: Այն, ինչ արդեւ վազուց ասել են նրանց և միշտ ասում են. ինչ վոր գտնում է լողակներ, բայց մարդկանց լավ չի գարձնում: Բայց իրավունք ունիմ արդյոք քարոզելու այդ գաղափարները և մտքերը, իերը ինքն որանցով դաստիարակված լինելով՝ հաճախ վարչում եմ վոչ պահպիս, ինչպիս նրանք թելադրում են: Յեթե յես նրանց հակառակ եմ գնում, այս նշանակում ե արդյոք, թե նրանց ճշմարիտ լինելու գաղափարն ե իմ անկեղծ համոզմունքը, վոր իմ յեսի հիմքն է կազմում: Արդ, ինչ պատասխանեմ այս մարդուն, վոր նստած ե իմ կողքին, այնինչ նա արդեն հոգնեց պատասխանիս սպասելով և նորից խոսեց.

— Ես չեի դնիլ այս հարցերը, յեթե չտեսնեցի, վոր քո փառասիրությունը գետ չի կարողացել վոչնչացնել քո պատիվը: Դու քաջություն ունես ինձ լսելու... դրանից յեղակացնում եմ, վոր քո սերը դեպի քո անձը խելացի յե, վորովհետև նրան վորացնելու համար դու չես փախչում նույնիսկ տանջանքից: Դրա փոխարեն յես կթեթևացնեմ քո զրությունն իմ առաջ և կիսուից քեզ հետ՝ իրրե զանցառուի, և վոչ հանցավորի հետ:

— Մի ժամանակ մեր մեջ ապրում եին խոսքի մեծ վարպետներ, կյանքը և մարդկային հոգին ճանաչողներ, մարդիկ, վորոնք ներշնչված եին կյանքը բարեշրջելու անզումով ձգտումով, վորոնք համակված եին խորը հավատով դեպի մարդը: Նրանք հորինում եին գրքեր, վորոնց յերեք չի մերձենալ մոռացությունը. վորովհետև նրանց մեջ տպավորված են հավիտենական ճըշմարտություններ, նրանց հջերից բուրում և անթառամ դեկեցիություն: Այդ գրքերի մեջ գծագրված տիպարները կենդանի յեն, վորովհետև շնչավորված են վոգեորության ուժով: Այդ գրքերի մեջ կա և արիություն, և բոցավառ բարկություն. նրանց մեջ հնչում ե աղատ, անկեղծ սերը, և վոչ մի ավելորդ բառ չկա նրանց մեջ: Դիտեմ, այնտեղից ես ստացել քո հոգու մնունքը... Բայց, յերեկ, հոգիդ վատ ե սնվել, վորովհետև քո խոսքերը ճշմարտության և սիրո մասին հնչում են կեղծ. կարծես թե բռնանում ետքեզ վրա, յերը խոսում ես այդ մասին: Դու, ինչպես լուսինը, ուրիշի լուսով ես լուսավորում. քո լուսը նսեմ, աղոտ ե. նաշառ ստվեր ե ծնում, սակայն թուլ և լուսավորում և վոչվորի չի ջերմացնում: Մարդկանց, հիրավի. արթեքալոր մի բան տալու համար դու աղքատ ես. իսկ այն, ինչ վոր դու տալիս ես, տալիս ես վոչ

թե մտքի և խոսքի գեղեցկությամբ կյանքը հարստացնելու բարձր հաճուքից գրգված, այլ ավելի քո գոյության պատահական փաստը մարդկանց անհրաժեշտ յերեսութների շարքը դասելու համար: Դու տալիս ես նրա համար, վոր ավելին ստանաս կյանքից և մարդկանցից: Դու մուրացկան ես ընծա տալու համար, դու ուղղակի վաշխառու յես—քո փորձառության փշրանքը տալիս ես դեպի քեզ յեղած ուշադրության տոլոսով: Գրիշդ անզոր փորփրում և իրականացնությունը, կամացուկ խառնշտում և կյանքի մանր յերեսությունը և նկարագրելով սովորական մարդկանց առորյա զգացմունքները, դու բաց ես անում նրանց մտքի առաջ գուցե և շատ ստոր ճշմարտություններ, բայց կարող ես արդյոք նրանց համար ստեղծել թեկուղ մի փոքրիկ՝ հոգին վսեմացնող պատրանք... Վոչ: Դու հավատացած ես, վոր ոզտավետ բան և առորյա կյանքի տիղմը քրքրելը և նրանց մեջ վոչինչ չգտնելը, բացի տիպուր աննշան ճշմարտությունները, վորոնք հաստատում են միայն այն, թե մարդս չար ե, հիմար, պատվագուրի, վոր նա լիովին և միշտ կախված ե անթիվ արտաքին պայմաններից, վոր նա անդոր և կ վողորմելի, մեսակ ե և ինքն իր մեջ ամփոփված: Գիտես, դու, թերեւս, արդեն կարողացել ես համոզել նրան այս բանում: Վորովհետև նրա հոգին պաղած ե և միտքը բութ... Վոնց չե: Նա գրքերից մեջ տեսնում ե իր պատկերը. իսկ գրքերը՝ մանավանդ յեթե նրանք գրված են այն համոզված յեղանակով, վորն այնպես հաճախ գուք տաղանդի տեղ եք դնում,—միշտ վորոշ չափով հիպնոսացնում և մարդուն: Բու նկարագրի մեջ նա նացում ե իր վրա և տեսնելով՝ ինչքան վատթար ե ինքը, չի գտնում ավելի լավ կինելու հնարավորություն: Միթե դու կարող ես ցուց տալ նրան այդ հնարավորությունը: Միթե դու կարող ես այս բանն անել, յերբ դու ինքդ... Բայց յես կինայեմ քեզ նրա համար, վոր դու ինձ լսելով՝ զգում եմ—չես մտածում այն մասին, թե ինչպիս հակածուն ինձ և քեզ արդարացնես: Այդպես: Վորովհետև ուսուցիչը, յեթե նա ազնիվ ե, միշտ պիտի լինի ուշազիր աշակերտ: Դուք ամենքդ, կյանքի արդի ուսուցիչներդ, ավելի շատ խլում եք մարդկանցից, քան թե տալիս եք նրանց. վորովհետև գուք շարունակ թերությունների մասին եք խոսում, միայն այդ եք տեսնում: Սակայն մարդուս մեջ պետք ե վոր լինի և արժանիք, չե՞ վոր ձեզանում կա, իսկ գուք, դուք ինչով եք զանազանվում սովորական անգույն մարդկանցից, վորոնց նկարագրում եք այնպես խստասիրու և բծախնդիր կերպով ձեզ համարելով առաքինության հա-

թանակի քարոզիչներ, արատ մերկացնողներ: Սակայն դուք նկատում եք արդյոք, վոր առաքինություններն ու արատները՝ դրանց վորոշելու համար գործ դրած ձեր ջանքերի շնորհիվ, լոկ խճճած էն, ինչպես ու ու սպիտակ թելի յերկու կծիկ, վորոնք մերձափոխությունից դարձել են զորշ, իրարից ընդունելով սկզբնական գույնի մի մասը: Յեկ դժվար թե աստված և ձեղ ուղարկել յերկրի վրա... Նա կընտրեր ափելի կարող անձինք, քան դուք եք Նա կվառեր նրանց սիրաը գեղի կյանքը, ճշմարտությունը և մարդիկ տածած բուռն սիրո բոցով, և նրանք կրոցավառվելին մեր զոյտաթյան խավարի մեջ, ինչպես նրա զորության և փառքի ճրագներ... Իսկ դուք ծուխ եք արձակում, ինչպես սատանի հաղթանակի կերպներ, և ձեր ծուխը՝ թափանցելով մաքերը և հոգիները, թունավորում և նրանց անվտահության թույնով: Ապա ինչ եք սովորեցնում դուք:

Այսիս վրա զգում ելի այս մարդու ջերմ շնչառությունը և չելի նայում նրան, վախենալով հանդիպել նրա հայացքին: Նրա խոսքերն ընկնում ելին ուղեղիս մեջ՝ ինչպես հրեղեն կաթիլներ, և դրանից ցավ ելի զգում... Յես սոսկալով հասկանում ելի, թե վորքան դժվար և պատասխանել այդ պարզ հարցերին... Ու չպատասխանեցի:

— Յեկ այսպես, յես, փութաջան ընթերցողս այն ամենի, ինչ գրում ես դու, և ինչ գրում են քեզպեսները, հարցնում եմ. ինչի համար եք գրում դուք: Յեկ շատ ել գրում եք... մարդկանց սրտերի մեջ կամենում եք բարի զգացմունքներ զարթեցնել: Սակայն սառը և անզոր խոսքելով դուք այդ չեք կարող անել. յերբեք: Յեկ դուք վոչ միայն չեք կարող տալ կյանքին վորեն նոր բան, դուք յեղածն ել տալիս եք արորտած, ճմլած և կերպարանքից զուրկ ձեռվ: Զեր յերկերը կարգալով՝ մարդ վոչինչ չի սովորիլ, վոչնչից չի ամաչիլ, ձեր փոխարեն կամաչի: Շարունակ առորյա յերեւլթներ, հասարակ մարդիկ, առորյա մտքեր, յեղելություններ... Հապա յերը պիտի խոսեն խոռված վորու մասին, վորու վերածնության անշրամեշտության մասին: Ո՞ւր են արիության զասերը, մեր են խոր խրոխտ խոսքերը, վորոնք թե են տալիս հոգուն:

...— Դու կարող ես ինձ ասել, վոր կյանքը չի տալիս ուրիշ տիպարներ, բացի նրանցից, վորոնց վերաբարդում ենք մենք: Ազգին մի ասիլ, վորովհետեւ խոսքի վարպետ լինելու յերջանկությունն ունեցող մարդուն ամոթ և և նախատինք և խոստովանել

իր անգորությունը կյանքի ասած և այն, վոր նա չի կարող բարձը կանգնել նրանից: Իսկ յեթե դու կյանքի հետ միենուցն մակերեւութիւ վրա յես կանգնած, յեթե դու յերևակալությանդ ուժով չես կարողանում ստեղծել տիպարներ, վորոնք չկան կյանքի մեջ՝ սակայն անհրաժեշտ են նրան խրատելու համար,— ի՞նչ շահ քու աշխատանքից և ինչով կարգարացնես կոչումդ: Մարդկանց ուշընու միտքը ծանրաբեռնելով աղքատ կյանքի լուսանկարչական վերաբարագրության աղբով, մտածիր, արդյոք մարդկանց չես վասում: Վորովհետեւ, խոստովանիք, դու չես կարողանում նկարագրել այսպես, վոր կյանքի քու տված պատկերը մարդու մեջ զարթեցներ վրեժխնդիր ամօթանք և գորության նոր ձեռք ստեղծելու այրող ցանկություն... Կարող ես արագացնել կյանքի զարթեցներ, կարող ես նրան յեռանդ ներշնչել, ինչպես այդ անում ելին ուրիշները:

Տարորինակ խոսակիցս մի բոպե կանգ առավ. իսկ յես լուռ մտածում ելի նրա խոսքերի մասին:

— Շուրջս տեսնում եմ շատ խելացի մարդիկն բայց աղնիվները շատ քիչ են նրանց մեջ, և յեղածներն ել ընկճված են ու հոգով հիվանդ: Յեկ չգիտեմ ինչու. միշտ այսպես եմ տեսնում, վորքան լավ և մարզ, վորքան անրիծ և աղնիվ և նրա հոգին, վորքան պակաս և նրա մեջ յեռանդը, այնքան նա հիվանդու և, և այնքան ծանը ե զալիս նրան ապրելը: Միախություն և թախիծ— ահա նրա վիճակը: Սակայն վորքան ել շատ լինի նրանց մեջ ավագուցնի տեհաճնքը, չկա նրանց մեջ ստեղծելու կարողություն: Արդյոք նրա համար չեն նրանք ացդպես ընկճված ու խոճալի, վոր նրանց ժամանակին չեն նպաստել հոգին քաջալերող խոսքով...

— Յեկ հետո,— շարունակեց տարորինակ զրուցակիցս, — կարող ես զարթեցնել մարդու մեջ կենսալից ծիծաղ, վոր թարմացնում և հոգին: Տես, ախր մարդիկ բոլորովին մոռացել են կուշտ ծիծաղել: Նրանք ծիծաղում են չարախնդությամբ, ծիծաղում են ստորոտիւմ, հաճախ ծիծաղում են արտասվելով, բայց յերբեք չես լախ նրանց մեջ բերկրալից անկեղծ ծիծաղ, վոր ցնցեր մեծերի կուրծքը. վորովհետեւ լավ ծիծաղը առողջացնում և հոգին: Մարդու անհրաժեշտ ծիծաղելը.— չե վոր ծիծաղը նրա սակավաթիւնիցներից մեջն և կենդանիների վերաբերմամբ, կարո՞ղ ես արդյոք զարթեցնել մարդկանց մեջ վորեն ուրիշ ծիծաղ, բացի նախատինքի ծիծաղը, բացի գուենիկ ծիծաղը, վոր ուղղված

և քեզ, վոր ուղղված ե մարդուն, վորը լոկ նրա համար ե ծիծառ-
ղելի, վոր վողորմելի յե: Հասկացիր, քո քարոզելու իրավունքը
պետք ե ունենա բավականաշափ հիմք՝ քո ընդունակության մեջ—
մարդկանց մեջ անկեղծ զգացմունքներ զարթեցնել, վորոնցով
ինչպես մուրճերով՝ պետք ե ջախջախվի ու կօրծանվի կյանքի մի-
քանի ձևերը նրա համար, վորպեսզի ստեղծվեն ուրիշ ավելի ա-
զատ ձևեր՝ կծկված ձևերի փոխարեն: Բարկություն, ատելություն,
արիություն, ամոթ, զգվանք և, վերջապես, կատաղի հուսահա-
տություն—ահա այն լծակները, վորոնցով կարելի յե ամեն ինչ
քանդել լերկրիս վրա: Կարող ես ստեղծել այդպիսի լծակներ: Կա-
րող ես նրանց շարժել: Փողովրդի հետ խոսելու իրավունք ու-
նենալու համար հարկավոր ե վոր մարդ հոգու խորքերում ու-
նենա կամ մեծ ատելություն դեպի նրա պակասությունները,
կամ մեծ սեր գեպի նաև նրա տանջանքների համար: Իսկ լեթէ
հոգուդ մեջ չկան այդ զգացմունքները, համեստ յեղիր և մի բան
ասելուց առաջ շատ մտածիր...

Արդեն լուսը բացվում եր, սակայն հոգուս մեջ ավելի ու
ավելի թանձրանում եր խավարը: Իսկ մարդը, վորի համար իմ
հոգին գաղտնիք չուներ, հա խոսում եր: Յերեկմն մտքովս անց-
նում եր.

— Արդյոք մարդ ե սա:

Բայց նրա խոսքերով տարրված՝ յես չկարողացա մտածել այդ
հանելուկի մասին, և նորից նրա խոսքերն, ասեղի պես, ուղեղու
ելին խրվում:

— Սակայն և այնպես կյանքն աճում ե և լայնությամբ ու
խորությամբ, թեպես աճում ե դանդաղ, վորովնետե դուք ուժ
և կարողություն չունեք նրա շարժումն արագացնելու: Աճում
ե կյանքը, և որպաշտ մարդիկ սովորում են հարցախրություն:
Ո՞վ պետք ե պատասխան տա նրանց: Դուք պետք ե տալիք, ինք-
նակոչ առաքյալներ: Սակայն այնքան հասկանում եք դուք կյանքը,
վոր բացատրեք ուրիշներին: Արդյոք հասկանում եք դուք ձեր
ժամանակի պահանջները, նախազգում եք ապագան և դուք ի՞նչ
կարող եք ասել կյանքի վատթարությունից քայլաված, վհատած
մարդուն սթափեցնելու համար: Նա վհատած ե, նրա հետաքըր-
քը ությունը դեպի կյանքը ստոր ե, նրանում ցամաքում և արժա-
նապատվությամբ ապրելու ցանկությունը. Նա պարզապես ուղում
և ապրել իբրև խոզ, — և խում եք, — նա լրաբար ծիծաղում և ար-
դեն, իբրը արտասանում են իգեալ խոսքը. մարդս դառնում ե

մոռվ և հաստ կաշվով ծածկված վոսկըների կուլտ. այդ գալքելի
կուլտին շարժում ե վոհ թե վոգին, այլ տուփանքը: Նա ուշագրու-
թյուն և պահանջում—շնուր, ոզնեցեք նրան ապրելու, քանի զեռ
մարդ ե: Բայց դուք ի՞նչ կարող եք անել նրանում կյանքի ծա-
րավ զարթեցնելու համար, իբր միայն նվում եք, հեծեծում, հա-
ռավ զարթեցնելու համար, վեր միայն նվում եք, ինչպես նա քայլա-
վում ե: Կյանքի մթնոլորտում աիրում և քայլաման գարշահո-
տություն: Եերկուսությունը, ստրկությունը սնունդ և տալիս
սրտին, ծուլությունը փափուկ կապանքներ և դնում մտքին ու
ձեռքերին... Ի՞նչ եք մտցնում դուք այս գարշելի քասուի մեջ: Վոր-
քան չնշին եք դուք ամենքդ, վորքան վողորմելի և վորքան շատ:
Այս գերանի թե հայտնվեր գաման և սիրող մի մարդ՝ ալրված սըր-
մուկ ու հզոր, անհուն խելքով: Ամոթաբեր լուության խեղդող մըթ-
ուորդառում կհնչեր մարգարեական խոսքը՝ ինչպես զանդի հար-
գածը, և կարելի յե ցնցվելին կենդանի մեռյալների անարժան
հոգիները...

Այս խոսքերից հետո նա յերկար լոեց: Յես նրան չելի նա-
յում: Չեմ հիշում՝ ինձանում ինչն եր ավելի—ամոթը, թե սար-
ամիւր:

— Ի՞նչ կարող ես ասել ինձ, — հնչեց նրա անտարբեր հարցը:

— Առայժմ՝ վոչինչ,—պատասխանեցի յես:

Առ դարձալ լուություն:

— Իսկ ի՞նչպես պիտի ապրես այժմ:

— Զգիտեմ...—պատասխանեցի յես:

— Ի՞նչ պիտի խոսես:

Յես լոեցի:

— Լուությունից բարձր իմաստություն չկա:

Տաժանելի յեր լուությունն այս խոսքերի և այն ծիծաղի
միջն, վոր հնչեց այնուհետեւ: Նա ծիծաղում եր մեծ հաճուքով,
ինչպես մի մարդ, վոր վաղուց և առիթ չի ունեցել այսպես թե-
թե ախորժելի ծիծաղելու: Միրաս արյուն եր լալիս այս անիծ-
գած ծիծաղից:

— Խե, խե, խե: Յեվ դու կյանքի ուսուցիչ ես: Դու, վորին
այնպես դուրսին և շփոթվելը: Այժմ, կարծեմ, հասկացար, չի՞.
Խե, խե, խե... Յեվ յուրաքանչյուրը ձեզանց՝ ծեր ծնված յերե-
խաներից, հենց այդպես կշփոթվեր, յեթե կամենար ինձ հետ
խաներից, հենց այդպես կշփոթվեր, յեթե կամենար ինձ հետ
գործ ունենալ: Միայն նա, ով պատել ե իրան ստության, լրու-
գործ ունենալ: Միայն նա, ով պատել ե իրան ստության, զի դողա իմ խղճի դատասանի
թյան և անամոթության զրահով, չի դողա իմ խղճի դատասանի

առաջ... Ահա թե վերչափ գորեղ ես զու. մի ցնցում—և զու ընկնում ես. Ասա, դե ասա ինձ վորես մի բան քեզ արդարացնելու համար, հերքիր, ինչ վոր ասացի. Ազատիր սիրադ ամոթից և շավից. Գոնե մի ըրպէ յեղիր հզոր ու ինքնավստահ, և իս իմ կառնեմ այն, ինչ վոր յերեսովդ տվի: Յես քեզ կիսնարհիմ... Բո հոգուդ մեջ ցուց տուր ինձ գեթ մի այնպիսի բան, վոր ոգներ ինձ քեզ ուսուցիչ ընդունել: Ինձ հարկավոր և ուսուցիչ, վորովհետեւ իս մարդ եմ. իս մոլորված իմ խավարի մեջ ու յելք եմ փնտում դեպի լուս, դեպի ճշմարիտը, գեղեցիկը, դեպի նոր կյանք. ցուց տուր ինձ ճանապարհը: Յես մարդ եմ: Ասիր ինձ, ծեծիր, բայց հանիր ինձ դեպի կյանքն ունեցած իմ անտարբերության տղմից: Կամենում եմ ավելի լավ լինեմ, քան չեմ.—ինչ անեմ: Սովորեցրն:

Յես մտածում ելի՛ կարող եմ, արզոք, կարող եմ բավարարություն տալ այն պահանջներին, վոր մարդը իրավունքով առաջադրում ե ինձ: Կյանքը հանգչում ե, անթիվ կասկածներն ավելի ու ավելի պաշարում են մարդու միտքը, և հարկավոր և յելք գտնել: Ուր և ճանապարհը: Մի բան զիտեմ—չպետք ե յերջանկության ձգտել: Ինչի համար և յերջանկությունը: Յերջանկության մեջ չե կյանքի իմաստը. և նրանից զոհ լինելով չի բավականանա մարզս. նա այսպես թե այնպես բարձր և գրանից կյանքի իմաստը նպաստակին ձգտելու գեղեցկության ու զորության մեջ ե. և պետք ե գոյության ամեն մի վայրկյանը ունենա իր բարձր նպաստակը: Այդ կարելի կլիներ... բայց վոչ կյանքի հին շրջանակների մեջ, ուր ամենքի համար այնպես նեղ ե, և ուր չկա աղատություն մարդկացին վոգուն... .

Ու նա գարձալ ծիծաղում եր, բայց արդեն հանգարա, մի այնպիսի մարդու ծիծաղով, վորի սիրու մաշված և մտածունքից:

— Վերքան շատ մարդիկ են յեկել-զնացել աշխարհիս վրա, բայց վերքան քիչ արձաններ են կանգնեցրած մարդկանց հիշատակին: Այդ ինչ պատճառովէ բայց նզովք անցյալին—նա չափազանց շատ նախանձ ե զարթեցնում դեպ իրեն: Վորովհետեւ ներկայումս ամենեին չկան այնպիսի մարդիկ, վորոնք մահվանից հետո թողնելին վորես հետք յերկրիս վրա: Թմրում և մարդը... և վոչվոք չի սթափեցնում նրան: Թմրում ե նա և—դառնում անասուն: Խարազան և հարկավոր նրան և սիրո ջերմագին փառքշանք՝ խարազանի հարվածից հետո: Մի վախենար նրան ցա-

վեցնելուց. յեթե սիրելով հարվածես, նա կհասկանա քո հարվածը և կընդունե նրան իրեկ արժանի: Իսկ յերբ նա ցավ զգա և ամաչի, ջերմաջերմ գուրգուրիր նրան—և նա կվերածնի... Մարդիկ: Սրանք գեռ ելի յերեխաներ են, թեպետ և յերբեմն սարսկցնում են մարդու իրանց չարագործությամբ ու մտքի այլանդակությամբ: Ու նրանք միշտ կարիք ունեն սիրո, նաև մշտական հոգացողության՝ իրանց հոգությամբ և առողջ սնունդի մասին... Իսկ դու մարդկանց սիրել գիտե՞ս:

— Մարդկանց սիրել—հարցը կրկնեցի տարակուսանքով, վորովհետեւ, ճշմարիտ, չգիտեմ՝ արգոք սիրում եմ մարդկանց: Պետք ե անկեղծ լինել—յես այդ չգիտեմ: Ո՞վ կասի իր մասին.— Յես, ահավասիկ, սիրում եմ մարդկանց: Մարդու, յեթե ուշիուշով հետևում ե ինքն իրանց, յերկար կմտածի այդ հարցի մասին, նախքան կվճոփի ասել—սիրում եմ: Ամենքը գիտեն, թե վորքան մեզնից լուրաքանչչուրը հեռու յե իր մերձավորից:

— Դու լուսւմ ես: Միենան ե—յես քեզ հասկանում եմ և լոելցայն.... Ու գնում եմ...

— Արգեն.— Կամաց հարցը յես: Վորովհետեւ վորքան ել նա ինձ համար սարսափելի յեր, յես ինքս ինձ համար ել ավելի սարսափելի ելի...

— Այս, գնում եմ... գեռ շատ անգամ յես կգամ քեզ մոտ Սպասիր:

Յեվ նա գնաց:

Ի՞նչպես գնաց: Յես այդ չնկատեցի: Նա հեռացավ արագ և անձայն քայլելով, ինչպես անհետանում են ստվերները... Իսկ յես գեռ յերկար մնացի ացգում՝ նստարանի վրա—վրաից ցուրտ չզգալով և չնկատելով, վոր արդեն արել ծագել ե, և նրա ճառագայթները պայծառ փայլում են ծառերի սառուց կտրած ճրուղերի վրա: Ինձ տարորինակ եր թվում տեսնել պայծառ որը և արելը, վոր փայլում եր անտարբեր, ինչպես միշտ, և այս ծեր բազմաչարչար յերկիրը, վոր հագած եր արելի ճառագայթների տակ շլացուցիչ կերպով պեծին տվող ձրուսի ծածկութը...

ՏՈՓԱՍՏԱՆՈՒՄ

Պերեկոպից գուրս յեկանք ամենավատ տրամադրությամբ—, գալիք պես քաղցած և վողջ աշխարհի վեմ չարացած։ Ամբողջ որն իզուր գործ դրինք մեր բոլոր շնորհքն ու ջանքերը, վոր մի բան գողաճախնք կամ վաստակելինք, և իրը, վերջապես, համոզվեցինք, վոր վնչ այս և աջողվում և վոչ այն, վճռեցինք զնալ հեռու։ Մուր։ Առհասարակ—հեռու։

Մենք պատրաստ ելինք ամեն տեսակետից հետուն զնալ կյանքի այն շավիղով, վոր վաղուց արգեն մեղ վիճակված եր, — մեզանից ամեն մեկը լուելայն ալպես եր վորոշել, և այդ պարզ արտահայտված եր նվազած աչքերի մոռալ փայլով։

Յերեք հոգի ելինք. քիչ առաջ ծանոթացանք, յերբ իրաք հանդիպեցինք Խերսոն քաղաքում՝ Դնեպրի ափին գտնվող մի գինետան մեջ։

Մեզանից մեկը յերկաթուղալին ջոկատի զինվոր եր յեղել, իսկ հետո՝ իբր թե Եեհաստանի ճանապարհներից մեկի վրա վարպետ։ Հիկալարմիր մագերով, պինդ մկաններով մի մարդ եր՝ պաղած մոխրագույն աչքերով։ Գերմաներեն խոսել դիտեր և շատ լավ տեղակ եր բանտարկն կյանքին։

Մեր կարգի մարդիկ չեն սիրում իրանց անցյալի մասին խոսել, և զրա համար միշտ ունեն ավելի կամ պակաս հիմնավոր պատճառ։ ուստի և մենք հավատում ելինք իրար, — զոնե արտօքուս հավատում ելինք, վորովհետեւ ներքուստ մեղանից ամեն մեկը հենց չեր հավատում։

Յերբ մեր յերկրորդ ընկերը, վոր մի չորչիկ ու փոքրիկ մարդուկ եր՝ նուրբ և միշտ սկեպտիկար ծալված շրթունքներով, իր մասին ասում եր, վոր ինքը Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող է, իս ու զինվորն այդ ընդունում ելինք իբրև իրողություն։ Խսկապես մեղ համար բոլորովին միմնույն եր, ուսանող և յեղել նա իերեմն, խուզարկու վոստիկան, թի՛ գող, — եյկանն այն եր միաբն, վոր մեր ծանոթության ըոպելին նա մեղ հավասար եր, — քաղցած եր, քաղաքներում վոստիկանության ա-

ռամնձին ուշադրության, իսկ գուշկերում շինականների կասկածավոր վերաբերմունքի առարկա լիր, ատելով ասում եր և վոստիկաններին, և զուղացիներին՝ հալածված և քաղցած զաղանի անդոր ատելությամբ, իերազում եր մի համաշխարհային վրեժիքնորություն ամենքից և ամեն բանից։ մի խոսքով՝ և բնության թագավորների, և կյանքի վեհապետների մեջ բանած իր գիրքով, և իր արամազրությամբ՝ մեզանից եր. մի սանրի կտավ ելինք։

Յերրորդը իս ևլի։ Մանկությունից ինձ հատուկ համեստությունից զրդված՝ վոչ մի խոսք չեմ ասիլ իմ արժանիքների մասին և, չկամենալով պարզամիտ յերևալ, չեմ խոսիլ պակասություններիս մասին։ Սակայն, կուզեք, իբրև իմ բնավորության նկարագրության նյութ կասեմ, վոր միշտ յես ինձ ուրիշներից լավ եմ համարել և այժմ այդպես ել համարում եմ։

Յեզ այդպիս, մենք դուրս յեկանք Պերեկոպից ու գնում ելինք՝ այդ որվա համար հուզ զնելով չորանների վրա, վորոնցից միշտ կարելի յե հաց խնդրել, և վորոնք, շատ սակավ և պատճում, վոր մերժեն անցորդներին։

Յես գնում ելի զինվորի հետ։ «ուսանողը» քալում եր մեր յետից։ Նրա ուսից կախված եր պիշակ հիշեցնող մի բան, սրածալը, անձունի և տակից խուզած գլուխը ծածկած եր լայնեցր գլխարկի մնացորդով։ Գույնզգույն կարկատաններով ծածկված մոխրագույն անդրավարտիքը պատում եր նրա բարակ վոտները, իսկ ներբաններին հարմարեցը եր իր հագուստի աստաղից վոլորած կապերով՝ ճանապարհին գտած կոշկի ճիշքը, վոր նա անվանեց սանդակներ, ու քալում եր՝ շատ փոշի բարձրացնելով և կանչազգուն փոքրիկ աչքերը պսպլացնելով։ Զինվորը հագել եր կումաչի կարմիր շապիկ, վոր, իր ասելով, նա անձամբ ձեռք եր բերել Խերսոնում։ շապիկ վրացից կար մի տաք բամբակած ժիշտ ևս. զիսին զբել եր անորոշ գույնի զինվորական գլխարկ զինվորական կանոնի համաձայն «վերջին ըրջանակը ծալած աջկողմի վրա»։ Վոտների վրա այս ու այն կողմն եր ճոճում չումակի լայն անդրավարտիքը։ Նա բորբիկ եր։

Յեր շուրջը հսկաչական թափով և ամեն կողմ փոված եր առափաստանը, ինչպես մի ահագին ու պնակ, և ծածկված եր անամպ յերկնքի կիզիչ գմբեթով։ Դժգույն, փոշոտ ճանապարհը կը լուսում եր նրան լայն շերտով և ալրում մեր վոտքերը։ Տեղ-տեղ զատահում ելին խողաններ, վարոնք տարորինակ նմանություն ունելին զինվորի վազուց չածիլած այտերի։

Զինվորը գնում եր և խոպոտ բասով լերպում:

...— Յեկ զսուրը զլարությունդ քո փառավորեմք...

Մառայության ժամանակ ջոկատի լեկեղեցում նա կատարում էր սարկավագի պաշտոնի պես մի բան և զիսեր անթիվ-անհամար տաղեր, սկավածքներ ու որհներգներ և իր այդ գիտություններ չարն եր գործ գնում ամեն անգամ, իրը մեր զրուցը վորեւ պատճառով չեր կապվում:

Մեր առջև, հորիզոնի վրա հետզետե լերեւմ եցին նուրբ գծագրությամբ զանգվածներ՝ հաճելի գուշներով՝ բաց մանիշակույնից սկսած մինչև նուրը վարդագույնը:

— Անշուշտ, Խրիմի սարերը հենց սրանք են, — ասաց «ուսանողը» սառնությամբ:

— Սարեր, — բացականչեց զինվորը, — շատ շուտ տեսար սարերը, բարեկամ: Դրանք ամպեր են... ուղղակի ամպեր: Նայիր ինչ տեսակ են. ասես՝ հապալասությաց լինեն կաթով պատրաստած:

Յես նկատեցի, վոր շատ լավ բան կլիներ, յեթե ամպերն իսկապես թթվաշից բաղկացած լինելին:

— Այս, սատանա, — հայնոյեց զինվորը թքելով, — գոնե մարդու լերես տեսնելինք: Կոչվոք չկա... ել ճար չկա, պետք և թաթներս ծծենք, ինչպես արջը ձմեռը...

— Յես ասում եմի, վոր հարկավոր ե շեն տեղերով գնալ, — խրատական լեզանակով հայտնեց «ուսանողը»:

— Ասում եմի, — վրագովից զինվորը: — Դեհ, ել ի՞նչ ուսումնական ես, վոր չասեա: Ի՞նչ շեն տեղ: Սատանան գիտի, վորտեղ են նրանք:

«Ուսանողը» լրեց շրթունքները ծալելով: Արեք մալր եք մտնում, և հորիզոնի վրա ամպերը խաղում եցին զանգան աննկարագրելի գուշներով: Հողի և աղի հոտ եր գալիս:

Յեկ այդ չոր ու զուրեկան հոտից մեր ախորժակն ավելի գրգռվում եր:

Մի բան ծծում եր ստամոքսը: Դա մի տարրինակ և անախորժ զգացողություն եր, թվում եր, թե հութերը մարմնի բռնը մկաններից հետզետե գնում են ուր-վոր, գոշորշիանում են, և մկանները կորցնում են իրանց կենդանի ճկունությունը: Մի ծակձիող զգացողություն եր տիրում մարդու բերանի խոսոչում և կոկորդում. զլուխը շշմում եր, իսկ աչքերի առաջ հա գալիս-գնում եցին խավար բծեր, վորոնք լերեմն մսի ծխացող կտորների, կլոր հացի կերպարանք եցին ստանում. հիշողությունը այդ «անցյալի»

անսիլներին, համը տեսիլներին» տալիս եր համապատասխան հոտ, և այն ժամանակ ստամոքսի մեջ, կարծես, դանակ եր շարժվում:

Բայց և այնպիս մենք գնում ելինք իրար հազորդելով մեր զգացողությունների նկարագիրը, ուշի-ուշով նայում ելինք չորս կողմը, արդյոք վորեւ տեղ վոչխարի հոտ չի լերևում, և ականչ դուռմ — չի լսում արդյոք Արծյանակի Բաղարը մրգեղեն տանող թաթարի արարակի ճոնչյունը:

Սակայն տափաստանը ամայի և անմոռունչ եր:

Նախնիթաց որը մենք լերեքով կերանք չորս գրվանքա հաճարի հաց և հինգ ձմերուկ, այնինչ մոտ քառասուն վերատ ձանապարհ կտրեցինք — մուտքին անհամապատասխան լելք — և Պերեկոպի շուկայի հրապարակի վրա քնելով՝ քաղցածությունից զարթնեցինք:

«Ուսանողը» իրավացի կերպով մեր խորհուրդ չեր տալիս պառկել քնելու, այլ առաջարկում եր զիշերվա ընթացքում զրադե... սակայն կանոնավոր հասարակության մեջ ընդունված չելելի ձախով խոսել սեփականության իրավունքը խախտելու դրագիրների մասին, ուստի և յս լուս եմ: Յես կամենում եմ լինել միայն շխտակ, և ինձ շահ չկա կոպիտ լինելուց: Յես գիտեմ, վոր մարդիկ մեր բարձր քաղաքակիրթ որերում սրտով ավելի ու ավելի փափուկ են զանում և մինչև անգամ՝ լերը բռնում են իրենց մերձավորի կոկորդը՝ նրան խեղիկու գիտավորությամբ, — այդ ժամանակ ել աշխատում են այդ անել ըստ կարելուն սիրավեր կերպով ու պահպանելով վայելչության բոլոր կանոնները, վորոնք այս գեպքում տեղին են: Իմ կոկորդիս վրա արած փորձը հարկագրում ե ինձ մատնանիշ անել բարքերի այս հառաջադիմության վրա, և յս գստահությամբ հաճելի զգացմունքով հաստատում եմ, վոր այս աշխարհում ամեն բան զարգանում և կտարեկագործվում ե: Այս նշանավոր լերմութը մասնավորապես անհերքելի կերպով հաստատվում և տարեցտարի անդ բանտերով, զինետներով և անսպահանոցներով...»

Ալսպես, ուրեմն, շարունակ թուք կուլ տալով և բարեկամական խոսակցության մեջ աշխատելով խեղիկ ստամոքսի տագնապը, մենք գնում ելինք ամայի և անմոռունչ դաշտի միջով, գնում ելինք վերջալուսի կարմրավուն ճառագալթների՝ ներքու Արեք մալր եր մանում՝ կամաց իշնելով իր ճառագալթներով առատապես գունավորված ամպերի մեջ. իսկ մեր լետերից և կողքերից կապտագույն աղջամուղջը՝ հետզետե տափաստանից լեր-

Կինք բարձրանալով՝ փոքրացնում եր մեղ շրջապատռդ անհամառուց հորիզոնները:

— Տղերք, խարուկի համար վառմիք ժողովեցեք.—ասաց զինվորը՝ ճանապարհից մի կոճղ վերցնելով:—Հարկ կինք բացովիա գիշերել... շաղ ե: Աժար, ցախ ու մախ—բոլորը վերցրեք:

Մենք ցրվեցինք ճանապարհի շուրջը և սկսեցինք հավաքել չոր ցախ և ամեն բան, վոր կարող ե վառվել: Ամեն անգամ, յերբ հարկավոր եր լինում կունալ, բուռն ցանկություն եր զարթնում հենց տեղն ու տեղը գետին ընկնել անշարժ պառկել և հող ու տեղ ու տեղը ու հողը, ուտեղ շատ, ուտեղ մինչեւ ուժից ընկնելը և հետո քնել, թեկուզ հավիտացնս քնել, միայն թե ուտեղ ծամել և զգալ թե ինչպես տաք և թանձր շաղախը բերանից կամաց կուշ յեկած վորկորի միջով իջնում և քաղցից տոչորփած, կծկված ստամոքսը, վոր այրվում եր մի բան ծծելու ցանկությունից:

— Գոնե արմտիք գտնեցինք...—հառաչեց զինվորը, —կան տեսակ-տեսակ ուտալող արմտիք...

Բայց հերկած սկահողի մեջ արմտիք չկար: Արագ վրա լել հասնում հարավային գիշերը, և զեռ չեր հանգել արկի վերջին շողքը, վոր արդեն մուգ-կապտագույն յերկնակամարի վրա փայլեցին աստղերը: Իսկ մեր շուրջը ավելի ու ավելի թանձրանում եր խավարը և փոքրացնում տափաստանի անսահման հարթությունը...

— Տղերք,—կամաց ասաց «ուսանողը», —այնտեղ՝ ձախ կողմը մարդ և պառկած...

— Մարդ.—կասկածեց զինվորը:—Ի՞նչո՞ւ պիտի այնտեղ պառկած լինի:

— Գնա հարցրու: Հավանական ե, վոր նա հաց ունենա, քանի վոր իջել ե գաշտի մեջ.—բացատրեց «ուսանողը»: Զինվորը այն կողմը, վորտեղ պառկած եր մարդը, և վճռողաբար թքեց:

— Գնանք նրա մոտ:

Միայն «ուսանողի» կանաչավուն և սրատես աչքերը կարող եին վորոշել, վոր ճանապարհից հիսուն սաժեն զետի ձախ յերեւ վացող ու կուլտը մարդ ե: Մենք զնում ելինք զետի նա՝ արագ քայլերով, ցելի կոշտերի վրայի, և զգում ելինք, թե ինչպես լեռակը նոր ծագած հույսը սաստկացնում եր քաղցի ցավերը: Մենք արգեն մասեցել ելինք—մարդը տեղից չեր շարժվում:

Կարելի յե, մարդ չե,—մուալ կերպով արտահայտեց զինվորը մեր մտածմունքը:

Սակայն մեր կասկածը հենց նույն վայրկացնին փարատվեց, գարովհետեւ հանկարծ կուլտը գետնի վրա շարժվեց, բարձրացավ, և մենք տեսանք, վոր զա խակապես կենդանի մարդ եր, վոր ծընկերի վրա չոքած, ձեռները պարզել եր դեպի մեղ և ասում եր խուլ դողդողացող ձայնով:

— Զմուռնաք—կսպանեմ:

Խավար ողի մեջ հնչեց չոր և կարճ չխկոց:

Մենք իսկույն կանգ առանք և միքանի վայրկացն լուռ ելինք՝ այս անհատուրնկալ հանդիպումից շշկված:

— Ա՛յ գարշելի մարդ,—փնթինթաց զինվորը արտահայտիչ կերպով:

— Հը, —մտախոհ ասաց «ուսանողը»:—ատրճանակով և ման գալիս... յերկի... յուղալի յե...

— Ե՛յ, —բղավեց զինվորը՝ անշուշտ ինքն իրան մի բան վճռելով:

Մարդը, առանց դիրքը փոխելու, լուռ եր:

— Ել, զու. քեզ ձեռք չենք տալ... միայն հաց տուր մեզ... կունենաս, չի: Տուր, յեղբայր, ի մեր Քրիստոսի... Նզովյալ անիծվես գու:

Վերջին խոսքերը զինվորն արտասանեց քթի տակ:

Մարդը լուռ եր:

— Լսում ես, —սրտի չարությունից և հուսահապությունից նորից խոսեց զինվորը:—հաց տուր, հաց: Մենք քեզ չենք մոտենալ... այդտեղից ցցիր...

— Լավ, —կարճ կտրեց մարդը:

Նա կարող եր մեղ ասել:—«Իմ անգին յեղալուներս» և յեթե ներշնչեր այդ յերեք քրիստոնեական բառերին ամենասուրբ և աշմենավսեմ զգացմունք, նրանք մեղ այնքան չելին հուղիլ, այնքան չելին մարդացնիլ, վորքան այդ համբ և հակիրճ խոսքը:

— Լավ:

Բարի մարդ, մեղանից մի վախենար, —խոսեց զինվորը մեղմաբար, քաղցր ժպիտն յերեաին, թեպետ և մարդը չեր կարող տեսնել նրա ժպիտը, վորովհետեւ նա մեղանից հետո յեր առնվազն քսան քայլ:

Մենք խաղաղ մարդիկ ենք... Ռուսաստանից կուբան ենք գնում... ձանապարհին փողի նեղություն ունեցանք, յեղած-չեղա-

ծը կերանք... իսկ հիմա, ահա յերկու որ ե, վոչինչ չենք կերել...
— Բոնիր,—ասաց բարի մարդը՝ ողի մեջ թերթափ տալով:
Սև գունդը թռափ-ընկավ մեզանից վոչ հեռու՝ վարելահողի վրա:
«Ուսանողը» վրա հասավ:

— Բոնիր, եթի՞ բանիր: Ել չկա...

Յերբ «ուսանողը» ժողովեց այս տարորինակ վոզորմությունը, գուրս յեկավ, վոր մենք ունենք մոտ չորս գրվանքա չոր հաց, վոր կեղտուաված եր հողի մեջ ու շատ քարթու իր: Չոր հացը ավելի կուշտ կպահի, քան կակուզը. նրա մեջ թացություն չկա:

— Այ, ես քեզ... եղ ինձ... ես ել նրան,—ուշքն ու միտքը կենտրոնացրած բաժանում եր զինվորը հացի կտորները:—Կաց, հավասար չեղավ: Քոնից, ուսումնական, պետք ե պոկել մի կտոր, թե չե նրանը քիչ ե...

«Ուսանողը» ասանց հակաճառության հաշտվեց կորցնել իր բաժնից հինգ մսխալի չափ մի կտոր. ես ստացա այդ կտորը ու բերանս զրի:

Ու սկսեցի ծամել, կամաց ծամել, հազիվ գսպելով ջղաճզարար շարժող ծնոտներս, վորոնք պատրաստ ելին փշել նույնիսկ քարը: Ինձ մեծ հաճուքը եր պատճառում զգալ վորկորիս ջղային ցնցումները և քիշ-քիշ բավարարություն տալ նրան: Տաք և անբացարելի, աննկարագրելի համել հացը՝ պատառ պատառի յետեցի իշում եր ստամոքսս, և թվում եր՝ իսկույն զանում եր արլուն և ուղեղ: Վորչափ լցվում եր ստամոքսս, նույնչափ բերկությունը, տարորինակ, խաղաղ և կենդանացնող բերկությունը տիրում եր սրտիս: Մոռացա պարբերական քաղցի այդ անիմած որերը, մոռացա ընկերներիս, վոր ամբողջովին ընկղմած ելին հաճելի զգացողությունների մեջ ինչ ապրում ելի և յսու:

Սակայն իբր ափիս վրայից հացի վերջին փշանքները բերանս նետեցի, զգացի, վոր դեռ մահու չափ քաղցած եմ:

— Այս անիմածի մոտ խոզի լուղ կամ միս ել մնացած կլինի...— Փնթինթում եր զինվորը՝ իմ դիմաց գետնի վրա նստելով ու ձեռքերով վորը շփերով:

— Հավանական ե, վորովհետեւ հացից մաի հոտ եր գալիս... Դեհ, յերեի, հաց ելի կունենա...—ասաց «ուսանողը» և կամաց ավելացրեց.

— Յեթե ատրճանակը չեր լինի...

— Տեսնես ով ե:

— Յերեի, մատաղացու յե...

— Շնուն,—կտրուկ շեշտով վորոշեց զինվորը:

Մենք նստած ելինք իրար մոտ և խեթ-խեթ նակում ելինք այն կողմը, ուր նստած եր մեր բարերարն իր ատրճանակով: այնտեղից մեզ չեր հասնում վոչ ձայն, վոչ կենդանության նշան:

Մեր շուրջը գիշերը թանձրացնում եր խավարը: Տափաստանում մեռելացին խաղաղություն եր տիրում—մենք լսում ելինք մեր շնչառության ձայնը: Յերեմն մի վորեւ տեղից հնչում եր սիրիական մկան ծվծլոցը... Ասողերը՝ յերկնքի կենդանի ծաղիկները՝ արգում ելին վերեւ... Մենք ուտել ելինք ուզում:

Հզարաբությամբ կտօնեմ—այդ բավականին տարորինակ գիշերը իմ իմ պատահական ընկերներից վոչ լավ ելի, վոչ վատ: Առաջարկեցի վեր կենալ ու գնալ այդ մարգու վրա: Նրան ձեռք տալ պետք չե. մենք միայն կուտենք բոլորը ինչ վոր կզտնենք: Նա պիտի ատրճանակ բանա—թող բանա: Յեթե հաջողվի, յերեւ քիցս մեկին պիտի հարվածի: Յեթե հույնիսկ հարվածի, ատրճանակի գնդակը հաղիվ թե մահացա լինի:

— Գնանք, —ասաց զինվորը վեր ցատկելով:

«Ուսանողը» նրանից գանգազ վեր յելավ:

Յեվ մենք գնացինք, համարլա վազեցինք: «Ուսանողը» գալիս եր մեր յետեկից:

— Բարեկանմ, —հանդիմանական շեշտով կանչեց զինվորը:

Մեր ականջին հասավ նրա խուլ մրթմթոցը և ատրճանակի վոտքի չոր չմկոցը: Յեվ ահա փայլեց բոցը, հնչեց ատրճանակի սուր պալթյունը:

— Մոռովս անցավ, —խնդությամբ բացականչեց զինվորը՝ մի թոփչքով մարգուն համելով:—Այ զու ստանա, յես քեզ ցույց կտամ...

«Ուսանողը» վրա ընկավ պարկին:

Իսկ սատանան մեջքին ընկավ և ձեռքերը թափ տալով խոխոցնում եր...

— Այս ինչ բան ե,—զարժացավ զինվորը, վոր արդին բարձրացրել եր վոտքը, վոր այդ մարգուն քացի տար:

— Զլինի՞ թե ինքն իրան խփեց: Ել զու, ինչ յեղավ: Քեզ դիպավ, ինչ ե:

— Միս ել, մի տեսակ կարկանդակ ել, հաց ել—բոլ ե, տղերք:— հնչեց «ուսանողի» հրճվող ձայնը:

— Եհ, զլուխով քարը: Գնա սատկիր... Դեհ, աւտենք, աղերք ջան, —գոռաց զինվորը:

Յես մարդու ձեռքից ատրճանակը առա. Նա և չեր խոխոացառում և այժմ անշարժ պառկած եր: Ատրճանակի մեջ մի փառփուշտ ել կար:

Մենք նորից ոկտեսինք ուտել. ուտում ելինք լուռ: Մարդը պես պառկած եր լուռ և անշարժ: Երա վրա ուշք չելինք գարձենում:

— Միթե միայն հացի համար եր այս բոլորը, յեղալրներ.— Հանկարծ լսվեց նրա խռովու ու կերկեր ձախնը:

Մենք ցնցվեցինք: Հացի կտորը «ուսանողի» բկում մնաց, և նա դեպի գետին կռանալով՝ ոկտեսի հազար:

Զինվորը պատառը ծամելուց հետո ոկտեսի հայնոյել:

— Շան ծնունդ, այ արաքին դու չոր կոճղի նման: Կաշիք պիտի քերթեինք, ինչ և ինչերիս եր պետք: Սրա դունչ ու մաթին նայիր, պիզծ հոգի: Տես, զինվել և ու ատրճանակ և արձակում մարդկանց վրա: Նզովից արմատ:

Նա հայնոյում եր և ուտում, վորից նրա հայնոյանքը կորցընում եր իր շեշտն ու ապավորությունը:

— Սպասիր ուտենք-պրծնենք, քեզ հետ հաշիվ կտեսնենք:— սպասնաց «ուսանողը»:

Գիշերային մթության մեջ լսվեց մի կողկողազին հեկեկանք, վոր մեզ վախեցրեց:

— Ախր յես ինչ գիտնամ, աղբեր: Կրակեցի, վորովհետեւ վախենում ելի... Նոր Աֆոնից գնում եմ Սմոլենսկի նահանգը... Ոհ, աստված իմ, ջերմն ինձ սպանեց... հենց վոր արեք մայր և մտնում—որս խալարում եւ: Զերմի պատճառով ել Աֆոնից հեռացա... Ազնաեղ հցուսնություն ելի անում... հցուսն եմ... ունեմ կին... յերկու աղջկեց... յերեք-չորս աարի յե, նրանց յերեսը չեմ տեսել... կերեք, յեղալր, բոլորը կերեք...

— Կուտենք, մի խնդրիր,—ասաց «ուսանողը»:

— Տեր աստված, յեթե վիտենայի, թե դուք խաղաղ, լավ մարդիկ եք... ատրճանակ կարծակելի... իսկ այստեղ, աղբեր, ամայի դաշտ ե... մութ գիշեր. յես մեղավոր եմ, հը:

Նա խոսում եր ու լալիս, ավելի ճիշտը՝ մի տեսակ կերկեր, վեհերոտ ձախն եր հանում:

— Ի՞նչ ե ժնակնում,—արհամարհանքով ասաց վինվորը:

— Նա անպատճառ փող կունենա.—հայնեց «ուսանողը»:

Զինվորն աչքերը կկոցելով՝ նայեց նրան և քթի տակ ժիշտեղեց.

— Գուշակող ես, հա... Այ ինչ. յեկեք խարուկի վասենք ու քննեսք:

— Իսկ նա, — հարցը ց «ուսանողը»:

— Գլուխը քարը: Հո խորովելու չենք նրան:

— Տեղն եր,—ասաց «ուսանողը» իր սրածայր գլուխը շարժելով:

Մենք գնացինք բերելու մեր հավաքած վասելիքը, վոր թողինք այստեղ, ուր կանգ առանք հյուսնի ձախնից. և քիչ հետո նստած ելինք խարուկի շուրջը: Նա հանդարտ ալրվում եր խաղաղ գիշերվա մեջ ու լուսավորում եր մեր բռնած փոքրիկ տաշրածությունը: Մեր քունը տանում եր, թեպետ և մենք ազատ կարող ելինք մի անգամ ևս ընթրել:

— Յեղացրներ, — ձախ տվեց մեզ հյուսնը: Նա պառկած եք մեզնից: յերեք քայլ հեռու և յերեթին, ինձ թվում եր, թե շնչում ե:

— Հա-ա, — ասաց վինվորը:

— Կարելի յե զամ այդտեղ... կրակի մոտ: Մահս մոտենում ե... Բոլոր վասկորներս ջարվելում են... Տեր աստված, յերեւ. տուն չեմ հասնելու...

— Սողա աչտեղ, — թույլ տվեց «ուսանողը»:

Հյուսնը կամաց, կարծես վախենալով ձեռն ու վոտը կորցը նել, չորեքթաթ շարժվեց գեղի խարուկը: Դա մի բարձրահասակ, սարսափելի նիհար մարդ եր. Նրա վրա ամեն ինչ տարորինակ կերպով յերերում եր, խոշոր պղտոր աչքերի մեջ արտափակյում եր նրան հալումաշ անող ցավը: Այլանդակիած գեմքը վոսկուու եր և մինչեւ իսկ խարուկի լուսավորության տակ գեղնած, մեռելատիպ գույն ուներ: Նա ամրագ մարմնով գողացնում եր, խղճահարություն հարուցում: Դեպի խարուկի բոցը պարզեցի իր յերկար, նիհար ձեռքերը, նա շփում եր իր վոսկուու մատները, և նրանց հողերը շարժվում ելին ծանր և գանդաղ: Ի վերջո մարդ զզվում եր նրա վրա նախելուց:

— Ինչպիս ե վոր դու այլպես—վոտով ես գնում. Սինք ժլատ մարդ ես,—մոաց կերպով հարցը ց զինվորը:

— Աչտես խորհուրդ տվին... ծովով մի դնալ, ասում են, այլ վոտով՝ նրիմի վրայով գնա, լավ ող ունի, ասում են: Իսկ յես, ահա տեսնում եք, չեմ կարողանում գնալ... մեռնում եմ... մեն-մենակ կմեռնեմ զաշտի միջին... թուչունները կկոցահարեն: Ինձ... և վոչվոք չի ճանաչել... կինս... աղջկերքս ինձ կսպասեն— զբել ելի նրանց ... իսկ վասկորներս անձրեները կթրջեն ... Աստված իմ, աստված իմ...

Նա վիրավոր գալի պես վոռնաց:
— Թյու, սատանա,—կատաղեց զինվորը՝ վոտքի լենելով.—
Ինչ ևս վոռնոցդ զցել: Մարդկանց հանգիստ չես թողնելու, ինչ
եւ: Սատկում ես, զեհ սատկիր, միայն լիիր:

— Քնենք, քնենք,—ասացի յես... իսկ դու, յեթե ուզում
ես խարուցի մոտ մնալ լավ ե ասում, մի վոռնա...

— Իմացար,—առաց զինվորը կատաղած:—Դեհ, հասկացիր,
ալլի: Կարծում ես քեզ պիտի խղճանք և նազդ քաշենք նրա հա-
մար, վոր միքիչ հաց շալրտեցիր ու ատրճանակ արձակեցիր մեզ
վրա: Թթված դես: Ուրիշ մարդ լիներ... Թյու....

Զինվորը լոեց ու մեկնվեց գետնին:

«Ռւսանողն» արդեն պառկել եր: Յես ել պառկեցի: Հյուսնը
վախից կուչ յեկավ և կրակին մոտենալով՝ սկսեց լուս նայել
շրան: Յես պառկած ելի նրա աջ կողմը և լուս ելի—ինչպես դո-
ւից ատամները կրծտացնում եր: «Ռւսանողը» պառկեց ձախ կող-
մը կծկվել և, կարծեմ, իսկույն քնեց: Զինվորը ձեռքերը գլխի
առակ դրած՝ պառկել եր և նայում եր յերկնքին:

— Ինչ գիշեր ե, ե: Վորքան աստղեր կան, տոթ ե...—Թիչ
հետո դարձավ նա ինձ:—Հապա յերկնքը—վերձակ ե, վոչ թե
յերկնքը: Միրում եմ այս թափառական կանքը: Ճիշտ ե —ցուրտ
ել կա, քաղց ել բայց, դեհ, մարդս շատ ազատ ե... վոչ մի իշ-
խանավոր չունես... ինքդ զվախու տերն ես... կուզես, զլուխու կրտ-
ութիր—մի խոսք ասող չի լինիլ... Շատ լավ ե... Այս որերը շատ
առնջվեցի քաղցից, շատ զազազեցի... իսկ այժմ ահա պառկած
եմ և նայում եմ յերկնքին... աստղերն ասես աչքով են անում
ինձ, կարծես, ասում են:—բան չկա, Լակուտին, անդադար շրջիր
յերկրիս յերեսին ու վոչվոքի կուլ մի զնար... Յեվ սիրոս հան-
գիստ ե... Իսկ դու... անունդ ինչ ե, ել բարեկամ: Ինձ վրա
շատրկանաս ու վոչնչից չվախենաս... Հա, հացդ կերանք՝ այդ
վոչինչ.—դու հաց ունեիիր, մենք չունեինք—քոնք կերանք... իսկ
դու, վայրենի, գնդակ ես արձակում... Միթե չգիտես, վոր գնդա-
կից մարդուս վաս կգա: Թիչ առաջ յես շատ զալրացա քեզ վրա,
և յեթե դու վեր չընկնեիր, բարեկամ, մի լավ պետք ե դնուիք
քեզ հանդգնությանդ համար: Գալով հացին—եգուց կհասնես Պե-
րեկուպ ու այնտեղ կդնես. վող կունենաս, իհարկե: Վազուց ե ջերմ
ունեմ:

Դեռ յերկար ականջիս հասնում եր զինվորի թավ բառը և
սիվանադ հյուսնի կերկեր ձայնը: Մութ, սև գիշերն ավելի ու ավե-
լի իջավ յերկրիս վրա. կուրծքս լցվում եր թարմ ասողը ողբ:

Խարուցից տարածվում եր միապապադ լուսը ու կենարար
ջերմություն... Թունս տանում եր:

— Վեր կաց: Շնուտ: Գնանք:

Յես յերկուղից աչքերս բաց արի և արագ վոտքի կանգնե-
ցի: զինվորն ինձ ոգնեց՝ ձեռքից պինդ քաշելով:

— Դեհ, շնուտ, գնանք:

Երա գեմքը մուալլ եր և տագնապալից: Յես շուրջս նայեցի:
Արել նոր եր ծագում, և նրա վարդագուն շողքն արդեն ընկել
եր հյուսնի անշարժ և կապտավուն գեմքին: Բերանը բաց եր, աշ-
քերը դուրս ելին յեկել իրանց փասից և նայում ելին պազ հա-
յացքով, վոր արտահայտում եր սարսափ: Կրծքի վրա շորերը բո-
լորովին պատառուած ելին, և նա ընկած եր մի տեսակ անբնական
ջարդ ու բուրդ յեղած գիրքով: «Ռւսանողը» չկար:

— Եհ, կշտացամբ նայելուց: Գնանք, ասում եմ,—հորդորելով
ասաց զինվորը՝ թիցից քաշելով:

— Մեսնէլ ե, —հարցրի յես՝ առավոտքան զովությունից սըր-
ութիւնիով:

— Իհարկե: Թեղ ել վոր խեղզեն, դու յել կմեռնես, —բացա-
կանչեց զինվորը:

— Մրան... «Ռւսանողն» ե. —բացականչեցի յես:

— Հապա ով: Կարելի յե—դու, կամ յես: Այ քեզ ուսում-
նական... ճարպիկ կորեց մարդու դատաստանը և մեզ ել լավ
թալակը ձգեց: Գիտենայի յերեկ յես այդ ուսանողին կսպանեի:
Միանգամճից կսպանեի: Շըրընկ, կհացնելի բունցքով քուն-
քին—և աշխարհից մի գարշելի կպակսեր: Ախր ինչ արեց, հաս-
կանում ես: Հիմա մենք այնպես պետք ե գնանք, վոր վոչ մի
մարդ մեզ չտեսնի. հասկացամբ: Վորովհետեւ հյուսնին այսոր կդտնեն
և կտեսնեն, վոր խեղզված ե ու կողոպաված: Յեվ ոլիտի, մեզ հե-
տեւնեն... վնրտեղից ես զալիս... վո՞րտեղ ես զիշերել: Յեվ...
կրոնեն մեզ... թեպես և մեզ մոտ վոչինչ չկա... բայց նրա ատքր-
ճանակը ծոցումս ե: Այ քեզ բան:

— Դեհ զցիր.—խորհուրդ տվի յես:

— Դեհ զցեմ, —մտախոհ կերպով ասաց նա: — Թանդ արժե...
կարելի յե մեզ չընեն:... Վաշ, չեմ զցիլ... Ո՞վ զիտե, թե հյուսնը
ատրճանակ ուներ: Զեմ զցիլ: Յերեք մանեթ արժի: Մի հատ ել
գնդակ կա: Յերան հենց այս գնդակով մեր սիրելի ընկերոջ ա-
կանջը տժժացնեի: Շունը, տեսնես, վորքան վող հափշտակեց...
անիծած:

- Խեղճ աղջիկներ...—ասացի լեռ:
- Աղջիկներ. Ի՞նչ աղջիկ. Հա, նրա... Լավ, նրանք կմեծան, մեզ չեն առնիլ. Նրանց մասին խոսելն ել ավելորդ ե... դնանք, յեղբայր, շնուռ շնուռ գնանք... Ուր գնանք:
- Զգիտեմ... միենուցն ե:
- Յես ել չգիտեմ և գիտեմ, վոր միենուցն ե: Դեպի աջ գնանք—այնտեղ ծով պիտի լինի:
- Մենք դեպի աջ գնացինք:
- Յես լեռ նայեցի: Մեզանից հեռու բարձրանում եր մի մըթ-ապուն բլրակ, իսկ նրա վրա շողողում եր արել:
- Նայում ես—չինչ հարություն առավ... Մի վախենա.. չի վերկենալ մեր լեռնից հասնելու... մեր ուսումնականը, ինչպես իրենց, ճարտար մարդ եր, հիմնավոր գործ տեսավ... տեսամբ ըն-կերը: Լավ իրեց մեզ: Են, յեղբայր, մարդս փչանում ե՝ տարեց-տարի ավելի ու ավելի փշանում ե,—տիրությամբ ասաց զինվորը:
- Անմոռունչ և ամացի տափաստանը՝ վազորդան արկի շողե-րով լցված՝ ծավալվում եր մեր շուրջը՝ հորիզոնի վրա միանալով չերկնքի հետ, վորն այնպես ջինջ եր, այնպես հրապուրիչ և լու-սալիր, վոր, թվում եր, վոչ մի խավար անարդար գործ հնարա-վոր չեր այդ ազատ գաշտավայրի ընդարձակ տարածության վրա, վոր ծածկված եր յերկնքի կապույտ գմբեթով:
- Սաստիկ ուտել եմ ուղում, բարեկամ,—ասաց ընկերա-դլանակը փաթաթելով:
- Ի՞նչ պիտի ուտենք այսոր, վորտեղ և ի՞նչպես: Խնդիր ե....
- Այստեղ պատճիչս—հիվանդանոցի հարևանու—վերջացրեց իր պատճությունը, ասելով.
- Ահա բոլորը: Յես շատ մտերժացա այդ զինվորի հետ, և մենք միասին հասանք մինչև կարսի շրջանը: Սա մի բարի և շատ փորձված տղա յեր և թափառական բույակի տիպար: Յես հար-գում եյի նրան: Մենք միասին գնացինք մինչև Փոքր Ասիա և այստեղ կորցրինք իրար...
- Դուք յերբեմն հիշեմ եք հյուսնին.—հարցրի լեռ:
- Ի՞նչպես տեսնում եք, կամ ի՞նչպես լոեցիք...
- Յել... վոչինչ...
- Նա ծիծաղեց:
- Ի՞նչ պիտի զգայի լեռ այդ դեպքում: Յես մեղավոր չեմ, վոր նրան այս բանը պատահեց, ինչպես և դուք մեղավոր չեք այն բանում, ինչ վոր ինձ ե պատահել... Յել առհասարակ վոչիք մի բանում մեղավոր չի, վորովհետեւ մենք ամենքս միատե-սակ անսառուններ ենք:

Չ Ա Ն Չ Բ Ո Ւ Յ Թ Ի Ց

Թանձր ծխի կույտեր վիժելով՝ մարդատար գնացքը, իբրև միթիարի սողուն, անհետանում եր տափարակ հեռաստա-նում՝ հացարույսերի գեղին ծովի մեջ: Գնացքի ծխի հետ արևա-կեզ ողի մեջ անհետանում եր նրա զարդացկոտ ազադակը, վորը միքանի ըստեատում եր անդորր լուսությունը լայնարձակ ամայի գաշտի, վորի մեջուղը յերկաթուղու փոքրիկ կայարանը իր միանությամբ զարթեցնում եր տիպուր զգացմունք:

Յեվ լերը կառախմբի խուլ բաց կենդանի աղմուկը ցրվեց-մարեց անամու յերկնքի պայծառ զմբեթի տակ, կայարանի շուրջը նորից տիրեց ճնշող լուսությունը:

Դաշտը վոսկեզոծ եր, յերկինքը կապուտակ: Յերկուսն ել անսահման մեծ ելին: Դրանց միջև գտնվող կայարանի կինամո-նապուն շենքերը պատահական թերթի տպավորություն ելին թող-նում, վորոնք փշացնում ելին մելամաղճիկ պատկերի կենարոնը, վոր ջանասիրությամբ նկարել եր յերեակացությունից զուրկ նկա-րեց:

Ամենայն որ ժամը 12-ին և ճաշից հետո 4-ին տափաստա-նից գալիս են կառախմբերը ու լերկու բոսկ կանգ են առնում: Այդ չորս բոպեն և կայարանի գլխավոր ու միակ դվարճությունը. Արանք են, վոր կայարանի ծառալողների համար տպավորություն-ներ են բերում:

Յուրաքանչյուր գնացքի մեջ կան տեսակ-տեսակ մարդիկ՝ զանազան հագուստով: Նրանք հայտնվում են մի վարկան. վա-գոնների լուսամուտներից յերեսում և անհետանում են հոգնած-գաստակած, անհամերեր և անտարբեր գեմքեր, —ապա զանգ, սու-լոց, —և նյարդեր գրգռող աղմուկով նրանք սլանում են զաշտի միջով գեպի հեռուն, զեպի քաղաքները, ուր յեռում ե աղմկալից կանքը:

Կայարանի ծառալողներին հետաքրքիր ե տեսնել այդ գեմ-քերը, ու զնացքը ճանապարհ զցելուց հետո նրանք իրար հա-քորդում են իրանց թուցիկ տպավորությունները: Նրանց շուրջը

ծավալվում ե անմոռունչ տափաստանը, և նրանց վերև—անապրեր յերկինքը, իսկ նրանց սրտին տիրում ե մի անորոշ նախանձ դեպի այն մարդիկ; վորոնք ամեն որ նրանց առաջից սլանում են ուր-վոր, այնինչ իրանք մնում են մի ամայի տեղ բանտարկված, կյանքից հեռու ապրելով, ու միայն չորս րոպե մարդու յերես տեսնելով:

Յեվ ահա գնացքը ճանապարհ դցելուց հետո՝ նրանք կանգնում են կայարանի աստիճանների վրա, աչքերով հետևելով անյերիդին,—վոր անհետանում ե հացարուչաների գեղին ծովի մեջ,—և լուսում են իրանց առաջից սլացող կյանքի տապավորության տակ:

Նրանք զրեթե բոլորն ել այստեղ են. կայարանապետը՝ բարեսիրտ լիքը-լիքը, շեկիկ մի մարդ՝ կաղակի խոշոր ընչացքներով. սրա ողնականը՝ շեկակարմիր յերիտասարդ փոքրիկ սուր մորուքով. կայարանի պահապանը՝ փոքրիկ, ժիր, խորամանկ լուկան, և զծի ծառայողներից մեկը—սլաքպան Գոմոզովը, պնդակազմ, լայն մորուքով մի լուսումունջ գլուղացի՝ լուրջ ու կուշագեմքով:

Կայարանի դռան մոտ, նստարանի վրա նստած եր կայարանապետի ամուսինը, մի փոքրիկ հաստիկ կին, վոր շատ նեղ վում եր շոգից: Նրա ծննդների վրա քնած եր յերեխան, վորի գեմքը նույնպես լիստիկ ու կարմիր ե, ինչպես և մորը:

Գնացքը ծածկվում է զառիվալրի յետեր, և թվում ե, թե նա թաղից յերկրի մեջ:

Այն ժամանակ կայարանապետը ասում ե՝ դառնալով գեպի կինը.

— Հը՛, Սոնյա, ինքնայեռը պատրաստ ե՞:

— Ինարկե,—ալարելով և կամաց ասում ե նա:

— Լուկա, դու այստեղ... ես են իքը... ավելի ճանապարհու աստիճանները... տեսնում ես, վորքան կեղտ են թափթիել...

— Գիտեմ, Մատվեյ Յեղորովիչ...

— Հա... են, ինչպես, թել չխմենք, նիկոլայ Պետրովիչ:

— Խմենք, ըստ սովորության...—ասում ե ողնականը: Իսկ մյուս գնացքը ճանապարհ դցելուց հետո՝ Մատվեյ Յեղորիչը հարցնում եր կնոջը.

— Ե՞ն, Սոնյա, ճաշը պատրաստ ե:

Հետո նա նույն հրամանն է տալիս լուկային. հրավիրում և ողնականին, վոր ճաշում ե նրանց հետ:

— Հը՛, ինչպես ճաշիւմ ենք:

— Ինչպես միշտ...

Աստիճանների վրայից անցնում են սենյակը, ուր շատ ծաղիկ և քիչ կարասիք կա, և ուր խոհանոցի և բարուրի հոռ և գալիս: Յեվ այստեղ՝ սեղանի շուրջը խոսակցում են գնացքի մասին, վոր սահեց-անցավ նրանց առջեկից:

— Նկատեցի՞ք գեղին զգեստով թուխ կնոջը, նիկոլայ Պետրովիչ, յերկրորդ կարգումն եր: Թունավոր զատ եր...

— Վատ չեր, բայց անձաշակ եր հագնված.—պատասխանում ե ողնականը:

Նա միշտ խոսում է կարձ ու ազգու, վորովհետև իրան համարում է աշխարհ տեսած և կրթված մարդ: Ավարտել է գիմնազիան: Նա մի տետր ունի սև կողերով: Նրա մեջ գրում է հոչակավոր մարդկանց ասացվածները, վոր նա քաղում ե լրագրական թերթուններից կամ պատահածամբ ձեռքն անցած գրքերից: Կայարանապետը առանց այլևալության ընդունում է նրա հեղինակությունը ամեն բանի մեջ, վոր իրանց պաշտոնին չի վերաբերում, և նրան լուսմ է ուշադրությամբ: Ծատ զուր են գալիս նրան մանավանդ նիկոլայ Պետրովիչի խորիմաստ բաները, վորոնցով նա միշտ միամտաբար հիանում է: Թխաղեմ կնոջ զգեստի մասին ողնականի արած նկատողությունը Մատվեյ Յեղորովիչի մեջ հարց ե զարթեցնում:

— Միթե գեղինը չի սազում թուխ կանանց:

— Յես խոսում եմ ձեր, տարագի և վոչ գուցնի մասին, բացատրում ե նիկոլայ Պետրովիչը, ապակյա վազից քաղցրավինիք լցնելով իր ափսեն:

— Տարազը—այդ ուրիշ բան ե...—համաձայնում է կայարանապետը:

Խոսակցությանը մասնակցում ե նրա կինը, վորովհետև այս նկութը նրան մատչելի և հասկանալի չե: Բայց վորովհետև այս մարդկանց միտքը սրված չե, խոսակցությունը դանդաղ է տուած գնում և հազիվ թե հուզում նրանց զգացմունքները:

Իսկ լուսամուտից յերեկում է գաշտը, վոր կախարդված և այստեղ տիրող լուսեթյամբ, և յերկինքը, վոր վսեմ և վեհաշուր անդորրությամբ:

Գրեթե ամեն ժամ գալիս են ապրանքատար կառավամբերը, սակայն նրանց վրա յեղած ծառալողները վաղուց ծանոթ են: Այդ բոլոր կոնգուկտորները քնաթաթախ՝ ճանձրախ ճամպորդությունից ընկճված մարդիկ են: Ասենք, յերբեմն սրանք պատմում են

զծի վրա տեղի ունեցած պատահարների մասին.—այսինչ տեղը գնացքը մարդ արորեց, կամ խոսում էն ծառացության մեջ յեղած նորությունների մասին.—այս-ինչը տուլանքի լե լենթարկված, այն-ինչը տեղափոխված է: Այս նորություններն ել քննության չեն առնում, այլ բափում են, ինչպես քաղցրասեր մարդը լափում և համեղ ու հազվագյուտ կերպուրը:

Իսկ արել կամաց-կամաց թեքվում ե յերկնակամարից գեղի տափաստանի յեղագիծը, և յերբ նա աշնտեղ համարյա հպում ե յերկրին, այն ժամանակ գառնում ե բոսրագույն: Դաշտի վրա ընկնում ե շառագույն լույսը, վոր զարթեցնում ե դժոնության թախծալի դեացմունք և անորոշ ձգտում դեպի հետաստանը—դուրս այդ ամայի անապատից: Հետո արել հպում ե յերկրին և դանդաղ իջնում նրա մեջ կամ նրա յետելը: Յերկնքի յերեսին զեռ յերկար խաղում են հանդարտ՝ վերջալուսի պայծառ գույները. բայց վերջալուսը շարունակ գույնը գցում ե, և վրա յե համում տաք ու անմոռնչ աղջամուղջը: Պեծին են տալիս աստ գերը և գողգողում յերկնքի յերեսին, ասես՝ վախճնում են յերկրի վրա տիրող ձանձրույթից:

Աղջամուղջին տափաստանը նեղանում է: Գիշերալին խաչ վարը պմեն կողմից լուս սողում ե դեպի կայարանը: Յեկ ան գալիս ե գիշերը, սև ու մոռայլ գիշերը:

Կայարանում վառում են ճրագները, ամենից պայծառ և ամենից բարձր և ուղեցուց լաստերի կանաչավուն կրակը, իսկ նրա շուրջը լուս ե ու խավար:

Յերեմին հնչում ե զանգը—գնացքի հուշարարը. զանգի շտապ ձախնը տարածվում ե դաշտում և արագ անհետանում ե նրա մեջ:

Զանգից հետո հեռավոր խավարի միջից շուտով գուրս ե վագում կարմիր, փայլատակող կրակը, և դաշտի անդորրությունն ընդհատվում է կանախմբի խուլ զըրդունով, վոր գալիս ե գեպի մենավոր, խավարամած կայարանը:

Կայարանի փոքրիկ հասարակության ստորին խամս ապրում է միքիչ ուրիշ տեսակ, քան ազնվական դասը: Պահապան կուկայի խելքը-միտքը շարունակ այն ե—փախչել կնոջ և յեղոր մոտ՝ գյուղը, վոր կայարանից լոթ վերստ հնուռ յե: Այստեղ նա՝ «տուն ու տեղ» ունի, ինչպես ասում է նա Գոմոզավին, յերբ այս լաւաց և լուրջ ծառայողին ինտրում ե իր փոխարեն հերթապահ լինել:

«Տուն ու տեղ» խոսքի վրա Գոմոզավը միշտ ծանր հոգոց եր հանում և ասում կուկային:

Ի՞նչ արած, գնա՝ տանը տեր ե սկսաք, այլ մւզիդ ե...

Իսկ մյուս սլաքպանը՝ Աֆանասից Յագողան, վոր նախկին գինվոր ե՝ լայնալիր և կարմիր գեմքով ու ալմաստն, կոշտ մագերով մի ծաղրածու և չարախինդ մարդ, կուկային չի հավատում:

«Տուն ու տեղ»—բացականչում ե նա, քթի տակ ծիծաղը:—Կին... Համեմառն եմ ինչ բան և արդ... են, ինչպես, կինդ առաջ ալրի՝ յեր, ինչ ե, թե գինվորի կին եր:

— Ախ դու, հավի թագավոր,—արհամարհանքով ձախն ե տալիս կուկան:

Նա Յագողալին աբգակս եր կոչում նրա համար, վոր վագեմի զինվարը չափից դուրս սիրում եր թոշուններին: Նրա գիտանոցն (բայց) ամրողզովին՝ թե դրսից կախկրիւշած եր վանդակներով և բներով: Նրա մեջը, ինչպես և շուրջը, ամբողջ որը շարունակ լավում եր թոշունների ծրւոցը: Զինվարի վերած լորերը անդադար ճղճում եին իրանց միակերպ յերգը: Արարյակները քրթմանը եին իրանց յերկար ճառերը, փոքրիկ գրանգուուն թոշունները միալար ճովողում, ճշում, լերգում եին՝ բացրացնելով զինվորի մենավոր կյանքը: Նա իր բոլոր ազատ ժամանակը նրանցով և զրազվում և նրանց զգացնությունը ու հոգատարությունը ցուց տալով՝ ընկերներին բանի տեղ չի գնում: Կուկային նա անվանում է ուժ, Գոմոզավին—ավանակ, և առանց քաշելու նրանց յերեսին ասում ե, վոր նրանք յերկուսն ել կանանց ցետերից քաշ յեկողներ են, և վոր դրա համար հարկավոր ե նրանց յերկուսին ել ծեծել:

Կուկան նրա խոսքերին ուշագրություն չի զարձնում, բայց ամեն զինվարին հաջողվեր նրան զարգացնել, կուկան յերկար ու կծաւ հարհուում եր նրան.

— Քոսոտ բերդապահ, մկան թափթփուկ: Ախր դու ի՞նչ ես կուկանում, այծի թմրկանար: Կանքումդ թնդանոթների տակից պարտերին ես փախցրել ու զորագնդի կաղամբի պահապան ես յեղել. քո ի՞նչ բանն ե զատողություն տալ: Գնա, գնա՝ թոշուններիդ մոտ, նրանց հրամաններ տուր, հավի հրամանատար:

Պահապանի հայրունքը հանդարտ լսելուց հետո զինվորը պնաւմ եր կայարանապետի մոտ՝ զանգատվելու. իսկ նա բզավում եր, վոր իր մոտ մարդ չմտնի աբգախի դատարկ բանի համար, ու վանդում եր զինվորին: Այն ժամանակ Յագողան գտնում եր

կուկացին և այս անգամ արդեն ինքն եր սկսում նրան հայնովեց առանց տաքանալու, կակուդ-կակուդ՝ ծանր ու զզվելի խոսքերով՝ վորոնցից լուկան շուտով փախչում եր թքոտելով:

Դոմոզովը զինվորի տրտունջներին պատասխանում եր աթու վախով և քաշվելով արդարանում եր.

— Ի՞նչ արած: Վոչինչ չես կարող անել այդ... իհարկեցատ և յերես առել... բայց, ի միջի ալոց, մի ասիր—մի լսիր...

Մի անգամ զինվորը պատասխանեց նրան ծաղրելով.

— Բան ես սովորել, ել՛: Մի ասիր—մի լսիր... զեհ, թէ վոր չասես ու չլսես, ել խոսելու բան չի լինիր...

Կայարանապետի կոսջից զատ՝ կայարանում կար ելի մի կին—խոհարարուհին: Նրան կոչում ելին Արինա. մոտ քառասուն տարեկան եր և շատ տգեղ, պնդակազմ, կախկխված ստիճաներով, միշտ կեղառու ու ցնցոտիներ հազած: Նա ման եր գալիս ամբողջ ձարձնով շքնելով մի վոտից մյուսի վրա, և նրա ծաղկատար գեմքի վրա փայլում ելին բղով ծակած, վախվսորած և կնծիռներով պատած աչքերը: Նրա անձոռնի կերպարանքի մեջ մի տեսակ ստրկական ընկճած բան կար, և նրա հաստ շրթունքներն այնպես ելին իրար վրա գալիս, վոր, կարծես, ուզում եր բոլոր մարդկանցից ներողություն խնդրել, նրանց վտաքերն ընկնել, և չեթևամարձակվում լաց լինել: Գոմոզովն ութ ամիս անցկացրեց կայարանում՝ առանձին ուշադրություն չգարձնելով նրա վրա. նրան հագիպելիս նա ասում եր «բարով». Արինան պատասխանում եր նրան նույնպես. փոխանակում ելին իրար հետ միքանի խոսք ու հետո բաժանվում, ամեն մարդ գնում եր իր գործին: Բայց մի անգամ Գոմոզովը մտավ կայարանապետի խոհանոցը և Արինալին առաջարկեց իրան համար շապիկ կարել: Սա համաձայնեց, ու շապիկները կարելուց հետո, ո՞վ գիտե—ինչու, ինքը տարավ նրա մոտ:

— Այ շնորհակալ եմ,—ասաց Գոմոզովը:—Յերեք շապիկ հատը առա կոպեկից, ասել ե, քեզ կհասնի յերեսուն կոպեկ... ուղիղ ե:

— Ազգակը ե, ելի...—պատասխանեց Արինան:

Գոմոզովը մտածման մեջ ընկալ և յերկար լուռ եր:

— Դու վ՞որ նահանգից ես,—հարցրեց վերջապես կնոջը վոր շաբունակ նալում եր նրա մորուքին:

— Ոչազանի...—ասաց նա:

— Հեռու տեղից ես: Եհ, ինչպես այստեղ ընկար:

— Այնպես... Յես մեն-մենակ եմ...

— Յեթե ազգպես ե, զեռ ավելի հեռուսն կարելի լի գնալ...—

Հառաչեց Գոմոզովը:

Աւ դարձաւ նրանք յերկար ժամանակ լուռ ելին:

— Այ յես ել: Նիժնի-Նովգորոդի նահանգից՝ Սերգաչևսկի գրավուից եմ...—խոսեց Գոմոզովը:—Յես ել մենակ եմ. յես եռ կամ: Բայց ժամանակով տուն ու տեղ ունեցի, կին ել ունեցի... յերեխեք—յերկուսը: Խորիս կինս մեռավ... իսկ յերեխեքս—այնպես... իսկ յես... յես են իբրև... զարդից քարուքանդ յեղաւ: Հաւա: Հետո փորձեցի նորից տուն ու տեղ լինել—չեղավ. մերհանան վչացել եր. չի բանում: Մի անգամ ճամպից դուրս յեկա ու են գնախն եր—գնացի... Ահա յերեք տարի լի չարչարվում եմ...

— Վատ ե, յերը մարդ տուն ու տեղ չունի.—կամաց ասաց Արինան:

— Են ել վոնց... դու ալրի՞ յես, ինչ ե...

— Աղջիկ եմ...

— Զե հա, —պարզ ի պարզո կասկածեց Գոմոզովը:

— Աստված վկա, աղջիկ եմ,—հավատացնում եր նրան Արինան:

— Եհ, ինչու մարդու չգնացիր:

— Ով կառնի ինձ: Վոչինչ չունեմ... ի՞նչս ուզեն... Դեհ, գեմքով ել գեղեցիկ չեմ...

— Հա...—մտածման մեջ յերկարացրեց Գոմոզովը և, մոռուքը շփելով՝ սկսեց քննողաբար նայել նրան: Հետո տեղեկացավ, ամսական փորքան և ստանում նա:

— Յերկու մանեթ ու կես...

— Ազգպես: Եհ...ասել եթե յերեսուն կոպեկ եմ տալու քեզ Այ ինչ... յերեկոյան արի տար... ժամը եսպես տասին մոտ, համ: Յես կտամ...թել կմահեք, միքիչ խոսնելով ժամանակ կանցնենք... յերկուս ել մենակ ենք... Աղի...

— Կդամ...—պարզորեն ասաց Արինան ու գնաց:

Հետո յերեկոյան ուղիղ ժամը տասին գալով նրա մոտ՝ նրա մենակից հեռացավ լուսաբացին:

Գոմոզովն ել չկանչեց նրան իր մոտ և յերեսուն կոպեկն ել չտվեց նրան: Արինան ինքը յեկավ նրա մոտ, ապուշի պես հլուհնագանդ, յեկավ ու լուռ ու մունջ կանգնեց նրա առաջ: Գոմոզովը մահակալի վրա պառկած՝ նայեց նրան և զեպի պատը քաշվելով՝ ասաց:

— Նստիր:

Յեվ յերբ նա նստեց, հայտնեց նրան.

— Դուք, այ ինչ, ծածռուկ պահիր այս ըանը: Վոչվոք չիմանա, համար թե չե ինձ համար վատ կիմնի... Վոչ յես ևմ ջահել վոչ դու... հասկանում ես:

Արինան գլուխը շարժեց զբականորեն:

Նրան ճանապարհ գցելիս Գոմողովը իր շորերը տվեց կարկատելու և զարձալ հիշեցրեց.

— Վոչվոք չիմանա, համար:

Ակապես նրանք սկսեցին ապրել բոլորից ծածկելով իրանց հարաբերությունը:

Արինան գիշերները ծածռուկ նրա մոտ եր զալիս զրեթե փորչ սող տալով: Գոմողովը ընդունում եր նրան ներողամտարար, տիբարար, և յերբեմն պարզ ի պարզ ասում եր.

— Բայց ինչ տգեղն ես դու, համար:

Արինան լուս ու մունջ մասում եր նրա յերեսին՝ գժգույն, մեղապարտ ժամանով ու նրա մոտից հեռանալիս՝ համարյա միշտ իր հետ առնում եր վորեե աշխատանք, վոր տալիս եր նրան Գոմողովը:

Նրանք իրար տեսնում ելին սակավ: Բայց յերբեմն Գոմողովը կայարանում վորեե տեղ նրան հանդիպելիս՝ ասում եր կիսաձայն.

— Ակսոր յեկ...

Ու Արինան հրու-հնագանդ գնում եր նրա մոտ, գնում եր մի այնպիսի լուրջ արտահայտությամբ, ասես, յեկավ նրա համար; Վոր կատարի իր պարտքը, վորի կարեորությունը հասկանալի յի դարձել նրա համար:

Իսկ յերբ տուն եր գառնում, այն ժամանակ Արինացի գեմքը դարձալ ընդունում եր հանցավորության և յերկուողի սռվառ հական մեռելատիպ արտահայտությունը:

Յերբեմն նա կանգնելով վորեե տեղ—մի անկրան կռմ ծառուի յետելը, յերկար նայում եր տափաստանի կողմը: Այնտեղ տիրում եր գիշերը, և սրա դաժան լուսեթյունից նրա սիրու ճմբում եր:

Մի անգամ, յերեկօյան գնացքը ճանապարհ գցելուց հետո կայարանի վարչությունը թեյ սարքեց՝ Մատվեյ Յեգորովիչը ընթարանի լուսամուտների առաջ՝ բարդիների խիտ ստվերէ տակ:

Եոգ որերին նրանք հաճախ անում ելին այս—սա, այնուանացնիվ, միքիչ փոփոխություն եր մտցնում նրանց կանքի միակերպության մեջ:

Թեյը խմում ելին ու լոել ելին՝ գնացքի բերած բոլոր տպագործություններն իրար հաղորդելուց հետո:

— Այսոր յերեկիանից շոգ ե, — ասաց Մատվեյ Յեգորովիչը՝ մի ձեռքով զատարկ բաժակը կնոջը տալով և մյուսով յերեսի քրտինքը սրբելով:

Կինը բաժակն առնելով՝ հայտնեց.

— Զանձրուցից այդպիս ե թվում, թե շոգ ե...

— Հըմ: Կարելի յի... Հիբավի... ձանձրալի յի կանքը: Այս պեղպատմ թղթախաղը լավ ե... բայց մենք միայն յերեք հոգի յինք...

Նիկոլայ Պետրովիչը ուսերը թոթվեց և աչքերը կկոցելով՝ վորոշակի ասաց.

— Թղթախաղը, Շոպենհաուերի ասելով, մտքի սնանկություն ե:

— Կեցցեմ, հիացալ Մատվեյ Յեգորովիչը: Ի՞նչպիս եր:

— Շոպենհաուերը, գերմանացի փիլիսոփա յի...

— Փիլիսոփա... հըմ...

— Ի՞նչպիս, այդ փիլիսոփաները համարաբաններում են ծառայում, հետաքրքրվեց Սոֆիա իվանովիան:

— Ակսինքն, ինչպիս ասեմ: Դա ատիճան չե, այս... այսպիս ասած՝ բնածին ընդունակություն ե... փիլիսոփա կարող և լինել ամեն ձարդ... ով ի ծնե սովորություն ունի մտածել և ամեն բանի սկիզբն ու վախճանը փնտաել: Ինարկե, համարաբաններում ել կան փիլիսոփաներ... Բայց նրանք կարող են լինել այնպիս... մինչեւ անդամ կարող են ծառայել յերկաթուղուքա:

— Ծատ ոռնիկ են ստանում նրանք, վորոնք համարանշերում են ծառայում:

— Նայած խելքին...

— Բայց յեթե չորրորդ լնկեր լիներ—հիանալի վիճակ կիսաշխինք: Հասաչելով ասաց Մատվեյ Յեգորովիչը:

Խոսակցությունն ընդհատվեց:

Կապույտ յերեկին յերեսին լուրջում են արտուքաները՝ բարձրիների վրա վոստից վոստ են թաշկուտում շիկահավերը և մեզմ վացնուու:

ՍԵՆԻԱԿՈՒՄ լաց և լինում յերեխան:

- Արինան այստեղ ե, — հարցնում է Մատվեյ Յեկորովիչը:
- ինարկե... — կարձ պատասխանում է նրան կինը:
- ինքնատիպ և այդ Արինան, նկատեցեք, նիկոլայ Պետրովիչ...
- ինքնատիպ լինելը հասարակ, չնշին լինելու նշան ե, — իբր ինքն իրան ասում եր նիկոլայ Պետրովիչը, մտորում խոհուն կերպարանք ընդունելով:
- Ի՞նչպիս, — հետաքրքրվում է կայսրանապետը: Յեղ յեր նիկոլայ Պետրովիչը պարզ կրկնում է ասացվածքը, նա դուրեկան ձեռվ կիրոցում և աչքերը, իսկ Սոֆիա Իվանովնան քնքուշ ձեռվ ասում ե.
- Ի՞նչ լավ եք հիշում ձեր կարգացածք... իսկ յես, այ կկարգած և հետեւալ որը, թեկուզ սպանեք, վոչինչ չեմ հիշել...
- Վաղուց չե «Հիվա»-ի գրքուկից մի շատ հետաքրքիր և զվարձալի բան կարգացի, իսկ թե ինչ — մի խոսք չեմ հիշում:
- Սովորություն ե, — կարձ բացատրեց նիկոլայ Պետրովիչը:
- Զե, այս մեկը լավ ե... այս մյուսից... անունը ի՞նչպիս եր... Շոպեննառեր... — ժպտալով ասում եր Մատվեյ Յեկորովիչը: — Դուրս և գալիս, վոր ամեն նոր բան գառնում է հին:
- Յեղ ընդհակառակը, վորովհեան մի բանաստեղծ ասել ե. «այս, գոյության իմաստությունը տնտեսող ե, — նրա մեջ ամեն նոր բան հյուսվում է հնից»:
- Թիու, ստանան տանի: Այդ ինչ բան ե, կարծես թե գրանցից եք հանում խոսքերը:
- Մատվեյ Յեկորովիչն ինքնագոհ ծիծաղում է, նրա կինը սիրալիր ժպտում է, իսկ նիկոլայ Պետրովիչը հպարտանում է իր մեջ և ուզում է ծածկել այդ, բայց չի հաջողվում:
- Ո՞վ և ասել այն առաջինը:
- Բարյատինակին, բանաստեղծ ե:
- Իսկ այն մինւուր:
- Նույնպես բանաստեղծ — Ֆոփանով:
- Կեցցեն, — քաջակերում եր բանաստեղծներին Մատվեյ Յեկորովիչը և գոհ ժպիտը դեմքին՝ մի տեսակ յեղանակով կրկնում եր յերկոտողը:
- Զանձրությը կարծես խաղ և անում նրանց հետ, մի բոպե ազատում է նրանց իր գրկից և նորից պինդ գրկում ե: Այն ժամանակ նրանք զարձալ լուսում են՝ հով տարով իրանց, վորակեսի ազատվեն շողից, վոր սաստկանում և թեց խմելուց:

Տափաստանում միայն արևն է:

- Հա, յես խոսում եմ Արինայի մասին, — մտաքերում է Մատվեյ Յեկորովիչը: — Տարորինակ կին ե. նայում եմ նրան և դարձանում եմ: Կարծես նրան հարված և հասել, վոչ ծիծաղում ե, վոչ յերգում. չխոսկան ե... կարծես կոճղ լինի: Այնինչ նա շատ բավ և աշխատում ե, գիտեք, այնպես և նայում կելային, այնպես ուշագիր և վեպի յերեխան...
- Նա խոսում է կամաց, չուզենալով, վոր Արինան լսե իր խոսքերը: Նա զիտե, վոր ծառային գովել չի կարելի, յեթե չես ուզում, վոր յերես առնի:
- Կինն ընդհատում է նրան՝ խորհրդավոր կերպով զժգոհելով:
- Լավ, թող տուր նրան... դու նրա մասին ամեն բան չգիտես:
- Любви раба,
Я так слаба
В борьбе с тобой,
О. демон мой.—
- կամացուկ և յեղանակով ասում է նիկոլայ Պետրովիչը՝ զգալով չափ տալով սեղանի վրա: Նա ժպտում է:
- Ի՞նչ, ի՞նչ: Նա... զե՞ն, թողեք, յերկուսդ ել սուս եք ասում:
- Ու Մատվեյ Յեկորովիչը քահ-քահ ծիծաղում է: Նրա արտերը դոզդողում են, ու ճակատից արագ հոսում են քրտնքի կաթիները:
- Սա բոլորովին ել ծիծաղաշարժ բան չի, — կանգնեցնում է նրան կինը: — Նախ և առաջ յերեխան միշտ նրա ձեռին ե, յերկորդ, տեսնում ես, ինչ հաց ե: Համ թթվելի, հոմ ալրվել... Ինչու:
- Հա, հացն իսկապես այն չե... հարկավոր և նրան նկատողություն անել: Բայց, ասոված վկա, յես այդ չելի սպասում: Այ, գրողը տանի: Իսկ մինւուր, մյուսն ով ե, լուկան: — Յես նրան իրայտառակ կանեմ, վուշ կենդանի: — Թե Յագողկան ե: Ա-ա, թրաշած պոունդ:
- Գոմզովն ե... — կարձ ասում է նիկոլայ Պետրովիչը:
- Զե-չե: Ազդպիսի ծանրաբարո մարդ: Ոհու: Եթ, չեք հնարում, հը:
- Մատվեյ Յեկորովիչին շատ և հետաքրքրում այս չափազանց ծիծաղելի պատմությունը: Նա մեկ ծիծաղում է ջրակալած աչքերով, մեկ ել լուրջ ասում ե, վոր անհրաժեշտ և սիրահարներին

իսկամ նկատողություն անել, հետո պատկերացնում և նրանց մեջ տեղի ունեցող քնքուշ խոսակցությունները և նորից քահարան ծիծաղում եւ:

